

United to the second seco

۹ԱՇՏՕՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ 42. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ


1992	Β ուլիս - Οգոստոս	Թիւ	7-8
1992	July - August	No.	7 - 8



1	0	1		6	6
	U	L		U	0

A MONTHLY OF RELIGION LITERATURE AND PHILOLOGY OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



St. James Press, Jerusalem

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



PATRIARCHE SUPREME CATHOLICOS DE TOUS LES ARMENIENS

19

U. 5gdpudple

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

N

นบรงบอง 203 กล 203 กมาธร ร. ร. 402950 น.- 6 100025 ՈՒՂՂՈՒԱԵ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ ԵՐԵՒԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՑՈՅՑԻՑ 17 3Nh LhU 1992

, Stp Աυωπιωδ ρωρβαπιβ πι πηπρմωδ, մի տանիր զմեզ ի փորձուβիւն, wil white alta h impt:

ζωρωαωտ αωιωկύեր ζωյկωαρωύ σեր աααμ,

2qni bu, np sapnuwywu Upgwhnid umbadniwo wnwibi napapawywu ωյα ορορήν, Դուք, ի Հայաստան և ի υփիւոս աշխարքի, սպասում էք մի մխիթարական խօսք լսել Սուրբ Էջմիածնից։

Անաւասիկ, ես պատրաստ են այդ պարտքը կատարելու, սակայն ինձ Տարց եմ տալիս՝ ինչպէ՞ս մխիթարեմ ես ձեզ, երբ ինքս կարիք ունեմ Նորաստեղծ անկախ պետուβեան կեանքի Տորիզոնի վրայ, տեսնելու Տամար ուղիղ Ծանապարհը դէպի փրկութիւն։

Հայ ժողովրդի դարաւոր վշտի երգիչ՝ Աւետիս Անարոնեանը պիտի ωυξη ωιυοη էι ,, Վերստին կանգնած άλρ στη σητημητή σωύμρωτη σωίωտագրի առաջ, Ծակատ առ Ծակատ,,:

Սակայն այս պահին, նախ իմ հոգևոր պարտականուβիւնն եմ համարում իմ աղօխքը առաքել դէպի երկինք, Արցախում և Հայաստանի սահմանամերծ 2pջաններում զոհուած ազատամարտիկների հոգիների համար, որոնք մի անգամ ևυ փառաւորեցին մեր ազգի պատմութիւնը իրենց հեղած արեամբ, ազատուխեան nι արդարուβեան գոհասեղանի առաջ։ Սրանք ՆախրՆտրեցին ազատ մեռնել, քան ստրուկ ապրել։

λερև ερիυտոύδωύδρ, σδύε επίπρο επτωσυτο ερέ, πο δύωρε կետոնեից վետոն մրտոն, բնուն, անգարարալով փաստան առաղիչ։

Դաւնեան աքեղային, որ երկու տարի առաջ իր իսկ ցանկունեամք հոգևոր ծառայութեան կոչուեց Հայաստանի սահմանամերծ մի շրջանում և ազատամարտիկներին Snąbutu մխիβարելու առխիւ, ինքը ևս գոsուեց ու βωղուեց υ. ຈωງ μων ξη վων εη σημεωνωμων αξηρασωνωνων στζ: σηε ττα των ωνή nnւմբի պայβիւնից պատաn-պատաn եղած մարմինը յանձնւում էր sողին, նրա **Տայրը՝ պարթևա**նասակ քաջասիրտ մի նայ գիւղացի, թա**ց**ականլեց՝ ,,4նա nr ų hu, ຊີນພ໌, ເປັ ຫຍາ hg zwpn ເມີນພ4 hp pn ແພງ pwpp,;;

digitised by A.R.A.R.@

ՍԻՈՆ

1992 Յուլիս - Օգոստոս

ου չգիտեմ և ըր և ինչպէ ս կը վերջանայ Արցախեան Տերոսամարտը, սակայն ինձ համար մի իրողուԹիւն ստոյգ է, որ յանուն ազատուԹեան զոհուած մեր հողովրդի զաւակների հերոսական սխրանքը, աշխարհի պատմուԹեան ժայոի վրայ «նջնջելի տառերով արձանագրուած պիտի մնայ, երկու հազար հինգ հարիւր տարի արջ Թերմոպի է։ էսի հերոսների ծանոԹ արձանագրուԹեան կողքին, Հելլաղայում։

Lnju և խունկ և οրջυուβիւն նրանց բոլորի անմոռաց յիշատակին:

Νυδ Ϛամար հոգեկան մխիԹարուԹիւն է Տաստատել, Թէ այս օրերին, մեր Մայր Եկեղեցու հոգևորականներից շատերը, Վահան աբեղայի անձնազոհուԹեան ոգով աոգորուած, իրենց հոգևոր հայրենասիրական պարտքն են կատարում Թէ Արցախի բարժունքներում, Թէ Հայաստանի սահմանամերձ վտանգուած շրջաններում և Թէ όրկրաշարժի աղէտեալ գօտում։

Այսօր իմ խօսքը ուզում եմ ուղղել Նաև Հայաստանի ու Արցախի մեր ողջ ժողովրդին, որ կեանքի ծանրածանր պայմաններում, նրանք հոգու աննման տոկունուβեամը ու համբերատարութեամբ իրենց խաչն են տանում անտրտունջ՝ ԳողգոԹայի նախապարհով հասնելու յոյսով յարութեան յաղթանակին։

βωραωύε և ορίυπιβριύ ετα ωρρωυρρω ίωωρω ρύ σπηπίπιρη:

Ομηθιμύδη στο, ου δρωιμροισ ου δάσ εωζοιθμιύς οιύδυως, αυόδιοι ¹ ψορχμύ ωσμούδορμύ σωύωιωύς, οι σμωσύ Προωψή στο σοσσαστισης, ως ¹ ψορχμύ ωσμούδορμύ σωσωυύς, μωύανο δύ μαωύανδηση σημ μωσοιθμιώνδη ¹ μως: στο δως το τημορίας τη τηματικής ¹ μυσαμός το τηματικός ¹ μυσαμός το τηματικός ¹ μυσαμός

digitised by A.R.A.R.@

nι zwpniuwlinid է hzbnn duwi ng βξ ontugh nide, wji nidh ontuge, wiw ρωψωσηρης υσωδηφής ωιο ήρηση εβρινύσην δυ, πρηνε ήνχωτο φήστε, σλωστο քննարկման ու վերլուծման առարկան են հանդիսանում մեր Հանրապետունեան նախա. գանի, մեր խորնրդարանի ու մեր կառավարունեան, որոնք վստան եմ, նէ ամէն **ՏՆարաւոր միջոցառում**ներով ու <mark>Տամերա</mark>շխ գործելակերպով կը յաջողեցնեն ապանովել մեր նայրենի ժողովրդի և արցախանայուխեան անվտանգութիւնը։

νουιπιό է συρ ζωυρωщυνπιθυων υωφωαωςh, συρ μωπωψωρπιθυων, συρ խորհրդարանի և կուսակցութիւնների երբեմն սխալ կամ շփոթ կողմնորոշումների մասին. բայց եկէք արդար լինենք խոստովանելու Թէ՝ այն ներքին ու մանաւանդ արտաքին ծանր պայմաններում, որի մէջ գտնւում են՝ մեր Հանրապետութիւնը և արցախեան աշխարհը, երբ գրենէ ամէն օր կանգնած են նրանք յարափոփոխ, աննախատեսելի ու իրարամերժ կացու խիւնների և իրադարձու Թիւնների հորձանքի մէջ, դժուաը է Տաւատալ, խէ որևէ կառավարուխիւն կամ խորհրդարան կը կարողա-Նային՝ ամէն կողմից խոցուած մեր երկիրը ղեկավարել առանց երքեմն սխալուելու **υμωιύե**ρ b∥ξ կատարուել bù, ὑρωύρ կարող bù υρρωαρուել, զի միշտ կարելի է՝ այսօր աւելի ուղիղ մտածել քան երեկ։

Φηβηρίητωδ ωιο պωισωύντρητο γρωσωιωίων τ, ηρ στη ατοπωίων ήγρω**υու**Թիւ**ն**ները, խորհրդարանը և քաղաքական կուսակցուԹիւնները՝ իրենց մտածելու և զործելու ուժերը կենտրոնացնէին հիմնական հարցերի լուծման վրայ, *ինչպիսի*ք են՝ անվտանգ պանպանումն ու ամրապնդումը մեր անկախ պետականու^{թեա}, ωρηωρ մի լուծում գտնելը Արցախեան դատի ու դուրսքերումը մեր հայրենի ժողովրդի տնտեսական այս անտանելի իրավինակից։ Նոր ցնցումների՝ մեր ժողովուրդը այլևս չի կարող տոկալ:

Տագնապալի պահերին հին հռոմէացիք պատգամում էին՝ ,,Հայրենիքի φρίηιβριύρ αθρωαηjύ ορξύρυ է,,:

Աստուծոյ և ժողովրդի առաջ պատասխանատու՝ քոլոր մեր քաղաքական nı ^sաυարակական գործիլներին, sայրական sրաւէր եմ կարդում ղեկավարուել այս հրամայականով, միևնոյն ազգի հարազատ զաւակները լինելու գիտակցուβαωσε, υσρεύωωτο ωνωτρί ομωτυμυτρίται, ανωτρί συμορωπάριο, αυσυήματο. **μωύ ορիύωμωυուβ**եωυ գործըυβωցով, առաջυորդուած մեր ազգայի**υ պետուβ**եωυ abnwanju zwibpnd:

ՊատմուԹեան ընխացքում, գրեԹէ քոլոր պետուԹիւնների, կայսրուβիւՆՆերի կործանման պատճառները եղել են առաւելապէս Ներքին պառակտում-

ՍԻՈՆ

1992 Bnilhu - Oqnumnu

νόρς, νόρρην ζωμωσωρωπιθριννόρν πι μουωρπύωψησο σηπισυόρς: 3ηγούρ 3ημπινή γρόηξυ μουρόρς, , Աσουμύ βωαμιπρηιβριν ρωσωνόως σωνόυ μις αιόρη և ωσούωσυ ρωημε μωσ ωπιυ ρωσωνόως σωνόυ μις πς μωσσι, (σωμβ. δκ. 25), ωσομυρύς, , ηνεύ ής στι ρωσωνημό ωσις βωαμιπρηιφιν ωιόριπισι, μου ήρου ήρ στι ρωσωνημό ωσις μωσ ωπιυ μωναπιύ ποισ,:

Այս ԾշմարտուԹիւնը անշուշտ չի հակադրւում ժողովրդավարական բազմակուսակցական պետուԹեան կառոյցի գործընԹացին, այլ շեշտում է, որ այդ կառոյցը ինքն իր մէջ քաժանուելու դէպքում է աւերւում։

Uhpbihubp ປbp, չէϼ ບໍ່ປຸ່ພຫກະປ Թէ ինչքան այժປէական և ինչքան ուսանելի են հնչում այս սրքազան յորդորները մեզ քոլորիս համար, մեր խողվայոյց այս ժամանակներում։

Νσ μουρը վերջացնելուց առաջ, ցանկանում եմ խոստովանել, որ իմ մտաձումից բոլորովին Տեռու է՝ միջամուխ լինել բաղաբական միջկուսակցական վեներին, որոնք բնական երևոյններ են ժողովրդավարական իրաւակարգ որդեգրած երկրներում, որով հետև համոզուած եմ, նէ վերջին խօսքը պատկանում գրած երկրներում, որով հետև համոզուած եմ, նէ վերջին խօսքը պատկանում գրած երկրներում, որով հետև համոզուած եմ, ներ ազգային Առաքելական Եկեղեցին է մեր ժողովրդին։ Բոլոր պարագաներում, մեր ազգային Առաքելական Եկեղեցին ին Մայր Անոո Սուրբ էջմիածնով, վստահաբար նաև Մեծի Տանն Կիլիկիոյ հանոդիկոսական Անոռով և Երուսաղեմի ու և. Պոլսի պատրիարքական Անոոնեով, կը մնայ միշտ մեր Նորահրաշ անկախ Հանրապետունեան և ազատատենչ ժողովրդի կողքին, միշտ Նրանց մխինարող, միշտ նրանց զօրավիգ, միշտ նրանց իր օրչնուններնը և Սուրբ Հոգու շնորհները բաշխող։

, Այսու հետև եղբարք, ողջ լերուք, հաստատուն կացէք՝ մխիթարեցաուք, միաբան լերուք, խաղաղութիւն արարէք և Աստուած խաղաղութեան և սիրոյ եղիցի ընդ ծեզ,, (Բ. Կորնթ. ԺԲ. 11): Ամէն:

นแตก เกินกษา แบบชบบริษ այգեն Ա 4Pg4ull Jun digitised by A.R.A.R.@

203118

ԿՐՕՆԱԿԱՆ

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՂ ՏԵՍԻԼՔ

Սարկաւագութեան պատրաստուող ուսանողներու խումբին հետ, երբ նկատի կ՝առնէինք Քրիստոսի աստուածութեան հարցը, հաստատեցինք որ այդ մասին կասկած չկայ։ Փաստերը շատ են։ Բացի այն փաստերէն որ Աւետարանին մէջ բազմիցս Յիսուս ինք իր մասին կը հաւաստէ, երբ կ՝ըսէ.

"Ես Եւ Հայր իմ մի Եմք" (Յովհ. Ժ 30)

"Զի գիտասջիք հթէ Հայր յիս է հւ հս ի Հայր" (Յովհ. Ժ 38).

Կայ փաստը որ հրհանհրն անգամ այդպես լսհցին Քրիստոսի բհրնէն, հւ ամբաստանհցին զինքը որ «զԱստուած իր Հայրը կը կոչէ, եւ ինքզինքը հաւասար կը նկատէ Աստուծոյ» (Յովհ. Ե 18)։

Եւ Քահանայապետին առջեւ դատուելու ժամանակ, քահանայապետը իր կատաղութեանը մէջ զայրոյթով կ՝ըսէ Քրիստոսին. "Կ՝Երդմնեցնեմ քեզ կենդանի Աստուծոյ անունով, որ ըսես մեզի թէ՝ դո՞ւն ես Քրիստոսը, Որդի Աստուծոյ" (Մտթ. ԻՋ 53):

Եւ Քրիստոսի հանդարտ Եւ անխռով պատասխանն էր․ "Դուն ըսիր թէ Ես Եմ" (Մարկոս ԺԴ 62)։

Այս խօսքին վրայ զինք կը դատապարտեն, եւ Պիղատոսի առջեւ կ՝ամբաստանեն որ "ինքզինքը Որդի Աստու– ծոյ յայտարարեց" (Յովհ․ ԺԹ 7)։

Բայց ունինք տակաւին փաստերը մեր սրբազան Հայրերուն վկայութեանց եւ աւանդութեանց։ Նաեւ փաստերը Չորս Աւետարանիչներուն բուն նպատակին՝ որ էր յայտարարել՝ թէ "ի սկզբանէ էր Բանն. եւ բանն էր առ Աստուած, եւ Աստու՛ած էր՝ Բանն։» (Ուշադի՛ր՝ այս վերջին շեշտին, որուն իմաստն է շեշտել թէ <u>բանը, խօսքը,</u> Քրիստոսը, ինքնին Աստուա'ծ է։ Յովի. Ա 1-2)։ Բայց մինչեւ իսկ Յիսուսի աշակերտները իրարուհետ վէճի մէջէին թէ ի՞նք է Քրիստոսը, Մեսիան, եթէ ոչ ուրիշ մէկու մը պէտք է սպասեն։

Եւ Յիսուս ուղղակի հարցումը կը դնէ անոնց առջեւ. "ժողովուրդը ո՞վ կը կարծէ թէ ես եմ։"

Պատասխան. "Ոմանք կը կարծեն որ Յովհաննէս Մկրտիչն ես։ Ուրիշներ՝ թէ Եղիա Մարգարէն ես, երկինքէն իչած։ Ուրիշներ՝ թէ մարգարէներէն մէկն ես։"

Եւ Յիսուս կ'աւելցնէ. "Բայց դո՞ւք ո՛վ կը կարծէք թէ ես եմ։"

Պետրոս՝ կ՝երեւի միշտ համարձակ եւ միշտ ըսելիք մը գտնող, յայտարարեց. "Դուն ես Քրիստոսը, Որդի Աստուծոյ։"

Ուսանողներուն հետ դասարանին մէջ,ա'յս պահուն էր որ երիտասարդներէն մէկը հարցուց. "Բայց Պետրոս Առաքեպ այդ խօսքը Յիսուսի այլակերպութեան տեսիլքէն առա՞ջ էր որ ըսաւ, թէ այլակերպութեան դէպքէն յետոյ։"

Բայց ի՞նչ կապ ունին այս **Երկուքը** իրարու հետ։

Անշուշտ որ կապ մը ունին։ Եւ սութբ գրական մեկնիչներուն համար կարետր կրնայ համարուիլ այդ։

Տարբերութիւն չըներ թէ այլակերպութեանդէպքէնառա՞ջթէյետոյ ըսաւ։ Կարեւորը ինքնին այդ յայտարարութի՛ւնն է։

Որովհետեւ նոյն հարցերը կան Այլակերպութեան տեսիլքի մասին։ Այդպիսի դէպք մը պատահա՞ծ է թէ ոչ։ Եթէ պատահած է, Քրիստոսի յարութենէն առա՞ջ պատահած է. եթէ ոչ Քրիստոսի յարութենէն յետոյ՝ կարգ մը պատահած տեսիլքներէն մէկն է։

2. Ասոր ալ պատասխանը նոյնն է։ Ա. Երբեք տարբերութիւն չըներ թէ երբ պատահած է։ Կարեւորը այն է որ Յիսուսի A.R.A.R.@

digitised by

1992 Bnilhu - Ognumnu

աշակերտները Քրիստոսի պայծաոակերպութեան, այլակերպութեան, եւ այդ տեսիլքին փորձառութիւնը ունեցած են։ Եւ այդ տեսիլքը, այդ փորձաութիւնը, չեն մոռցած։ Այլ փոխանցած

ութիւնը, չու հն դարէ դար, սերունդէ սերունդ։ Պետրոս Առաքեալ այդ տեսիլքին մասին պատմած է Մարկոս Աւետարանիչին

որ Առաջին Աւ**Ետարան գրողն է։ Ամենէն** ամփոփը՝ միայն տասնըվեց գլուխներէ բաղկացած։

իսկ Մատթէոս Աւծտարանիչ առած է Մարկոսէն, Եւ 28 գլուխներէ բաղկացած իր Աւծտարանը ճոխացուցած է փաստարկութիւններովը Հրէական սովորութեանց Եւ Հին Կտակարանի օրէնքներուն։

Իսկ աւելի յետոյ՝ Ղուկաս Ամետարանիչօգտագործածէթէ/Մարկոս եւթէ/Մատթէոս Աւետարանիչներուն գրածները։

(Յովհաննէս Աւծտարանիչ չէ յիշատակած Այլակերպութեան տեսիլքը։)

Կարեւորը տեսիլք մը ունենալն է։ Որուն համար ուզես ամբողջ կեանքդ տալ։ Որմէ չես կրնար բաժնուիլ։ Որ չես ուզեր ուրիշ տեսակ կեանքի մը հետ փոխանակել։

Պետրոս Առաքեալ այդպիսի հոգեկան վիճակի մէջ էր, երբ լերան կատարին պայծառակերպուած տեսաւ Յիսուսը, իր երկու կողմերը բազմած Մովսէս եւ Եղիա մարգարէներով, որոնք իրեն ներշնչեցին եւ ըսել տուին հիացմունքով. "Հրաշալի է այսպէս։ Այստեղ մնանք տեւապէս։"

Ամեն մարդ կրնայ իր կեանքին մէջ ունենալ այսպիսի տեսիլքներ, ուր ինքզինքին համար կ'ըսէ. "Ես այսպիսի' կեանք մը կ'ուզեմ ապրիլ։ Հրաշալի' է։" Եւ իր կեանքին բոլոր նեղութիւններուն, զրկանքներուն, տաղտուկներուն, չարչարանքներուն հակաոակ, եւ ընթացքին, այդ տեսիլքին կը փերադառնայ։ Անով կը զօրանայ։ Եւ իր կեանքը կը հարստացնէ նոր փորձա– ռութիւններով։

Այսպիսի անձ մը հղած է Պօղոս Առաքեալ։

Գործք Առաքելոցի 26րդ Գլուխին մէջ, Պօղոս Առաքեալի դատավարութեան շատ տպաւորիչ մէկ տեսարանը կայ։

Պօղոս Առաքbալ ամբաստանուած է հր**հանհրուն կողմէ, որպէս Քրիստոսի** յարութիւնը քարոզող, զայն իբրհւ Աստուած պաշտող։

Եւ Կեսարիա քաղաքին մէջ (որ այսօրուան մեր գիտցած Սեզարիա քաղաքն է աւերակեալ), Փեստոս Հռովմայեցի կառավարիչին առջեւ դատուելու ղրկուած է։ Ներկայ է նաեւ Հրէաստանի թագաւոր Ակրիպպասը, իր տիկնոջ հետ։

Եւ Պօղոս Առաքեալ իր անձին պաշտպանողականը կը ներկայացնէ, պատմելով Ակրիպպասին իր կեանքին պատմութիւնը։ Թէ ինչպէս՝ ինք իրրեւ հաւատարիմ եւ նախանձայոյզ հրեայ, հալածած է քրիստոնեաները, բանտարկել տուած, եւ շատերուն մահուան պատճառ եղած է։

Եւ սակայն կը պատմէ նաեւ այն տեսիլքի մասին, որ ինք ունեցած եւ տեսած է Դամասկոսի ճամբուն վրայ, ուր Յիսուս իրեն կը յայտնուի, կէսօրուան արեւի լուսաւորութեան մէջ, աւելի փառաւոր լուսաւորութեան մը մէջէն, եւ որուն ձայնը կը լսէ, որ կ'ըսէ. "Սաւուղ, Սաւուղ, ինչո՞ւ կը հալածես զիս։ Ի զուր է քեզ, ագացի զարնել խթանին դէմ։"

Եւ Պօղոս Առաքեալ կը յայտարարէ որ՝ "այս երկնային տեսիլքին է որ ինք հաւատարիմ մնացեր է։" Եւ ոչ մէկ սխալ եւ յանցանք չէ գործած, ո՛չ հրեաներուն դէմ, ո՛չ օրէնքին դէմ եւ ոչ ալ կառավարութեան ղէմ։

հավարություն դերու Պօդոս Առաքեալ իր Եւ արդարեւ Պօդոս Առաքեալ իր կեանքին բոլոր նեղութիւններուն, բանտարկութիւններուն, չարչարանքներուն ընթացքին, միշտ այդ տեսիլքին կ'անդրադառնար, անով կը զօրանար։

Մարդկութեան պատմութեան, եւ ամէն մէկ ազգի պատմութեան մէջ երկար է շարանը տեսիլք ունեցող, իտէալ ունեցող, իր կեանքը ազնուական նպատակի մը եւ ծառայութեան մը նուիրած մարդերուն։

Գիտնականը իր տեսիլքը ունի, ինչպէս ամէն մէկ արուեստագէտը իր ասպարէզին մէջ – նկարիչը, երաժիշտը, ճարտարապետը, քանդակագործը, բանաստեղծն ու գրագէտը եւ այլ ասպարէզներու նուիրեալները։

Նոյնպէս տեսիլքի մարդ է ով որ <u>հայրենասէր</u> է, <u>ընտանեսէր</u> է, <u>մարդասէր</u> է, եւ որեւէ մէկ անձ որ որեւէ մէկ մարդկային ծառայութեան կը նուիրէ իր կեանքը։ Եւ հարուստ կը զգայ այդ ծառայութիւնը կատարած ըլլալուն համար։

Sbuhif de np կe dat dwpae hp wdpnag կbwGfe, utpe, nczwapncphiGe, կwpnaniphiGGbpe Gnihpbini wja obuhifhG hpwanpodwG: Հակառակ pninp obuwyh GbanipbwGg bi apywGfGbpni:

Այդպիսի կեանք մը՝ պիտի պայծառակերպե մարդը, որեւէ մէկ ասպարէզի մէջ, զինքը օրինակ դարձնելով ուրիշներուն, որպէս զի միասին նուիրուին նոյն տեսիլքին իրագործման։

Ի՞նչ դժբախտ են տեսիլք չունեցող մարդիկ։ Որոնք չեն գիտեր ինչո՞ւ համար կ՚ապրին։ Որոնք միայն զզուանք կը զգան կեանքին մէջ, եւ կամ որոնք միայն զզուանք կը պատճառեն ուրիշներուն։

Տեսիլք չունեցող անձը կը խորտակուի, եւ կեանքի դժուարութիւններէն, նեղութիւններէն կ'ընկճուի։

Այս պատճառաւ մեր ցանկութիւնն է որ մեր ժառանգաւոր ուսանողները տեսիլք ունեցող անձեր դառնան։

Գիտնան Աստուծոյ տուած շնորհները զարգացնել, գործածել, որպէս զի երբ նուիրուին Քրիստոսի եկեղեցիին, մեր Ս. Աթոռին եւ մեր ազգին հոգեւոր աճումին ծառայութեան, կարենան այդ տեսիլքով առաջնորդուիլ, յաղթահարելով ամէն տեսակի զրկանքներ, եւ նեղութիւններ, որոնք իրենց կեանքին մաս պիտի կազմեն։

Եթէ իրենց շուրջը չեն կրնար այդպիսի տեսիլքի անձեր գտնել, պէտք է դառնան Աւետարանին եւ մեր ազգի պատմութեան, ուր պայծառակերպ եւ լուսաշող կը փայլին տեսիլք ունեցող հոգիները։

Անոնք մեզի պէս պարզ մարդեր եւ հոգիներ էին, գուցէ աւելի նեղութիւններով եւ յուսախաբութիւններով շրջապատուած։ Բայց չդաւաճանեցին իրենց տեսիլքին։ Եւ այժմ սուրբերն են մեր ժողովուրդին հաւատքին։

Տեսիլք ունենալու այս ցանկութիւնը, որոշել կարենալու կամքը՝ թէ "Ո՞ր տեսակի կեանք մը կ՝ուզեմ ապրիլ", ամէն մէկ անձին պարտականութիւնն է։ Եւ ո՛վ որ կը հետեւի այդ ձայնին, որ Աստուծմէ դրուած է մեզմէ ամէն մէկուն սրտին ու մտքին մէջ, ան գիտէ գաղտնիքը Աստուծոյ շնորհին, կեանքը իմաստաւորելուն, պայծառակերպող տեսիլքէ մը գերուելուն, առաջնորդուելուն, եւ զոր ոչ մէկ նենգաժէտ ուժ պիտի կարենայ խարբալել։

Եւ մեր ազգը պէտք ունի այդպիսի հոգիներուն, որոնք կարենան փայլիլ մեր ժողովուրդի զաւակներուն աչքին առջեւ։ Հոգիներ՝ որոնք իբրեւ օրինակ, իբրեւ տիպար, իբրեւ իտէալի ծառայող, եւ նուիրական նպատակներու համար զոհուտղ, տեսլապաշտ եւ քաջամարտիկ զինուորեալներ ներկայանան։

Ո'րքան հարուստ պիտի ըլլանք անհատապէս, եւ ո'րքան պիտի հարստացնենք հոգին մեր ազգին զաւակներուն, հակառակ անոնց ամբողչ աշխարհի մէջ ցրուածութեան, նօսրացումի վտանգներուն բացայայտ ենթակայութեան։

Այս տեսիլք ունենալու հոգին է որ Քրիստոս տուաւ իր աշակերտներուն։ Եւ անոնք զայն ընդունեցին։ Անոնք չէ

1992 Bnilhu - Oqnumnu

զղչացին։ Մինչեւ անգամ երբ կը խաչուէին, երբ կը խոշտանգուէին։ Այլ ընդհակաոակն, կ'ըսէին՝ "Այս մեր փառքը կը նկատենք։"Ծառայութեան փառքը։ Մարդոց օգտակար ըլլալու փառքը։

կ՝աղօթենք որ մեզմէ ամէն մէկը ունենայ այդ շնորհքը, ունենայ զգալու եւ տեսնելու զգայնութիւնը եւ աչքը, եւ չփախցնէ որեւէ պատեհութիւն եւ առիթ՝ տրուածը ընդունելու:

Չես գիտեր թէ Աստուած ե՞րբ, որո՞ւ միչոցաւ քեզի կը խօսի, քեզի կը մօտենայ, քեզի առիթ կու տայ հոգիիդ ուժերը հաւաքելու, հոգիիդ մութ ու մռայլ խորշերը լուսաւորելու։ Եւ թերեւս քու շուարանքիդ մէջ, քեզ իր ձեռքը երկարողին կը հարցնես՝ "n°ų ηրկեց fbq:" Եթէ պատասխանն ալ չես գիտեր, շնորհակալ պէտք է ըլլաս Աստուծոյ, ղրկուածին համար, տրուածին համար։ Եւ այն ատեն դուն պիտի դառնաս այն անձը, որ Աստուած ինք կ՝ուզէ որ ըլլաս, եւ քու ժողովուրդդ կ՝ուզէ որ դուն ըլլաս, եւ շատ հաւանաբար քու սրտիդ մէջ դուն ինքդ ալ կ՝ուզես ըլլալ, բայց կը սպասես ականջիդ փսփսացող ձայնին, քեզ ներշնչող շունչին, քեզ քաջալերող, քեզի սրտակից հոգիներու գորովանքին:

Այս հոգին Աստուած անպակաս ընէ մեր ազգին մէջ, եւ մենք գովենք ու փառաբանենք տուիչը իր տուածին համար, գոհունակութեամբ, շնորհակալութեամբ եւ երախտագիտութեամբ:

թ.Ա.Մ.

ԱՐԱՐ**ՉԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՐԳԵՒԻ ԱՆԱՂԱՐՏ** ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆԸ . . .

հնչպես յայտնի է, Աստուած արարչութհան պսակը հանդիսացող ^{մարդուն} տուած է իրաւունքը դառնալու ^{տեր}եւիշխաներկրի, աճելու եւ բազմանալու ^{այնտեղ} եւ ամենայն պատասխանա-^{տուու}թհամբ ալ շենացնելու այդ երկիրը, ^{'որպես} զի, այն բազմապիսի շնորհքները զոր ունինք, մեր շատերուն առիթ ըլլայ գոհութհան" (Բ. Կորնթ. Ա 11):

Այսքան յայտնին արդիօք մարդը կը իչէ[«] այսօր, երբ Հին Ուխտով այ՝ կնքուած ^{մարդու} եւ Աստուծոյ միջեւ, ջրհեղեղը ^{այիւս} մեզ չպիտի կործանէ. կ՝անդրադառնա[°]նք արդիօք այս սուրբ հչատակ-ուխտին։ Որով, <u>Էգոլոժի</u> կոչուած մեղքը իր կարգին, ուղղակիօրեն կամ ոչ, խախտուած չէ[«], եւ որով նոր ձեւի մահա"Ճառեա երկրի, եթէ խելամուտ արասցէ զքեզ" (Յոր ԺԲ. 8)

սփռումը առկայ չ[°]է այսօր կամ վաղը։ Եւ դեռ, այս տխուր իրականութեամբ ալ մենք վաղուայ մարդասպանը չե[°]նք՝ քիչ քիչ կատարուող ոճիր, երբ ինքնին ան ոչ միայն Հին Ուխտի մոռացումն ու զանցառումը կ'ենթադրէ, այլեւ մասնաւորապէս մեր նմանի նկատմամբ ցուցաբերուելիք սիրոյ եւ հոգատարութեան բացակայութիւն։ Ահա թէ ինչու համար մեր Տէրն Յիսուս Քրիստոս աշխարհ եկաւ եւ յիշեցուց մեզի ըսելով. "Եկայ որ կեանք ունենաք եւ առաւել եւս ունենաք":

Ահաւասիկ, ի դէմս այսպիսի հրամայական վիճակներու, ո^oրն է մեր Սուրբ Եկեղեցւոյ եւ անոր զաւակներուն կողմէ որդեգրուելիք կեցուածքը կամ մօտեցումը, եւ թէ ինչի մէջ կը կայանայ այժմէական եւ կենսական այս հարցի կրօնաբարոյական եւ մարդասիրական թելադրանքը: <u>էգոլոժի</u> յունարէն կը նշանակէ ուսմունք մեր տան, մեր շրջապատի, հայրենիքի, աշխարհի մասին։ Բազմանշանակ է այս խօսքը։ Աստուած, մարդ, բնութիւն կապի անթաժանելիութիւն ենթադրել բացի կը նշանակէ նաեւ հսկում կամ հաշուետուութիւն, որով՝ "տեսէք թէ ինչպիսի զգուշութեամբ պիտի ընթանաք. ոչ թէ ինչպէս անմիտներ, այլ ինչպէս իմաստուններ։ Անխելք մի ըլլաք, այլ իմացէք թէ ի՞նչ է Տիրոջ կամքը" (Եփես. Ե. 16):

ի մասնաւորի Հայոց Եկեղեցին եւ անոր հաւատացեալները միշտ ալ անտարբեր չեն եղած դէպի բնապահպանութիւն։ Նոյնիսկ Եթէ խաղաղութեան համար պայքար եղած է, դարձեալ նոյնն է, սա լրացումն է unushah: Lungp anjaa t Gubi պատմամշակութային յուշարձաններու փճացման պարագային։ Օրինակ, Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսը խօսելով այդ համընդհանուր ոչնչացման՝ "Օմնիսիում"ի մասին, 1988 թուականին Մոսկուայի "Ոթչիզնա" ամսագրի թղթակցին արտայայտած է իր սրտցաւ բողոքը Արեւմտեան Հայաստանի մէջ տեղի ունեցող մշակութային աղէտի մասին։ Յbտոյ ան կ՝աւելցներ ըսելով թէ եթէ պետութիւնը գիտնականներու հետ համագործակցութեան չդիմէ, ան կարող է մեզ դանդաղեցուած "Օմնիսիում"ի հասցնել։

Սակայն անցնինք <u>օգոնի</u> հարցին։ Երկիր մոլորակի այդ բարակ վահանը Եթէ շարունակուի այդպէս քայքայուիլ, այդ պիտի նշանակէր տուեալ շրջանի կենդանի կեանքի վերացումը։ Միշտ կրկնուած է թէ պարզ հարց չէ այս, սակայն լուրջ մտահոգութիւնը սկսած է այսօր գործ– նական քայլի վերածուիլ, որով շատերու հետ եւ ահա մեր Սուրբ Եկեղեցին այ իր աղօթքն ու ձայնը միացուցած է գիտնականներուն կամ համապատասխան շրջանակներուն կամ Մ. Ա. Կ.ի զգուշացումներուն։ Այդ պատճառով է որ այստեղ մենք պիտի մտաբերենք խրիմեան Հայրիկի դարասկիզրին անուղղակիօրէն արտայայտած նոյնիմաստ մտահոգութիւնները. ". . . ո՞վ գիտէ, դեռ քանի ժամանակ, քանի դարեր աշխարհ իւր uqqbpnd, dnnndpnnd whwh hbbbb աղիողորմ․ Երկրին մեծամեծ պետական ծովեր պիտի խռովեն․ այդ ալիքներ՝ կոհակներ պիտի հանեն․ այդ ինքնահնար հրաբուխներ. ինչպէս գրեցի, միշտ պիտի րորբոքին, շարժեն երկրագունդ, աշխարհ սասանեն, ջրով ու մոխրով ծածկեն ժողովուրդոց կbանք"։ Այստեղ գալիքի տագնապն է։

Աստուծոյ գործերով հիացողներ, իրաւունք չունին անտարբեր մնալու որեւէ տեսակի փճացման, աւերման կամ ոչնչացման ի տես։ Նմանները ամօթանքի արժանացած են նաեւ բանաստեղծին կողմէ։ Ան իր խօսքը ուղղելով մանաւանդ մահուան զէնք յօրինողներուն, կ'ըսէ"

> Ամաչէ՛ք՝ մաքուր, կանաչ տերեւից, Մեղուի մեղեդուց, Բեռնուած թեւից. Թոյները թափէք, Ջէնքերը դրէք, Մեր փոքրերի ու Ձեր որդոց համար Ծաղիկների խաղ, Ծիածանաշաղ Մեղրահիւթ բերէք,

> > (Մարօ Մարգարհան)

"Կարմիր Գիրք" կոչուածը բոլորին ծանօթ է։ Ի՞նչու ծնունդ առած պէտք էր ըլլար այն։ Իրաւացիօրէն․ այն որքան որ կը խօսի մարդու հոգատարութեան մասին,

նոյնքան ալ կը տագնապի նոյն այդ մարդու կողմէ ի գործ դրուած վայրագութիւններուն համար՝ սկսելով ծառ ու ծաղիկեն, սողուն - թռչունեն հասնելու համար մինչեւ նոյնիսկ պատմական յուշարձանները։ Տակաւին որքան կրնար մեծնալ այդ "Կարմիր Գիրք"ին ծաւալը, հթէ չրոնուէր չարին եւ յարագործին ձևռքը։ Օրինակ Քենիայի մէջ յկանխուհցա՞ն փիղերու անխնայ սպանդը, կամ նոյն բարհհոգութեան արդիւնքը չ՞է արդեօք Լուսաքայի մէջ։ Զամպիա սկսած են դարձեալ թազմանալ հազուագիւտ ոնգեղջիւները․ կամ նոյնինքն Արեւմտեան Հայաստանի մէջ առաջքը չ'առնուեցա՞ւ որոշ պատմական յուշարձաններու ոյնյացման, Եւ այլն։

Բնութիւն պաշտպանելու համար մեծ գիտելիքներ պէտք չեն, այլ ամէն բանէ առաջ խիղճը, հաւատքը, մարդասիրութիւնը և բարոյական միւս առաքինութիւնները։ իսկ մեզ՝ Քրիստոնեաներուս համար պէտք էանսալ Սուրբ Գրքի թելադրութիւններուն․ bթէ քաղուbցաւ ծաղիկ մը՝ Աստուծոյ գործին փառքին մասին պատմող, պէտք է մտածենք արդէն նորը տնկելու մասին։ նրբ կը դիտենք մեղուի աշխատանքը՝ եւ անոր մեզի յուշածը չենք որդեգրեր, ապա կը սկսի ծայր առնել վերահասու մեղքը, կա՛մ մեզի մատչելի չեն Սողոմոն իմաստունի ծաղիկէն դաս առնելու օրինակը, եւ կամ ալ հասու չենք մտքին Տիտըրոյի, որ կ'ըսէ. "Թիթեռի մէկ աչքն ու թեւն ալ բաւարար են անաստուած մը կործանելու համար։" Մեր նախնիք, նոյնիսկ թռչունի ձայնին մեջ սկսած են փնտռել Աստուծոյ խօսքը, եւ իրենք հանդիսացած հն իւրովսանն բնութիւնը զարդարողներ. շինած են գեղեցիկ վանքեր ու եկեղեցիներ ^{ել} զանոնք շրջապատած՝ առուներով, լիճերով եւ ծաղկաստաններով։ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Երբ կ'ըսէ թէ թըոչունները հանգուցեալներու պաշտպաններն են, թերահաւատութիւն չէ, այլ ազգի զաւակներու մէջ թռչնասիրութեան հետապնդումը, այլ խօսքով, զանոնք բնասէր դարձնելը։ Վեհափառ Վազգէն Ա. Կաթողիկոսը Շինարար Կաթողիկոս կոչուելով հանդերձ, արժանի է նաեւ կոչուելու բնասէր հայրապետ, ծառաստան ու ծաղկեստաններ անեցուցած ըլլալուն համար, նոյն այդ եկեղեցիներու կամ աղբիւր-կոթողներու շուրջը։

Այ՛ո, Եթէ Աստուած կամեցած է որ մենք երկրի վրայ բազմանանք, պէտք է եւ միւս գիտակցութիւնը թէ Երկինքէն ստացուածի վատնողը կամ փճացնողը չդառնանք։ Ո՛չ, մեր հրաւէրը հին Յունական պաշտամունքին վերադարձը չէ, երբ չաստուած <u>էնոսը</u> կը փնտռուէր միայն արտաքին ձեւերու մէջ, ուր սակայն խղճի, հաւատքի, ներքին քրիստոնէականի տարրը չկայ, այլ հրաւէր պաշտպանելու ի վերուստ տրուածը՝ պաշտպանելու կեանքը երկրի վրայ. "Ես եկայ որպէս զի կեանք ունենան – իրաւամբ միշտ կը յայտարարէր Քրիստոս – եւ առաւել եւս ունենան" (Յովհաննես Ժ. 10):

Խաղաղութեամբ եղած կեանքն ալ որ յիշուած էր, բնապահպանութեան հետ զուգորդւողն է, քանզի այս կամ այլ պարագային ալ, պահանջուածը մարդու վաղուայ լուսաւոր եւ ապահով կեանքի հարցն է, խաղաղութեամբ։ Ըստ Սուրբ Պօղոսի՝ " . . .մարմնի իշխանութեանը տակը չէք, այլ հոգիի · · ., Եթէ մէկը Քրիստոսի հոգին չունի, ան Անոր չի պատկանիր, իսկ հթէ Քրիստոս Ձեր մէջ է, ապա մարմինը մեռած է մեղքի համար եւ հոգին կենդանի է արդարութեան համար" (Հռոմ․ Ը 9-10)։ Յետոյ առաքեալը նաեւ կը զարմանայ, որ ոմանք՝ "իրենք իրենց իմաստունի տեղ կը դնեն եւ յիմարա– ցածներ են . . եւ անեղծ Աստուծոյ փառքը փոխեցին՝ նմանեցնելով զայն եղծելի պատկերին՝՝ (Հռոմ․ Ա 2-3)։ Թող

Աստուած մեզ հեռու պահէ այս վերջին կեանք-օրինակէն։

Իսկական բնապաշտները պէտք է նմանին գեղանկարիչներուն, քանզի երբ ծառ կը նկարեն, այդ նոյն պահուն անոնք կը զգան եւ կ՝ապրին այդ ծառին աճն ու վաղուայ առաւել ուռճացումն ու փարթամացումը, քանզի երկու դէպքերուն ալ, նկարիչ թէ բնասէր, իրենց գործին մէջ հոգի եւ կենդանութիւն կը դնեն։

ՄԵր ազգի պատմութեան մէջ իսկական բնասէր պէտք է համարուի նաեւ Մխիթար Գօշը, որ իր "Դատաստանագիրք"ին մէջ խստօրէն կը դատապարտէ բոլոր ծառ կտրողները եւ մեղաւորներուն կը պարտադրէ տնկել նորը, եւ եթէ սա պտուղ տուած չէ, դարձեալ կը ստիպէ որ երկրորդ անգամ տնկուի երկրորդ ծառը։ Հաւանաբար քիչերուն յայտնի է, որ Հայաստանի Խոսրովեան անտառը, Ազատ գետի ափին, մարդկային ձեռքով տընկուած, աճեցուած, եւ առ այսօր պահպանուած է նոյնանուն թագաւորի ի պատիւ։

Կարելի է հարց տալ՝ դեղին ձիւն գոյութիւն ունի՞։ Այ՛ո։ Եթէ մեր շրջապատին ջուրերը յաճախ անթափանցիկ են, որ պիտի նշանակէր մարդու կողմէ աղտոտուած, այդպէս ալ ձիւնի թունաւորումն է, շրջապատի անաստուած վերաբերմունքի պատճառով։ Եւ մարդիկ յաճախ ալ կը զարմանան եւ կը հարցնեն՝ "Աստուած ինչո՞ւ բոկերը ստեղծած է"։ Անոնք ստեղծուած են, պիտի պատասխանէինք մենք, որպէս զի բնութիւնն ու արարչագոր– ծութիւնը թերի չմնային։ Իսկ միւս կողմէն, այս կենդանին այսօր որքա՞ն մեծ օգտակակարութիւն ունի, ըսենք, նոյնինքն ջրասոյզին, չյիշելով տակաւին անոր միւս ծառայութիւնները։ Ուստի այդպէս չշտապենք քննադատութիւն կատարելու, այլ ինչպէս գեղանկարիչի օրինակի մէջ է, այսօրուայ մեր չհասկցածը հասկնանք

նաեւ արուեսգէտի զգացողութեամբ։ Ուստի յիշենք․

"Մարդիկ մի գեղեցիկ Եղնիկ են սպանել, Ո՞ւմ էր վնաս տուել. Երկիրն այս մարդկային, Ուզում են կործանել։ Հրաշալի Երկիր– Ո՞ւմ էր վնաս տուել"։

Բարին եւ չարը երկրի վրայ են։ Ուղղակի այդ մասին չ'ակնարկեր բանաստեղծը, սակայն անոր միտք -թելադրութունն միւսն է՝ Աստուածաշնչայինը մանաւանդ. "Յիշէ վերջը եւ dbnf dh anndbn" (Uhnuf t 39): Snniud է կեանք թէ մահ, աներեր պէտք է ընտրել pարիի gnighind հղած անմեղանյականը bւ այդ ժամանակ "Դուք Քրիստոսինն էք, իսկ Քրիստոս՝ Աստծունը՝՝ (Ա. Կորնթ. 21-23)։ Այս է իրաւ հաւատքի ընդգծումը, այս է իրաւ դաստիարակուածութիւնը մերօրեայ բնասիրութեան մէջ։ Եւ յետոյ՝ "Ով որ ունի անոր կը տրուի, իսկ ով որ snich, bi will with hasp and he hupdt թէ ունի, կը վերցուի ․ ․ ․" (Ղուկ. ԺԹ. 26)։

Ujumtu mjuop dbqh hudup ellmi բարեպաշտ եւ մնալ Աստուծոյ սիրոյ մէջ կը նշանակէ նաեւ բյլայ բնասէր եւ կենսասէր, արժանի՝ օրհնութեանը տակ Աստուծոյ ապրհյու հւ ապրհցնհյու, հւ արժանաւորապէս ըսխյու. "Ո՞ւր որ Երթամ, ով Տէր, դուն այնտեղ ես" (Սաղմ. Ճ Լ Ը 7-10)։ Այս հաւատքին պտուղը կը դառնայ մեր մաքուր կեանքը այս աշխարհի վրայ, օրհնութեանը տակ Աստուծոլ։ Եւ յայտնութեան տեսանողին հետ կարող կը լինենք ասելու. "Տեսայ նոր երկինք ու նոր երկիր, քանզի առաջին Երկինքն ու Երկիրը անցեր էին . . . տեսայ Սուրբ Քաղաքը՝ Նոր Երուսաղեմը, որ կ'իջներ Աստուծմե եւ երկինքէն՝ զարդարուած ու պատր^{աս-} տուած, ինչպես հարսը իր փեսային համար" (Ցայտնթ. ԻԱ 1-2)։

ՆԱՐԵԿ ԵՊՍ. ՇԱՔԱՐԵԱՆ

Քրիստոսի ծնունդէն շատ դարեր առաջ, Հրեայ ժողովուրդը ունեցած էր ակնկալութիւնը Մեսիայի մը գալստեան։ Դաւիթ սաղմոսերգու թագաւորն ու մարգարէները ըրած էին ակնարկութիւնը մարդկային ցեղի փրկիչին կամ ազատարարին։

Այս կարգի կանխագուշակութիւններեն դարեր առաջ, Աստուած ինքզինքը յայտնած էր արդեն Իսրայէլի ժողովուրդին, Սինա լերան վրայ, ու տուած անոնց Օրէնքի տախտակները կամ Տասնաբանեան, hn hoop wende ni hpw2f6bpndp hu6bit հտք Յակոբի որդինհրը Եգիպտոսի անարգ գերութենէն ու առաջնորդած զանոնք Աւնտնաց Երկիրը։ Աստուծոյ ընտրնալ ժողովուրդը եղած ըլլալու գիտակցութիւնը խոր արմատներ արձակած էր Հրեայ ժողովուրդի հոգերանութեան մէջ։ Ու Մեսիայի մը կամ ազատարարի up գալուստը կ'ըմբռնէին հոգեկանէ առաջ ու անկի աշխարհիկ իմաստով, այն օրէն ասդին մանաւանդ, ուր իրենց անկախութիւնը կորսնցուցած՝ գերի էին դարձած Հռովմէական մեծազօր կայսրութեան, որ իր դաժան լուծին տակ կը կեղեքեր զանոնք անխնայօրեն։

Ու "ի լրումն ժամանակաց" կը ծնէր աշխարհի Փրկիչը Բեթղեհէմի անշուք մաւրին մէջ, ոչինչով տարբերելով իր ազգակիցներեն, եթէ չհաշուենք քիչերու միայն ծանօթ հրաշազան այն երեւոյթները՝ որոնք իր ծննդեան գիշերին պատահեցան եւ քանի մը հովիւներ ու օտարազգի մոգեր միայն հանդիսատես եղան մանուկի ծննդեան առիթով պատահած անսովոր դէպքերուն, երեւցած նորանշան աստղին։ կանցնէին օրերն ու տարիները։ Մանուկը կ'աճէր ու կը մեծնար՝ "լի

'ԷՆՄ՝ ԱՅԼ ԼՆՈՒԼ" (ሆԱՏԹ․ Ե․ 17)

շնօրհօք եւ իմաստութեամբ", Նազարէթի համեստ ընտանիքին ծոցը, զարմացնելով միայն, երբեմն, ժողովարաններու կոկոզավիզ ռաբբիները։ Եւ այդպէս մինչեւ Մկրտութիւնը։ Այդ առիթով երկինքէն իջած իր Աստուծոյ Որդի ըլլալու վկայութեանը թերեւս ոչ ոք ունեցաւ ականատես, բացի զինք մկրտող մեծ սուրբէն։

Πι կ'անցներ Ցիսուս իր քարոզութիւններուն։ Մատթեոս Աւետարանիչ մեզի կը հաղորդե թե Իր առաջին քարոզը ան տուաւ բարձունքե մը։ Այդ քարոզը, "լերան քարոզ" անունով ծանօթ, կը գրաւե 5-7րդ գլուխները Մատթեոսի Աւետարանին։

Յիշեալ երկար քարոզի ամենէն յատկանշական համարը կը նկատենք Զ. գլխուն 17րդ համարը. "Ոչ եկի լուծանել զօրէնս այլ լնուլ"։ Յայտարարութիւն մը՝ որ մեծապէս պիտի ազդէր Հրեայ ժողովուրդին մինչ այդ ունեցած կրօնական ըմբռնումին եւ հասկացողութեան վրայ։ "Լնուլ" կը նշանակէ ամբողջացնել,

կատարելագործել, իր լրումին տանիլ։ Բան մը որ արդէն ամբողջ է պէտք չունի կատարելագործումի։ Եւ, բնականաբար, թերի է ու պակասաւոր ամէն ինչ՝ որ կը կարօտի սրբագրութեան կամ բարեշրջութեան։

Ա՛յս ճշմարտութիւնն էր որ կ'ըլլար "քար գայթակղութեան" Իսրայէլի ժողովուրդին համար։ Դժուար էր իրենց համար ըմբոնել Տիեզերքի տէր մը ու արարիչ մը՝ որ ինքզինքը մասնակիօրեն միայն կը յայտնէր ժողովուրդին, տալով անոր օրենք մը՝ որ ժամանակաւոր է, այսինքն ժամանակի թաւալումին հետ կարիքը կը ստանայ նորոգումի, լրացումի, վերասրբագրումի։ Ու սխալի մէջ չեն բոլոր անոնք՝ որոնք Հրեաներուն նոր կրօնքին հանդէպ սնուցած բացասական կեցուած– քին բանալին ու հիմնակէտը կ՚ընդունին ա՛յս յայտարարութեան մէջ։

Սակայն ճշմարտութիւնները, երբ մանաւանդ մարդկութեան ճակատագիրը տնօրինելու կամ յեղաշրջելու են կոչուած, մէկ անգամէն չէ կարհլի յայտնհյ մարդերուն, որքան այ անոնց հոգին յայն ըլլայ բացուած անոնց ընկայչութեան։ Աստուածային ճշմարտութիւնները կարելի է նմացնել արեւի ճառագայթներու, որոնք **հրբ իրենց ամբողջ ուժգնութ**եամբ կր հպին խաւարակալ աչքերուն՝ quuGnGf յստակատես դարձնելու փոխարէն կրնար կուրութեան տանիլ իրենց միահաղոյն թափանցումին պատճառած զօրութենէն։ Ու ճիշդ ինչպէս մանուկի մը մտքին չենք կրնար անմիջապէս մատուցանել թանձր գիտելիքները բարդ գիտութիւններու, այլ աստիճանաբար միայն ու որոշ ժամանակի մը տեւողութեամբ, նոյնպէս ալ Տէրը իր ճշմարտութիւնները, աւելի ճիշդ կատարեալ ու ճշմարիտ կրօնքը չէր կրնար մէկ անգամէն յայտնել հեթանոսական խաւարին մէջ տուայտող զանգուածներուն։ Ան պիտի նախ ինքզինքը յայտնէր ժողովուրդի մը, տար անոր որոշ օրէնքներ բարոյական վարքագիծ, եւ ապա, քիչ քիչ բանար անոնց ու անոնց միջոցաւ ու wünügult burf, hnahh wsfbpp pnjnp ժողովուրդներուն, նախ ղրկելով անոնց աստուածարհալ տեսանողներ, այսինքն՝ մարգարէներ, nı wubata bonfp' hp Միածին Որդին։

"Կատարհալ Աստուած մը չէր կրնար անկատար կրօնք մը ստհղծհլ". այդպէս կը մտածէր Հրհայ ժողովուրդը, ազգային կհանքի իր անձուկ ու սահմանափակ պարունակէն միայն դիտհլ փորձհլով հոգեւոր ճշմարտութիւննհրը։ Չկա՞ն այսօր ալ, իրհնց գձուձ ու հունաւոր հաշիւնհրէն

քրիստոնհայ կոչուած առաջնորդուած hudujüfübp, npnGf Աւհտարանով աշխարհին բերուած ճշմարտութիւնը միայն ու ամբողջապես իրենց վերապահելու, սեփականացնելու յոխորտ ու քրիստոնէական բարոյականին հիմնովին խորթու ներհակ կեցուածքը կը պարզեն, իրենց դաւանածէն դուրս ոչինչ ընդունելով իբրեւ իրաւացի եւ ուղղափառ։ Որոնք իրենց շուրջ Քրիստոսի պատգամած սիրոյն ու խաղաղութեան տարածիչները ըլլալու փոխարէն, խորշանք ու հակակրանք կր միայն, տապար զարնելով ստեղծեն քրիստոնէական եկեղեցիին n1 միասնականութ-հան։

Գիտնանք միշտ առաջնորդուիլ Ս. Հոգիի առաջնորդող լոյսովը, հասնելու համար լուսոյ ու ճշմարտութեան ակնաղբիւրին, այսինքն Աստուծոյ, որմէ հեռու ապրուած կեանք մը իր խափուսիկ հաճոյքներուն ետին կը ծածկէ անապահով ու շուար վիճակը մոլորած մարդուն։ Եսակեդրոն ու այլամերժ կեցուածք մր դիւրաւ կրնայ մեզ 2 m m 2bybglib] ճշմարտութեան լոյսէն ու արդարութեան ճանապարհէն։ Վասն զի ուրիշներու բոլորանուէը սպասին բացուած հոգիներն **են միայն որոնք կրնան ըլլալ ընկալուչներն** ու տարածիչները քրիստոնէութեան լոյսին։

ԳԷՈՐԳ Ս. ՃԻՆԻՎԻՋԵԱՆ

ԵՒ ՄԻՆՉ ԼԵՌԻՑ ԻՋՆՈՒՄ ԷԻՆ

«Երանի՜ իմաստուն մարդուն, որ իր Աստուածն է փնտրում, որդեա՜կ ուրիշ բան մի՛ փնտրիր՝ Ես կը լինեմ Քո վարձքը»

(Աստուածաշունչ)

... Իր հետ վերցնելով Պետրոսին, _{Յակորոսին} եւ Յովհաննէսին։ Յիսուս լեռ հյաւ եւ երբ աղօթքի էր կանգնած, նրա հրհսի տեսքը այլակերպուեց, եւ նրա զգեստը փոխուեց եւ փայլուն-սպիտակ դարձաւ։ Եւ ահա Երկու մարդիկ խօսում էին նրա հետ։ Նրանք Մովսէսն ու Եղիան thu, npnuf hunfnd bpbuuind' wouned thu նրա վախճանի մասին, որ տեղի պիտի ունենար Երուսաղէմում։ Իսկ Պետրոսը եւ նրա հետ գտնուողները քնի ծանրութեան տակ՝ արթնացան ու տեսան նրա փառքը be bulan umphymig, apalf lipu dow կանգնած էին։ Եւ Երբ դրանք նրանից հեռանում էին, Պետրոսը 'Յիսուսին ասաց. «Վարդապե՛տ, լաւ է, որ մենք այստեղ ենք. bpbf տաղաւար շինbնք, մէկը՝ fbq, մէկը՝ Մովսէսի եւ մէկը՝ Եղիայի համար»։ Եւ չէր humanin, pt has t wouning: Di php mju ասում էր, ամպ հկաւ, որ ասում էր՝ «Դա՛ էիմ ընտրեալ Որդին, լսեցէ՛ք դրան»։ Եւ մինչ խօսքի ձայնը դեռ գալիս էր, Յիսուս միայնակ գտնուեց. Եւ նրանք լսեցին ու այդ օրերին ոչ ոքի չպատմեցին իրենց տեսածներից եւ ոչ մի բան (Ղուկ․ ԺԹ 28-36):

Ո՞վքեր էին այս Երեքը, յատո՞ւկ էին արդեօք սրանք տասներկուսի մէջ։

Այո, այս Երեքը յատուկ փնտրողներն էին, յատուկ որոնողներն էին՝ ընտրեալ տասներկուսի մէջ։ Եւ նրանցից ոմանք որոնման մէջ էին արդէն, իրենց գիտակցական կեանքի ողջ տեւողութեան։ ^իրենց տեսածն ու լսածը չգոհացրեց իրենց։ Մարդ էին փնտրում, որ ճշմարտութեան մասին ոչ միայն խօսի, այլ լինէր ճշմարտութիւնը, մարդ որ, ոչ միայն խօսի լոյսի մասին այլ՝ լինէր լոյսը։ Անձ՝ որի մէջ տեսնէին լոյսը ինչպէս արեւի ճառագայթների մէջ։ Անձ, որ չլինէր սոսկ ցոլք, փայլ ու արձագանք. լինէր լոյս ու ինքնաբուխ ձայն։ Անձ, ում կեանքը լինէր գիրն ու բառը ճշմարտութեան։ Անձ, ում արարքները լինէին գրիչն ու մելանը կեանքի իմաստի։

Նրանցից ոմանք մօտեցել էին ճշմարտութեան այս ակնաբուխ լոյսին, բայց դեռամպ կար լոյսի եւ իրենց աչքերի միջեւ։

Հետեւել էին հրեղէն մարգարէի՝ Յովհաննէս Մկրտչին, գրաւուել էին նրա անձի ու խօսքի անդիմադրելի գրաւչութեամբ. բայց այդ բոլորը սոսկ նախաճաշակն էին ճշմարտութեան։ Պատրաստել էին իրենց մէջ որոնման սլաքը, եւ նմանւում էին կողմնացոյցի, որ մարդուս աչքերը կ'ուղղի միայն դէպի ճշմարտութիւն։

Առաջնորդ կենաց, ճանապարհ ճշմարտութեան, Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ առաջնորդեցեր Յովսեփայ յԵգիպտոս, Եւ Իսրայելացւոց ընդ ծովն Կարմիր, Եւ Մովսէսի ի լեառն Սինէական, Եւ ժողովրդեան յերկիր պարգեւացն, Եւ կղէովպասանցն ճանապարհակից եղեր յԵմմաւուս։ Աղաչեմ զքեզ Տէր, առաջնորդեա ինձ եւ եղթարց իմոց գնալ խաղաղութեամբ զառաջիկայ ընթացս. փրկեա' յերեւելի եւ յաներեւոյթ թը2նամւոյն, եւ թարի առաջնորդեա' ի դէմ ԵղԵալ ի տԵղին, զի դու Ես ճանապարհ Եւ ճշմարտութիւն Եւ կեանք մԵր, Եւ քԵզ փառք Եւ Երկրպագութիւն այժմ Եւ միշտ Եւ յաւիտեանս յաւիտենից:

...Գիշերային մթին յաջորդում էր Յովհաննէսեան այգաբացը, բայց իրենք սպասում էին արեւագալին։

Նրանցից ոմանք որոնման հոգին ունէին իրենց մէջ, մարդիկ էին, որոնք պատրաստ էին ճգնութեան, յանուն սեփական եւ համայն մարդկային ազգի։

Եւ եկաւ լուսոյ առաւօտը, եւ ծագեցրեց արդար արեգակը իրենց սրտի մէջ, լոյսը՝ Քրիստոս, որ հկաւ նրանց մէջ հանգչող, բայց տակաւին անմար կրակը վերստին արծարծելու եւ իր կոչովն ու շնչով բոցավառելու։ Գիտակցական, գործօն վիճակից դադարած, բայց որոնման հոգեկան ձգտումը նրանց մէջ, Քրիստոսի հրաշագործ նայուածքով ու զարթեցուցիչ խօսքի ուժով, վերստին կեանքի պիտի բերէր եւ այնպիսի մղումով լարէր նրանց կամքը, որ այլեւս պիտի թողէին նաեւ եւ ուռկան, հայր ու մայր, տուն եւ ինչք. գնալու համար ոսկեղէն սլաքի ուղղութեամբ՝ դէպի իրենց հոգիների առաջ բացուած **Երկնային բագաւորութիւն, դէպի Աստուած** ы նրա ձեռակերտ եղող աշխարհը, դէպի նրա պատկերը կրող մարդկութիւնը։

«Երբ Յիսուս ետ դարձաւ եւ տեսաւ նրանց, որ գալիս էին իր ետեւից, ասաց նրանց. «Ի՞նչ էք ուզում»։ Նրանք ասացին նրան. «Ռաբբի՛ (որ թարգմանւում է՝ վարդապետ), ո՞ւր է քո օթեւանը»։ Նա նրանց ասաց. «Եկէ՛ք եւ տեսէ՛ք»։

Սրանք այսպէս տիպար ունէին իրենց լինելութեան, կազմութեան առաջին հանգրուանին. եղել էին որոնողներ։ Առաքեալի կերպարին հարազատ ուրիշ յատկանիշներից մէկը, որպէս պսակում որոնման՝ գիւտի իւրացումն է, նրանով իր անձի ներթ-ափանցումը, նրանով իր ինքնահաստատումը։

Որոնողը առաքեալ լինելու համար պէտք է իմանայ աշակերտել, եւ մանաւանդ տոկալ, յարատեւել եւ խորանալ աշակերտութեան մէջ։ Գիւտը փնտրուած ճշմարտութեան եւ արժէքի՝ իր մէջ ունի փորձութիւն արագ եւ ինքնավախճան գոհացման, սին հպարտութեան, դրա ուրիշ անունն է՝ փառասիրութիւն։

Կանչուածներից ոմանք անմասն չմնացին այդ փորձութիւնից։ Ոմանք աթոռ, դիրք ու մեծութիւն փնտրեցին վարդապետի, ռաբբիի, մարգարէի, տեսուչի, կամ մեսիայի «դահլին» համարելով իրենք իրենց։ Բայց վերջում մնացին Յիսուսին միայն մօտիկ, բաժնեկից կեանքին, անձկութեանը, Gnu տագնապներին ու մանաւանդ, նրա հետ ապրելով ներթափանցուեցին նրա շնչով, իւրացրին նրա քարոզութեան այնքան յաճախ տարօրինակ թուող, սովորականից վեր երեւացող, ընթացիկին աններդաշնակ bղող bi bրբbմն նոյնիսկ ընդվզեցուցիչ նկատուող գաղափարները, սկզբունքները, uphuphujbugfn:

Բազում են կանչուածները, սակայն սակաւ են ընտրեալները, եւ ընտրեալները մնացին նրա հետ։ Որոնած ճշմարտութիւնը գտնելով չկանգնեցին։ Խորացան այդ ճշմարտութեան իմացումի մէջ, այն շաղախեցին իրենց խոր էութեան մէջ։ Քրիստոսին պատկանելու զգացումը վառ պահեցին իրենց մէջ։

«Արեգակն արդար, ճառագայթ օրհնեպ, լուսոյ կերպարան, փափաք անձկութեան, բարձրեալ անքնին, զօրեղ անպատում, բարւոյ բերկրութիւն, յուսոյ տեսութիւն, գովեալ երկնաւոր, թագաւոր փառաց, Քրիստոս արարիչ, խոստովանեալ կեանք:»

Գր. Նարեկացի (Բան ՂԵ - Ա)

1992 Bnilhu - Oqnumnu

Հետեւումը, սակայն, սահմանափակ ինքնահայեաց եւ ինքնարաւ հասկացոութիւն չեղաւ իրենց համար։ Աշակերտութիւնը միշտ կապուած եղաւ հոգեւոր վեհ զգացումով․ գտնուածը, ստացուածը, իւրացուածը ուրիշի հետ բաժանելու, կիսելու, շրջապատի մէջ տարածելու ձգտումն ու ջանքը, որով կը լուսապսակուի առաքեալի տիպարը։ Այդ երեքը՝ այն տասներկուսից էին, որ միլիոնի եւ միլիոնների մէջ աննշմարելի, աշխարհի մէջ անգայտ ներկայութիւն է՝ թիւի չափով։

Ի՞նչպէս յաջողեցին տասնեակ հազարներ եւ տասնեակներով ազգեր Քրիստոսի լոյսով պայծառացնել, այլակերպութեան դրոշմով կնքել, վերափոխել։ Թթխմորի փոքրիկ զանգուածը հսկայ տաշտի մէջ եղող ջրով, թանձր ալիւրը կը խմորի, պայմանով, որ ինքը միազանգուի խմորի հետ։ Ցորենի հատիկը հասկ կը դառնայ այն ժամանակ միայն, երբ հողի մէջ կ՝ընկնի եւ կը տարրանայ նրա հետ։

ԱՐՄԷՆ ԱԹԱՋԱՆԵԱՆ

A Reader's Comment - Are You Aware?

By Rosemary Aprizian

Ararat and Armenia are mentioned at least 4 times in the original English translation of the King James version of the Bible - Genesis 8:4, II Kings 19:37, Isaiah 37-38 and Jeremiah 51:27. (Cilicia is in the New Testament).

Are you aware that in modern versions of the Bible the word "Armenia" has cleverly disappeared--even though countries with lost civilizations are still included?

The modern Bible companies are: The New International (Zondervan Corp., 1415 Lake Drive SE, Grand Rapid, MI 49506), Revised Standard (American Bible Society, 1865 Broadway, NY, NY 10023), **The New King** James (Thomas Nelson Publishers, Nelson Place/Elm Hill, Nashville, TN 37214), Living Bible (Tyndale Publishers, 336 Gundersen Dr., Wheaton, III. 60187), etc. This last publisher not only eliminated "Armenia" but replaced it with the word "Turkey." There was no Turkey in Biblical times!

Anti-Christian forces are working harder today as deceit and greed are overtaking the world. Christianity is mocked, ndicuied and taunted in the media and elsewhere. All religions are not the same. One wonders what would happen if the "money mercenaries" tried the same tactics on other religions. The same "money mercenaries" who, disguised as historians, archaeologists, anthropologists, missionaries and good-will ambassadors etc., descended into the Middle East in the 1800's and coerced the Turks into slaughtering a million innocent Christian Armenians and Greeks off of their ancestral lands so that they could have access to it.

Everyone must read the brilliant book Armenia: Survival of A Nation by Christopher Walker to get a clearer picture of how each Western nation had its own agenda pertaining to "doing business" in this area. Especially important are pages 105-106 and 160 where two anti-Christian European culprits are named who influenced and stirred up the Turks. Times have changed only in that the "money mercenaries" have become greedier and weaponry has become more sophisticatedly deadly!

The original English translation of the King James version of the Bible is still the most accurate, has the most beautiful prose, and contains an aesthetic quality that the others lack. Talking about Bibles - you'd be surprised how many churches in the United States do not even have Bibles in their pews - not even the New Testament.

even the New Testamenta There should be an Armenia Watch Society

(as other nationalities have). Boston, Mass.

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՀԱՐՈԼՏԻ ՈՐԴԻՈՅՆ ՊԱՆԴԽՏՈՒԹԻՒՆԸ

- 21) Գիչերուան մէջ՝ զուարթ կ'լսուէին ձայներ, Պէլձիքական Մայրաքաղաքն էր խըմբած Քաջ ասպետներն իր ու Գեղուհիներն. Կ'չողային լոյսերն վրան պերձ կանանց, քաջաց. Կը տրոփէին բիւր սըրտեր ու յանկարծ ՝ ընչել ըսկըսաւ նըւագն հեշտասէր. Սէր կ'ծորէր, կ'առնէր ամեն մի նայուած Ամեն սիրտ ուրախ զերթ պըսակի յանգ, Սո՜ւս, լըսէ, խոր ձայն մը կ'ինչէ որպէս մահազանգ։
- 22) Չը լսեցիք ո՛չ, ան <ովին ձայնն էր, Կամ կառքին ձըռինչ քարերուն քըսուող. Թող պարն կանգ չառնէ, մնայ խինդն անարգել խինդ, պատանութիւն՝ երբ իրար գան թող Ցայգն անքուն անցնի. ժամերը թըռչող՝ Պարով բըռնեցէք։ Չայնը, չէ՞ք լըսեր, Կարծես ամպերն են արձագանգ տըւող, Աւելի մօտ, պարզ, աւել՝ մահաբեր։ Զէնք, դէպի զէնք, ան <րետանու ռազմի կանչն էր։</p>
- 23) Պատուհանի մխորջն, սրահին մէջ այդ պերձ, Պրունսվիքի պետն էր - ձակատագրուած։ Ան Առաջին լըսողն էր տօնականաց մէջ, Մարգարէի ունկամբ այդ ձայնը գուժկան, Ըսաւ "Մահը մօտ է". լըսողքն ժպտեցան։ Բայց սիրտն իր լաւ կը զգար ղօղանջն այդ անվերջ. Իր ≺օր կեանքին վերջն ալ գուժած էր ան, Գըրգռելով ոխ որ մահուամբ կ՝ըլլայ շէջ։ Ան դաշտ վազեց ՛ւ իր մահով բացաւ առաջին ռազմէջ։
- 24) Եւ ըսկսաւ իսկոյն չարժման եռ ու զեռ, Արցունք լըձացած, տագնապալի դող Գունաթափ այտեր որ, քիչ առաջ դեռ՝ Գովքն իրենց կ'ընէր դէմքերն կարմրաշող, Ընդ փութ բաժանում՝ սըրտերը մաշող, Պարման-գեղոփեաց խեղդիչ հառաչանք. Ո՛վ կըրնայ յուսալ որ այդ նայուածքներ՝ հրաշքով հանդիպին դեռ արեւուն տակ։ Ա՞հ այդ քաղցրը ցալցին եսքը հնչ տես է հ

ԱԴ այդ քաղցըր ցայգէն ետք ինչ սեւ այգեծագ։ (շարունակելի)

LORD BYRON Թրգմն. Մուրատ Մանուկեան

digitised by A.R.A.R.@

206

ՉԱՐ ՄԱՐԴՈՒ ԼԵԶՈՒՆ

Տերեւի պէս չորանայ չար մարդու լեզուն, Երբեք ինձ չի մոռանայ չար մարդու լեզուն։

Ես նստել եմ մեն - մենակ ու միտք եմ անում, ԱՂս, ե՞րբ պիտի մահանայ չար մարդու լեզուն։

Թէ ես վառեմ մատներըս էլ մոմերի նման, Կը բամբասի անխնայ չար մարդու լեզուն։

Արծուի նման երկինքն էլ թէ ես վերանամ, Իմ ձամբից չի հեռանայ չար մարդու լեզուն։

Կարիձի պէս սեւ թոյն է իմ վէրքին թափում, Միշտ անխիղձ է ինչպէս մահ, չար մարդու լեզուն։

Ես ձամբորդ եմ, նա ձամբին կոյր բու է վայող, ԱՂս, ե՞րբ պիտի համրանայ չար մարդու լեզուն։

Ինչպէս փշոտ մի մացառ թող կեանքի արտից Առ միշտ պոկուի, չքանայ չար մարդու լեզուն։

Սիրահար չեմ անէծքի, բայց թող թոնիրում Վառուի, այրուի, մոխրանայ չար մարդու լեզուն։

Ունենայի եթէ երբեք մի սուր մկրատ, Կը կտրէի հենց հիմա չար մարդու լեզուն։

Երբ որ իմ այս երգը կարդայ, էլի իմ վրայ Պիտի փրփրի, չարանայ չար մարդու լեզուն։

ԱՇՈՏ ԳՐԱՇԻ

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ

<րմա սիրով, ալ ներէ՛ մարդերուն – սիրտ իմ – բոլոր. Կեցած մինակ քարափին թող որ երթայ աչքը խոր. Այդ քարափէն անխըտիր անցորդն եղաւ ցաւաբեր Երբ դուն մանուկ մը իբրեւ առիր անվախ, տըւիր սէր։

Ներէ՛ հո՛գիս, դուն հիմա, ներէ բոլոր մարդերուն, Որոնք երկինքըդ ամպոտ, ըրին երկիրըդ հըրդեհ. Որոնք յետոյ ուրացան սիրտ-ոձիրները իրենց, Եւ որ երբեք չգիտցան անդրադարձները քու մէջ։

Ալ լայնասիրտ հիմա դուն, դիտէ վերէն, մեծի պէս, Մարդոց դէմքերը բոլոր որոնք մանուկ մը կարծես՝ Աւազին մէջ կը խաղան, կը պոռչըտան, կը ծեծուին, Կը համբուրուին ալ ոմանք կանաչներու մէջ անդին։

Նոյն քարափէն, իրիկուան, այդ մանուկներն երբ երթան, Խաղաղութիւնը նորէն կը կաթի վար աստղերէն. Բայց քեզմէ զատ եւ ոչ ոք - ցաւերու մէջ մոռացկոտ -Կը յիշէ Սէր-Առտըւան մեծ աղմուկներն աչքիդ մօտ։

Ու մի՛ յիշեր, մոռցի՛ր իսկ, զանոնք որ քեզ ձըմլեցին Տըղայութեան սէրերուն. որոնք անցան հոգիին Ակօսներուն մէջ անհուն։ Անոնց ներէ՛ կամովին, Խաղաղութիւնը քեզմէ որ բաշխըփ ամէնքին։

UULL

ՏԵՍԻԼՔ - ՆԵՐԿԱՆ

Ժառանգատրին

Պարման տղայ, դուն ինչո՞ւ ձամբուս վրայ յամեցար, Եւ ուզեցիր որ եղբօր պէս խօսէի քեզ երկար՝ Տարբեր-տարբեր շեշտերէն կեանքի հազար ձայներուն Որոնք քեզ միշտ կը կանչեն . . . դուն՝ բացուող-վա՜րդ, երերո՜ւն։

Ու վարանոտ ու կըթոտ՝ տեսիլք-ներկան կերտելէն Կը շղթայուիս անցեալիդ անփառունակ յուշերէն․ Լոյսի խաղե՜ր՝ հեռուէն, քեզ կը քաշեն ուժգնօրէն, Իշխանազուն մը իբրեւ գերուած փշրանք-հահոյքէն . . .:

Զիս վարանքի կը մատնես՝ գաղջ հովերու յանձնուած Ու կիրքերէ տարուբեր։ Միտքըդ խըռով՝ գի՜րք մը բաց, Դուն՝ պարմանի ու լըքուն, ահա կեցե՜ր իմ դիմաց . . .:

Կը հեռանամ երբ քեզմէ, իմ աչքերուն մէջ սառած հարցումն է շե՛շտ՝ ինձմէ քեզ.- «Կեանքին մէջէն կըրնա՞ս դուն Քալել այդպէս միայնակ, միշտ հոգիով ալ զեղուն . . .»։

- Դարձի՛ր տեսի՛լք այն կեանքին, ուր օրհնըւի՛ս պիտի դուն . . .:

ՇԷՆ-ՄԱՀ

ՊԱՏՄԱԿԱՆ

«ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ» ԺՔ. ԴԱՐՈՒՄ ԵՒ ՆՐԱ ԱԿԱՆԱՒՈՐ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ՝ ՀԱՑՈՑ ՆԵՐՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՇՆՈՐՀԱԼԻՆ

Գրեց՝ ԷՐՆԱՏ ՍՈՒՏՏՆԵՐ*

ԺԲ. դարում Մերձաւոր Արեւելքում տեղի էր ունենում մի նոր կարգաւորում։ Բիւզանդական կայսրութիւնը վերածնունդ էր ապրում Կոմնենների իշխանութեան տակ։ Երեք ականաւոր կայսրեր, որոնք միասնաբար իշխեցին ամբողջ uh հարիւրամեակի ընթացքում (1081-1180), չվարանեցին նոր եւ մասնաւորապէս Արեւմուտքից եկող մշակութային հոսանքներն ընդունելու, եւ կայսրութեանը վերստին ապահովելու մեծ պետութեան դիրք (1)։ Սիցիլիայում եւ հարաւային Իտալիայում արդեն ԺԱ․ դարում հաստատուել էին Նորմանները. նրանք ձգտում էին իշխանութիւնը ընդարձակել դէպի Միջերկրականի արեւելեան ափերը։ Հակառակ այն իրողութեան, որ Կոմնեն կայսրերը կարողացան վարպետօրէն կանխել Նորմաններից սպառնացող վտանգը, սակայն չկարողացան արգելք լինել բիւզանդական կայսրութեան հնամենի սահմաններից ներս լատինական իշխանութիւնների ստեղծմանը, երբ դէպի արեւելք սկիզբ առին խաչակրաց արշաւանքները։ Անատոլիայում, կայսրութեան երբեմնի նահանգները գտնւում էին Իկոնիոյ ubjonih սուլթանութեան իշխանութեան տակ։ Ինչպէս Նորմանները, նոյնպէս եւ Թուրքերը ցանկանում էին տիրանալ Կոստանդնուպոլսոյ թագին։ ԺԱ․ դարի ընթացքում հայերն կորցրել էին իրենց քաղաքական անկախութիւնը։ Նրանց բուն **հրկիրը ԺԲ. դարում ընկ**ել էր թրքական տիրապետութեան տակ։ Հայերն ու Lui

digitised by

Եկեղեցին Կոստանդնուպոլսոյ օրթոտոքս կայսրերից նուազ չտառապեցին, քան հետագայում նրանց հետեւող իսյամ թուրքերից։ Երբ Կոմնեններն Բիւզանդիան առաջնորդում են ծաղկման մի նոր հանգրուանի, հայհըն էլ իրհնց հերթին են կարողանում ապրհյ որոշակի վերազարթօնք։ Այն՝ տեղի է ունենում ոչ թէ իրենց պապենական հողում, այլ այդտեղից հարաւ-արեւմուտք գտնուող՝ Կիլիկիայում, որտեղ հայկական իշխանական տներին յաջողւում է ստեղծելու սեպհական իշխանութիւն, եւ որի հովանու տակ համախմբւում են ընկճուած հիւսիս–արեւեյքից ժողովրդական լայն հոսանքներ։ Այս նորակազմ իշխանութիւնը 1199-ին արդէն այնքան էր զօրացել, որ նրա իշխանաւորը արժանանում է թագաւորական թագի։ Այսպէս կոչուած՝ Zujng (Kleinarmenien) Φnfn թագաւորութիւնը գոյատեւելու էր մինչեւ 1375 թուականը։ «ԺԲ. դարի ասորական վերածնունդի» ժամանակ, ոչ քաղաքական, պարզապես մշակութային բնոյթի mil ծաղկման մի շրջան են ապրում նաեւ միայն wunphabpp, ns nnnGf այլ ստուար թուով սահմանակցում, ապրում էին հէնց Կիլիկեան Հայաստանում։

րը Մերձաւոր Արեւելքի այդ ծաղկող ալ աշխարհի Քրիստոնեաները պատկանում թի էին հինգ եկեղեցիների․ Բիւզանդական ոնց Օրթոտոքս, Արեւմտեան Լատին, Մարոնիտ, ուն Հայ եւ Ասորի։ Մեր դաւանագիտութեան ան մէջ վերջին այս երկու եկեղեցիները այ կոչւում են «միաբնակ», սակայն նրանց A.R.A.R.@

1992 Bnilhu - Oqnumnu

միջեւ եկեղեցական միութիւն գրեթէ չի եղել (2)։ Այն հարցը, թէ մարոնիտները իրենց ծագումով «միակամեայ» են, չենք հետազօտում։ Նրանք ոչ Ասորի եւ ոչ էլ Յոյն եկեղեցու հետ եկեղեցական միութեան մէջ չեն եղել. իսկ խաչակրաց արշաւանքից առաջ Լատին եկեղեցու հետ յարարերութիւն՝ նմանապէս չեն ունեցել։

Այն շրջանակները, որոնք Մերձաւոր Արեւելքի այս նոր կարգաւորման նախաձեռնողներն եղան, հետաքրքրւում էին նաեւ յաղթահարելու Քրիստոնեաների միջեւ գոյութիւն ունեցող ներքին բաժանումները։ Ալիքսիոս Ա․ Կայսրը, տակաւին խաչակրաց առաջին արշաւանքից առաջ, հրաւիրել էր Ուրբանոս Բ. պապին գալու Կոստանդնուպոլիս Եւ մասնակցելու մի ժողովի, որը կը քննի պատարագի հացի խմորուն թէ անխմոր լինելու ծիսական հարցը (3)։ Ժամանակի զգացողութիւնը, յատկապէս Բիւզանդական աշխարհում պահանջում էր, որ միասնական հաւատքը իր արտայայտութիւնը գտնի ծիսական սովորութիւնների նոյնութեան մէջ։ Ուստի, րաղարջ հացի հարցը դառնում է վիճարանութեան հիմնական կէտերից մէկը, մէկ կողմից՝ յոյների, իսկ միւս կողմից՝ լատինների ու հայերի միջեւ (4)։ 1141ին 8ովհաննէս Բ. կայսրը դիմելով իննովկենտիոս պապին գրում է, որ գոյութիւն ունեն երկու քոյրեր- անձնապէս ինքը ցանկանում է առաջնորդել աշխարհականին, մինչդեռ հոգեւորի առաջնորդութիւնը թողնում է պապին, որպես զի նորից վերահաստատուի քրիստոնէական եկեղեցու միութիւնը եւ վերստին հիմնուի հռոմէական կայսրութեան տիրակալութիւնը (5)։

Միութենական սերտ ^{բանա}կցութիւններն (6)ի վերջոյ սկսւում ^{են} Մանուէլ Ա. կայսեր ժամանակ։ Ostrogorskyn նրան այսպէս է բնութագրում.

«Նա ի սկզբանէ մի զօրավար եւ

քաջամարտիկ մի անձնաւորութիւն էր. անձնական վտանգից Երկնչող չէր։ Ամէնից γωι նա οσιπιωδ էր մեծ եւ համարձակ գաղափարներով։ Հնարամիտ uh դիւանագէտ էր Եւ քաղաքական գործիչ։ Իսկական մի բիւզանդացի՝ համակուած տիեզերական կայսրութեան տեսլականով բանավէճերի եւ աստուածաբանական բուռն կրքով։ Միաժամանակ, նա իր նկարագրով լրիւ արեւմտեան բնոյթի մի ասպետ էր, եւ բիւզանդական պատմութեան մէջ մարմնացնում էր քաջատոհմիկ մի նոր կերպարի։ Նրա կերպարում կարելի է նշմարել այն իրողութիւնը, թէ ինչպիսի խոր ազդեցութիւն էր գործել խաչակիրների հետ շփումը Բիւզանդիոյ վրայ» (7)։

Hans-Georg Beckը ընդգծում է Մանուէլի ունեցած յատուկ նշանակութիւնը ժամանակի աստուածաբանութեան մէջ, սակայն, երբ խօսքը Մանուէլի սեպհական գրութիւններին է վերաբերւում, նա կատարում է որոշակի սահմանափակումներ.

«Ինչպէս Ալbfuhnu Ա.ը, նnյնպէս bi Մանուէլ Ա.ը... մbծ ազդbgnւթիւն bն ունbնnւմ դարաշրջանի աստուածաբանութbան վրայ։ Մանուէլի կամbgnղութիւնը պատճառ է լինում բուռն բանավէճbրի ստbղծման, որոնց ուժգնութիւնը արծարծուած հարցbրի էութbան հbտ միշտ չbն մնում առողջ յարաբbրութbան մէջ։ Մանուէլի աստուածաբանական արժէքը շատ աւbլի է նուազում, bրբ գահի վրայ իբրbւ մի աստուածաբան գրիչն վbրgնում է իր ձbոքը bi առանց քննադատական ոգու bi համապատասխան գիտbլիքնbրի գործի է մղւում» (8):

գործի է ավարու Beckը գնահատում է սակայն Մանուէլի

«ջանքը մահմետականութեան դէմ յարուցուած բանակռուի թունազերծման հարցով։ Նա փորձում է քրիստոնեայ դարձած մահմետականների հրաժարման րանաձեւը այնքան փոխել, որ ուղղակի կերպով չնզովուի Մուհամետի դաւանած Աստուածը»։

Խաչակիրների յարաբերութիւններն օրթոտոքս յոյների հետ սկսւում են հետզհետէ սրուել, ոչ միայն գոյութիւն ունեցող քաղաքական հակասութիւնների պատճառով, այլ նաեւ այն բանի համար, որ խաչակիրներն լատինական քաղաքները շուտով վերածում են եպիսկոպոսանիստ Նրանք առաջնորդութիւնների։ յարաբերութիւններ են մշակում նաեւ արեւեյեան միւս եկեղեցիների hbun: Մարոնիտները միանում են նրանց (9)։ Ասորի եկեղեցու հետ լատինների ունեցած յարաբերութիւններն ընդհանուր առմամբ րարեկամական էին (10)։ Հայոց Գրիգոր Գ. կաթողիկոսը (1113-1116), որը հայրապետական Աթոռը Ծովքից Հռոմկլայ է տեղափոխում, իր մասնակցութիւնն է բերում Լատինների կողմից գումարուած **հկեղեցական ժողովներին** (11)։

Գրիգորի կրտսեր եղբայր Ներսէսը, եպիսկոպոս 1135ից եւ կաթողիկոսի ամենակարեւոր գործակիցն ու վերջապէս նրա յաջորդը (1166-1173), որը իր ունեցած աստուածաբանական բարձր կրթութեան համար ստացել է «Ծնորհալի» անունը, իր ստեղծագործութիւններում առաջ է քաշում եկեղեցիների միութեան հարցը. գրութիւններ, որոնք արդարօրէն կարող են դասուել դասական էկումենիկ գրականութեան շարքին (12):

հնչպես նրա կաթողիկոսական Աթոո բարձրանալու առիթով հրապարակած Թուղթ Ընդհանրականն է վկայում, Ներսեսն եկեղեցական բարեփոխումներով հետաքրքրուած ժամանակի բարձրաստիճան այն հոգեւորականն էր, որը հզօրացող Կիլիկիայում, որտեղ արդեն ոմանք ընդունուած չափերն էլ գերազանցել էին, պաշտպանում էր այն տեսակէտը, թէ առօրեայ տաղտուկներում պէտք չէ մոռացութեան ենթարկուեն յաւիտենական արժէքները (13)։ Սոյն գաղափարականը լոկ նուիրագործուած Երբեմնի արժէքների սրումով նա չէր իրականացնում, այ փորձում էր վեր հանել դրանց իսկական իմաստը։ Լսելի դառնալու համար պետք չունէր սովորական աւանդութիւններն թմբկահարելու, այլ նա դրանք օգտագործում էր հիմնաւորելու իր բարենորոգչական ծրագրերը։ Այս առումով, քննական ոգին նրա մօտ վերածւում է ինքնրստինքեան հասկանալի մի ԵրԵւոյթի, Եւ նա բաժանում է նոյնիսկ ճշմարիտն ու իրականը նախ uGhpudbon ubpund wunibihf, huh dhiu կողմից՝ գուցէ օրինաւոր Եւ յանձնարարեր, pujg ny www.www.hp wouth dts:

1165ին Գրիգոր Գ. Պահյաւունի կաթողիկոսի հրամանով Ներսէսը խմբագրում է յոյներին ուղղուած դաւանական մի թուղթ (14)։ Այդտեղ նա խօսում է Բանն Աստուծոյ Մարդեղութեան իբրեւ «միացում» երկու uuuha, բնութիւնների․ սոյնը ներկայացնում էնա այնպիսի ձեւով, որ յոյների համարյստակ է դառնում, թէ հայերն յաւեյում կամ փոփոխում չեն մտցնում Քրիստոսի Աստուածութեան եւ մարդկութեան մէջ։ Նա Յիսուս Քրիստոսին դաւանում է իրթե մէկ Անձ՝ աստուածային եւ մարդկային բնութիւններով, եւ սոյնը բացատրում է նա այնպիսի խօսքերով, որոնք յոյներին ցոյց են տալիս, թէ նրանց դաւանանքը չի տարբերւում հայկական աւանդութիւնից։ Ներսէսն հաստատում է.

«Եթէ մի բնութիւնն վասն անքակտի Եւ անբաժանելի միաւորութեանն ասի ե ոչ վասն շփոթման, եւ երկու բնութինն վասն անշփոթ եւ անայլայլելին լինելոյ ե ոչ վասն բաժանման, երկաքանչիւրքն ի սահմանի են ուղղափառութեան» (15)։ Նկատի ունենալով այն աւանդութիւններն ու ծիսական ավորութիւնները, որոնք տարբերւում են յունականից, դաւանական թղթի վերջաւորութեան Ներսէս խաղաղասիրական ոգով յոյներին բացատրում է, թէ դրանք Հայ եկեղեցում ինչպէս են ըմբռնւում, եւ ամենայն համբերութեամբ ուղղում՝ գոյութիւն ունեցող բոլոր թիւրիմացութիւնները։

Այս բացատրութիւնը Կոստանդ– նուպոլսում թողնում է մեծ տպաւորութիւն։ Մանուէլ Կայսրը, որի մօտ միութենական բանակցութիւնների էին եկել Ալեքսանդր Գ. պապի ուղարկած ներկայացուցիչները (16), 1167ին պատգամաւորներ է առաքում Հռոմկյա, խնդրելով Գրիգոր Գ. Կաթողիկոսին, որ Ներսէսը կայսրութեան մայրաքաղաք գայ մասնակցելու համար միութենական բանակցութիւնների։ Այդ ընթացքում արդէն Գրիգոր Կաթողիկոսը վախճանուել էր, եւ նրան յաջորդել էր Ներսէսը։ Նորընտիր Կաթողիկոսը Մանուէլ կայսեր առաքած մի թղթով (17) առաջարկում է, որ հայերի եւ յոյների միջեւ միութենական բանակցութիւնները տեղի ունենան Հռոմկլայում։ Սոյն գրութեամբ Ներսէսը ողջունում է կայսեր, պատրաստ գտնուհյու եւ գործակցելու համար Էմմանուէլի հետ.

«Գանզի ծանոյց մեզ զօրութիւն բանիս ոչ միայն անուանակցութեան եւ աթոռակալութեան, այլ եւ գործակցութեան ճշմարիտն էմմանուէլի արժանաւորիլ ձեզ, այն որ հարիւրոցն ոչխարաց եւ դրամիցն տասանց էջ ի խնդիր նուազութեանցն լոման եւ զմիջնորմն ցանկոյն քակեաց, եւ արար զերկոսեանն մի արեամբ խաչին իւրոյ, ըստ այսմ եւ դուք հանդերձեալ էք զանուանակցութիւնդ եւ զաթոռակալութիւնդ ոչ միայն օրինակաւ կոչել, այլ եւ արդեամբք եւ ճշմարտութեամթ» (18):

Երկու աւանդութիւններն էլ ծառայում են միեւնոյն նպատակի՝ հասնելու **հկեղեցու միութեան, Նոր Սիոնի որդիների** եւ դուստրերի խաղաղութեան, ինչպէս նաեւ Սուրբ Երրորդութեան միաձայն փառաբանութեան, որը կարող է իրականանալ ոչ թէ կայսերական ոյժի պարտադրումով, այլ միայն Քրիստոսի սիրով։ Քանի որ աւելի քան 700 տարուայ թաժանման ընթացքում կուտակուած կրքերը կարելի է մեղմացնել միայն մեծ համբերութեամբ։ Իբրեւ փաստացի ապացոյց բարի ցանկութեան նախ թող կայսրը հայերին խաղաղութիւն պարգեւի կայսրութեան սահմաններում, ու հրամայի յոյն **Եկեղեցականութեանն ու ժողովրդին, որ** վերջ գտնեն հայերի դէմ մղուած դաւանական մոլbռանդութիւննbրն ու րոնութիւնները. այլադաւան (ոչ օրթոտոքսները), որոնք արդէն իսկ հալածւում են ոչ քրիստոնեաներից, գոնէ բիւզանդական կայսրութեան մէջ պէտք չէ ենթարկուեն աւելորդ նեղութեանց, այն էլ ուղղակի յոյներից։ Արեւելքցիներին հնարաւոր է միութեան համար այն ժամանակ սիրաշահել, երբ յոյների կողմից վերջ գտնի արեւելեան եկեղեցիների, խորանների, խաչերի ու եկեղեցականների դէմ կատարուած մոլեգին ոտնձգութիւնները (19)։ Ոչ թէ ոյժը, այլ սէրն ու համակրանքն են մարդկանց իրար

մօտեցնում։ Սակայն աւելի կարեւորն այն է, որ կայսրը պարտի հրամայել եկեղեցիներին աղօթելու առ Աստուած, որպէս զի Աստուծոյ օգնութեամբ միութեան գործը յաջողութեամբ պսակուի։ Ինքը, Ներսէսը, անձնապէս հրահանգել է երկրի բոլոր հայ եկեղեցիներին առ Աստուած աղօթելու, որպէս զի Աստուած իրար հետ միացնի Նոր Սիոնի որդիներին ու դստրերին։ կայսրը եկեղեցու միութեան նկատմամբ իր ցուցաբերած հետաքրքրութեան համար պարտական է Աստուծոյ ողորմածութեանը։ Եթէ պատահի, որ երեւան գայ մի մարգարէ, նա Աստուծոյ անունով պիտի յայտարարի, թէ Քրիստոնեաները, որոնք իրենց Փրկչից կորուստից փրկուելով առաջնորդուել են դէպի միութեան, այժմ, Աստուծոյ բարկութեամբ են իրար մօտենալու, քանի որ նրանք փոխանակ իրար սիրելու, իրարից բաժանւում են։ Նրանք մատնուած են Քրիստոսի թշնամիների սրին, մինչեւ որ նորից վերադառնան քրիստոսաւանդ սիրոյ պատուիրանին եւ կաթողիկէ ու առաքելական մէկ եկեղեցուն։

Ներսէսը տեղեկացել է այն մասին, որ Հռոմի պատգամաւորները միութենական բանակցութիւններ են վարում կայսերական եկեղեցու հետ, եւ նա կայսեր կարող է հաւաստիացնել, որ հայերն էլ իրենց հերթին Հռոմկլայում եկեղեցական բանակցութիւններ են վարում ասորիների նորընտիր պատրիարքի (20) հետ։ Պարզապէս նա ցանկանում է կայսեր դիմել հետեւեալ խնդրանքով.

«Այլ եւ զայս եւս հայցեմք ի ներող քաղցրութենէ ձերմէ, զի թէ տնօրինեսցէ Uumniwo woubi ubq un uhubulu, uh' եղիցի որպէս տեառն առ ծառայս եւ ծառայից առ տեարս. զի դուք զմերն պակասութիւն դնէք մեր առաջի, եւ մեք ոչ համարձակիմք ի ձերոց ինչ՝ յորոց գայթակղիմք, ծանուցանել ձեզ. եւ այս մարմնաւորաց է օրէն եւ ոչ հոգեւորաց, թեպետ եւ ի նիւթականացս qh զբարձրագոյնն ունիք ամենայնիւ, եւ յիմաստութիւն առաւելեալ քան զբնաւս, այլ աննիւթական շնորհաւն մի են հաւատացեալք ի Քրիստոս՝ մեծամեծ եւ փոքունք, ըստ Պաւղոսի» (21)։

Եթէ Աստուծոյ ողորմածութիւնը թոյլ տայ արտայայտուելու, ուստի՝ Քրիստոս է հիմքը այս միութեան, իսկ առաքեալները, մարգարէներն ու եկեղեցու հայրերի գրութիւնները՝ դատաւորներ.

«bı füünıphıü nş huişunuşnıpbudp bı uüoqnım puüuşunınıpbudp' npıştu dhüşbı gujdd, jnpng nşhüş oqmbguı bişhahgh ujufuü duuduüuş, uji duüuuın düuubguı huiş, uji bişhahgh hbqnıpbudp bı huünşumınıpbudp, bı qpbnü hppug punüuşind bı qonşumıplığı onlumg pdzişlind' cum hpuduüh Unufbinjü, qh np junguçu huişunuşlı bi unuşbini poubuşh qpuüü, npıştu qh dunu npuuugt h dumpaşluüt hppbi qjungpini, duüsunuşuü t ujüyhuh puühü Uumınıdı ibi nş uuşuunınış, bi hunşuünın dhpuunpbu uünşudıngü Aphumnuh' bi nş yumınış (22):

Այնտեղ որտեղ պակասներ կան, պետք է լրացուեն ապաքինող միջոցների փոխադարձ մատակարարմամբ, բայց միաժամանակ պէտք է այն մասին իմանան, որ դեղն երբեմն լեղի է լինում։ Նաեւ այն դէպքում, մատուցուած դեղը պէտք չէ մերժուի, երբ տուեալ մատուցողը մեղատր է, որովհետեւ յաճախ հզօրներն էլ կարիքը ունեն թոյլերի։

Նամակին կցուած դաւանութեան թղթում (23) Ներսէսը զարգացնում է նորից այն տեսակէտը, որ յոյների եւ հայերի Քրիստոսաբանութիւնը իրար հետ համատեղելի է, եւ միութեան իրականացումը հնարաւոր՝ «միութեան մէջ բազմազանութիւն» սկզբունքով։ Միութիւնը վերաբերւում է դաւանանքին, բայց ոչ ծիսական եւ աւանդական արտաքին ձեւերին։ Իւրաքանչիւր նուիրագործուած սովորութիւն պէտք է եկեղեցում ունենայ իր ուրոյն տեղը։ Պատարագի նշանակների առնչութեամբ, նա սուրբ գրական ապացոյցների հիման վրայ պաշտպանում է անխմոր հացի եւ անապակ բաժակի սովորութիւնը, աւելացնելով ծեսի համար անհրաժեշտ հետեւեալ սկզբունքը. «Հաստատեալ գիտեմք, եթէ ոչ այլ ինչ է հաճոյ Աստուծոյ, բայց ուղղափառ հաւատքն եւ մաքուր վարքն։ Այլ եթէ պարզ մտօք եւ ոչ հերձուածողական ինչ կարծեօք կատարին այսոքիկ, աւանդութիւնք են ազգաց եւ ոչ առաւելութիւն կամ նուազութիւն ինչ ի հաւատս։ Վասն որոյ յորժամ գլուխն՝ որ է հաւատն, միանայ եւ յօդի ի գլուխն Քրիստոս, յայնժամ եւ անդամքն՝ որ են աւանդութիւնքն, ուղղին եւ կամ հաճոյանան միմեանց ի փառս Քրիստոսի Աստուծոյ» (24):

Մանուէլ կայսրը ընդունում է Ներսէսի հրաւէրը։ Նրա հրահանգով երկու անգամ Հռոմկյա է գալիս Թէորիանոս անունով մի գիտնական, մասնակցելու համար միութենական բանակցութիւններին։ Beckը նրան գնահատում է իբրեւ «դաւանաբանութեան եւ բանավէճի մէջ խաղաղասիրութեան ոգի պահող այնպիսի մի անձնաւորութեան, որի նմանը սակաւ չէր ժՔ. դարում» (25)։ Սակայն ասորական աղբիւրներից տեղեկանում ենք, որ նա ազատ չէր արեւելքցիների նկատմամբ բիւզանդացոց իւրայատուկ մեծամտութիւնից (26)։

Թեորիանոսի առաջին կեցութեան ընթացքում (1169/70) կատարւում են խորհրդակցութիւններ դաւանանքի մասին եւ արծարծւում վարդապետական հարցեր, որոնք Ներսէսը ամփոփում է կայսեր ուղղուած մի թղթում (27)։ Արդեօք պիտի ընդունուէ՞ր ծիսական հարցերում այն ազատութիւնը, որ պահանջում էր Ներսէսը։

Կաթողիկոսն իր նամակում կայսեր պարզում է, որ նա առաջի հերթին Կիիկիոյ եկեղեցու անունից է խօսում։ Միութեան մասին վերջնական որոշում տալու համար պէտք է համահայկական մի ժողով գումարուի, որովհետեւ հայ ժողովրդի ճակատագրի ծանր բերումով՝

«Հայրապետութեանս հալածեալ ի

հայրենին աշխարհէ եւ Աթոռոյ՝ յօտար աշխարհ տարաբերի պանդխտութեամբ, յորոց պատճառէ ոչ ունիմք մերձ զորս ըստ ժամանակիս եպիսկոպոսունք են Հայաստանեաց եւ վարդապետք, եւ առանց խորհրդակցութեան նոցա՝ անմարթ է զկատարեալն տալ պատասխանի հարցմանց ձերոց, զի մի՛ փոխանակ միաբանութեան զանազան պատճառս տացուք բաժանմանց» (28):

Իսկ համահայկական այս ժողովը նա ցանկանում է այն ժամանակ հրաւիրել, **Երբ առաջին բանակցութիւնների արդիւնքը** Կոստանդնուպոլսից հասնի Հռոմկյա։ Սակայն մինչեւ Թէորիանոսի վերադարձը անցնում է Երկու տարի։ ՊատԵրազմը պատճառ է լինում ուշացման (29), իսկ Միքայէլ Գ. պատրիարքն էլ, Երբ Թէորիանոսը դեռ գտնւում էր Հռոմկլայում, դարձել էր բուռն հակառակորդ լատինների եւ հայերի հետ մերձեցման (30), միւս կողմից՝ հայերի մօտ սկսուել էին Ներսէսի դէմ քաղկեդոնական բանաձեւի պատճառով կասկածներ յարուցուել իբրեւ դաւաճանի։ Երբ բանակցութիւնների երկրորդ շրջանն սկսւում է (որի զարգացման ճշգրիտ ընթացքը դժուար է վերարտադրել յունական, հայկական եւ ասորական աղբիւրներում գոյութիւն ունեցող մեծ հակասութիւնների պատճառով), յոյներն ներկայանում են միութենական այնպիսի պայմաններով, որոնք բոլորովին հեռու էին՝ « միութիւն բազմազանութեան մէջ» սկզբունքից։ Միութեան հեռանկարով Ներսէսի սահմանած վարդապետական բանաձեւը յոյների կողմից անբաւարար նկատուելով մերժւում էր։ Նրանք հայերից պահանջում էին ընդունելու վարդապետական այնպիսի րացատրութիւններ, որոնց սովոր էին յոյները.- ընդունել Քաղկեդոնն, ինչպէս նաեւ դրան յաջորդող ժողովները, կայսրին է վերապահում Հայոց կաթողիկոսի

նշանակումը, եւ ամենից վատը՝ ստիպումէ կիրառելու բիւզանդական եկեղեցու ծիսական սովորութիւնները իբրեւ գին այս միութեան (31)։ Որպէս զի բանակցութիւններն չընդհատուեն, Ներսէսը մի կերպ համաձայնւում է առաջարկուած պայմանների հետ, սակայն ոչ շատ անց՝ վախճանւում է։

Նրան յաջորդած Գրիգոր Դ.ր րանակցութիւնները հասցնում է այնտեղ, որ յոյները՝ զիջում են հայերի նկատմամբ ծիսական նոյնութեան պարտադրանքը, եւ նա 1179ին կարողանում է Հռոմկյայում գումարիլ միութինական մի ժողով։ Բայց **հրբ հայ պատգամաւորն**երը մայրաքաղաք են հասնում կայսեր տեղեկացնելու ժողովի արդիւնքները, Մանուէլը մահացել էր։ Նրա մահով վերջ է գտնում Կոմնենների վերազարթօնքի շրջանը։ Գահակայական ներքին կռիւները, պատերազմներն ու ոչ **Երկրացիների նկատմամբ բիւզանդացիների** կոյր ատելութիւնը՝ հայերին նոր ողբերգութիւնների է առաջնորդում։ Բիւզանդիան այլեւս զբաղւում էր ներքին հարցերով, եւ ընդհանրապէս ժամանակ չէր մնում հետաքրքրուեյու միութենական բանակցութիւնների արդիւնքներով։

Նմանապէս արհւհլհան Հայաստանի եկեղեցականութիւնը ոգեւորուած stp միութեամբ։ Այդտեղ խօսք են վերցնում բարձրաստիճան Եկեղեցականներ, որոնք ընդհանրապես հեռու էին մնացել միութենական բանակցութիւններից։ Նրանք աւելի հակուած էին պահպանելու հայկական աւանդական կեցուածքը, քան բաժանելու Ներսէս կաթողիկոսի միութենական գաղափարները, եւ որովհետեւ նրանք ապրում էին մահմետական տիրապետութեան տակ, նաեւ չէին ողջունում արեւմուտքի հետ քաղաքական մերձեցումը։ Ազգային-եկեղեցական ժողով գումարելով նրանք Հայրապետական Upnnp տեղափոխում են Էջմիածին։

Ներսէսի բաժանման վերաբերեալ վախը այսպիսով իրականանում է, չնայած, որ յոյների հետ կայացած եկեղեցական միութեան որոշումը բոլորովին չէրգործադրուել։

Ներսէս Ծնորհային եւ Միքայել Ասորին փորձում են նաեւ խաղաղութիւն հաստատել հայերի եւ ասորիների միջել։ Իր Երկու այցելութիւնների առիթով կ Թէորիանոսը Հռոմկլայում նաեւ հանդիպում է ունենում ասորի պատգամաւորների հետ, սակայն բանակցութիւններն մնում ապարդիւն։ Այն մօտեցումը, որ ЬG Ներսէսին յաջողուել էր ստեղծելու ասորիների հետ, Գրիգոր Դ.ի ժամանակ կորսւում է։ Հայերը քաղաքական որոշակի ազդեցութիւն ունէին ասորիների վրայ որովհետեւ թուով ոչ սակաւ ասորիներ ապրում էին ուղղակի Կիլիկիայում։ Հայերը միջամտում են ասորիների եկեղեցական ներքին հարցերին եւ օժանդակում Միքայկ պատրիարքի հակառակորդին, որովհետեւ նա հայերին աւելի էր ենթարկւում քան Միքայէլը։ Այսպիսով, նրանք ոտնակոխ են անում ծլարձակող վստահութեան այն սաղմը, որն աճում էր այս Երկու հնատրց ժողովուրդների միջեւ։

Յոյներից լքուած, ասորիների հետ նորից խռոված, նոյնիսկ բուն Հայրենիքում ապրող հայերից բաժանուած, եւ շրջապատուած՝ թշնամի ազգերով, Կիլիկիան այլեւս չէր կարող իր սեպհական ուժերով գոյատեւել։ Մարոնիտների նման, ԺԳ․ դարի վերջում Կիլիկիոյ Հայ Եկեղեցին եւս միանում է լատինների հետ։ Սակայն վերջիններիս համար ԺԳ․ դարի վերջում միութիւն բազմազանութեան մէջ եւ հաւասարութիւն մեծի եւ փոքրի միջեւ, ինչպէս Ներսէսն էր պահանջեր, աներեւակայելի մի իրականութիւն էր։

Երբ 1204 թուականին խաչակիրներն Կոստանդնուպոլիսը բիրտ կերպով կործանում են, հաշտութեան ոգին բոլորովին

խեղդւում է։ Այդ դէպքից քիչ անց, երբ իննովկենդիոս Գ. պապը Կոստանդնուպոլսոյ լատին կայսեր գրում է՝ «Translato imperio, necessarium ut ritus sacerdotii transferatur», սկիզբ է առնում մի ժամանակաշրջան, որի ընթացքում լատիններն ձգտում են բոլոր միջոցներով լատինականացնել արհւելքի եկեղեցիները։ Այն, որ մենք «ԺԲ. դարի միութենական շարժում» ենք անուանում, 1204 թուականը վերապրել չկարողացաւ:*

3. Julin, W. De Vries, Rom und die Patriarchate des Ostens, Freiburg, 1963, S. 25. 4nbubu 9.h hulupnութեան պատճառով, Ուրբանոս պապը ի վիճակի չեր ընդունելու Ալեքսիոս Ա. կայսեր հրաւէրը։ 4 Անտիոքը Խաչակիրների կողմից գրաւուելուց յետոյ, Անտիոքի Յովհաննէս Օքսայտէս պատրիարքը, որին որոշ ժամանակ ենթարկւում էին տեղի լատին հկեղեցականները, հակադրուելով իշխանին, ատիպուած է լինում փախչելու, հրաժարւում է Աթոռից Եւ մեկուսանում մի վանքում։ Այն, որ յոյն աստուածաբանները ինչպիսի մեծ ^{նյանակ}ութիւն էին տալիս խմորհալ հացի խնդրին, կարհի է հզրակացնել նրա թողած գրութիւններից։ Այս մասին Kirche und Theologische Literatur im Byzantinischen Reich (Munchen 1959, S. 613) hapmahpp upon anponed, Hans-Georg Beckp գրում է. «Ծուրջ 1112ին, Երբ լատինների դէմ հակառակութիւնը նորից է բորբոքւում, նա նամակի ծետվ խմորհալ հացի վերաբերեալ գրում է մի «շխատութիւն։ Նա այս հարցում տեսնում է ատինների դեմ եղած հակառակութեան աժենակարեւոր կէտը։ Beckը այսպէս է գնահատում նրան «Գիւզանդական պատրիարքների պատմութեան

dty Badhullituli, pum babinjehli, udbluuglihi ntufbphg uthu to: Panoparia-nud, npp Ulbfuhnu կայսեր պատուէրով խմբագրել է Euthymios Zigabenosp, h9. glunud (punntu Luing: PG 130, 1173-1190) ընդարձակ տեղ է տրամադրում սոյն hungbnha. htug uju qinibn, nun atafh (nbu anjap, 614), wupuqpbi t Zigabenosh unnuhg: 5. Ludun. Ostrogorsky, win, 318.

6. Առանց նկատի առնհյու հայկական եւ ասորական աղբիւըները եւ հիմք ունենալով միայն յունական տուհայնհրը, Մանուէլ կայսհը միութհնական ծրագրերի մասին են խounid. Hefele-Leclerco, Histoire des conciles, V, 1050-1052; նմանապես՝ Chrysostomos Papadopoulos, Alexandrien 1951, S. 938-941.

7. Osttrogorsky, ulin, 314.

8. H. G. Beck ulin 622

9. Ludun - B. Spuler, Die morgenlandischen Kirchen, Leiden 1964, S. 217 ff; P. DIB, Histoire de l'Eglise Maronite, Beirut 1962

10. Ludun - B. Spuler, ulin, 203; P. Kawerau, Die jakobitische Kirche im Yeitalter der Syrischen Renaissance, Berlin 1955, S. 73f.

11. 2ddm. Mansi XXI, 583; Concilum Hierosolymitanum . . . circa annum MCXLIII.

12. Shu J. Cappelletti, Sancti Nersetis Clajensis, Armeniorum Catholici opera, 2 hun., Venedig 1833. 13. Cappelletti, ulin, U., 92-172.

14. U.Gn. 173-194.

15. Հմմտ. Ընդհանրական թուղթք սրբոյն Ներսէսի öünphujinj, bpniuuηtu, 1871, tg 97; Cappelletti, 183. Աստուածաբանական առաջին ոչ պաշտօնական բանակցութիւնների առիթով, որը տեղի ունեցաւ օրթոտոքս եւ ոչ Քաղկեդոնական եկեղեցիների dhebi Uphniu fuqufnid (1964), Zujng ներկայացուցիչ՝ Գարեգին Եպս. Սարգիսեանը իր րանախօսութիւնը աւարտեց վերոյիշեալ մէջբերումով եւ աւելացրեց․ «Եթէ այս հաստատումը հնարաւոր էր ԺՔ․ դարում, դրանից ինչպիսի՞ հզրակացութիւն կարող ենք մենք անել»։ Աստուածաբանական այս ժողովը, ինչպէս Ներսէս Ծնորհային, եկաւ հետեւեալ bqpulugncpbul. «On the essence of the Christological dogma we found ourselves in full agreement» (Հմմտ. ժողովի փաստաթղթերը, The Greek Orthodox Theological Review 10, 1964/1965,

16. P. Tekeyan, Controverses christologiques en Arme'no-Cilice, Rom 1939, S. 9f bt 18.

17. J. Cappelletti, шնդ, 195-204.

18. Հմմտ. Ծնորհալի, նամականի, 300; Cappelletti, անդ, 195. Ներսէս Շնորհալին եկեղեցու միութեան

^{*} Յօդուածիս հեղինակը Ուսուցչապետն է Վիեննայի Պոս. Համալսարանի Արեւելեան Եկեղեցագիտութեան եւ Հայրարանական Ամպիոնի։ Ցօդուածր գերմաներէն բնագրից թարգմանեց՝ Արէլ արեղայ։ 1. Ludus. G. Ostrogorsky, Geschichte Des Byzantinichen Staates, Munchen, 1963, s. 293-325. 2. Ludun- Erwand Ter-Minassiantz, Die armenische Kirche in ihren, Beziehungen zu den szrischen Kirchen bis zum Ende des 13. Jahrhunderts, Leipzig, 1904

գաղափարը վթրցնում է Եփես Բ 14-16 համարներից եւ ոչ ինչպէս մենք՝ Յովհ Ժէ 20էն, որտեղ խօսքը առանձին-առանձին աշակերտների մասին է։ Սոյնը մատնանշում է նաեւ այն, որ Ներսէսի համար միութիւնը ոչ միայն եկեղեցական մի միութիւն է, այլ նաեւ հայ ժողովրդի միութիւնը բիւզանդացիների հետ, որովհետեւ Արեւելքում եկեղեցի եւ ժողովուրդ հասկացութիւնները մէկ են։

19. P. Tekeyan, անդ, էջ 19, ապացուցում է պատմական աղթիւրներով։

20. Միքայէլ Ասորի, հանրածանօթ աստուածաբան Եւ պատմաբան, գահակալութիւն 1166-1199. Նրա մասին տե՛ս DThC X, 1711-1219.

21. Ընդհանրական թուղթք, 117-118; Cappelletti, անդ, 202f. Կաթողիկէ եւ Օրթոտոքս եկեղեցիների բանակցութիւնների առիթով, Ռոդոսում կայացած Համաօրթոտոքս Բ. ժողովի որոշումը առաջարկում է «միեւնոյն պայմանները», ի գիրս՝ Her der korespondenz 18 (1964) 338:

22. Ընդհանրական թուղթք, 118; Cappelletti, անդ, 203. այս մասին տե՛ս Յովհաննէս ԻԳ. պապի խօսքերը, Վատիկանի Բ. ժողովի բացման առիթով-«Վատիկանեան երկրորդ ժողովի սկզբում աւելի քան երբեք յստակ է, որ Տիրոջ ճշմարտութիւնը յաւիտենական է։ Մենք նկատում ենք, թէ ինչպէս ժամանակի ընթացքում մարդկանց անորոչ կարծիքները իրար են յաչորդում, եւ նրանց սխալները կուտակւում են ինչպէս մառախուղն արշալոյտ, բայց այն շուտով անհետանում է, երբ արեգակն է ծագում։ Եկեղեցին բոլոր ժամանակների ընթացքում դիմադրել է այդ սխալներին, դատապարտել է դրանք, նոյնիսկ երբեմն ամենախիստ ձեւով։ Բայց այսօր Քրիստոսի հարսը կամենում է իբրեւ դարման՝ ողորմածութեան ոգին, քան բռնի միջոցներ կիրառել։ Նա հաւատում է, որ ժամանակի հրամայական պահանջից մղուած հարկ է մարդկանց եկեղեցու վարդապետութեան ոյժին ընդարձակ բացատրութիւններով հաղորդակից դարձնել՝ քան դատապարտել (Her der korespondenz 17 {1962/63} 87).

23. Cappelletti, ulin, 202-230.

24. Ընդհանրական թուղթք, 132-133; Cappelletti, անդ, 218f.

25. H.-G. Beck, ulin, 628.

26. Ludun - Ter-Minassiantz, wüŋ, 125-128; P. Tekeyan, wüŋ, 30f.

27. Cappelletti, ußn, 231-238.

28. Canhuapulua pninpf, 147; Cappelletti, 232f.

29. Tekeyan, wlin, 26f.

30. Sh'u H.-G. Beck, ulin, 627.

31. Sh'u P. Tekeyan, ulin, 29.

ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ Տ. ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ՆՇԱՆԵԱՆԻ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ 1917 ՅՈՒՆՈՒԱՐ 1էն

Դեկտ. 13 Դշ.- Քանի օրերէ ի վեր շարունակուող սաստիկ քամին ու տեղատարափ անձրեւները արգելք եղած կը թուին զինուորական գործողութեանց. այսօր երբ օդը քիչ մը պարզուեցաւ, թնդանօթի ձայներ լսեցինք։ Ծննդեան առթիւ շնորհաւորական այցելութիւններ տուինք լատինաց պատրիարքարանը, Ֆրանչիսկեաններու. յոյն եւ գերման կաթոլիկներու վանքերը։

Դեկտ. 14 Եշ.- Գիշերուան ժամը 5էն մինչեւ յաջորդ կէս գիշերը արեւելակողմէն անընդհատ թնդանօթաձգութիւն, միթրայէօզի ու հրացանի գործողութիւններ։ Լսեցինք թէ թուրքերը 11,000 ուժով յառաջացեր ու չորս անգամ յարձակում գործեր են, բայց ամէն անգամ ետ մղուեր են մեծ կորուստներով։ Մօտ 599 գերի բերուեր են, ութը թնդանօթ գրաւուեր է ու մեծ թիւով մեռեալներ կան, կ'րսուի։

Դեկտ․ 15 Ուր.– Մինչեւ երեկոյ թնդանօթի ու միթրայէօզի ձայները տեւեցին արեւելեան կողմէն։

Դեկտ. 16 Շբ.- Թնդանօթի ձայները հեռուներէն կը լսուէին, որով յայտնի է՝ թէ թուրքերը ետ մղուած էին արեւելեան ու հիւսիսային կողմէն։ Ռամալլան երէկ գրաւուեր է, իսկ Երիքով դեռ կը մնայ Թիւրքերու ձեռքը։ Քանի մը օր առաջ վերջիններուս գրաւուելուն լուրը ստոյգ

Դեկտ. 17 Կիր.- Հեռուէն թնդանօթի խուլ ձայներ։ Քաղաքապետ Հիւսէյին Սէլիմ էֆ. մեռաւ։ Այսօր Երիքով գրաւուեր է։ Դեկտ. 18 Բշ.- Բեթղեհէմի եկեղեցւոյն

տարեկան մեծ աւելը տեղի ունեցաւ, այդ առթիւ առտուն կանուխ գացի, կէսօրէ յետոյ վերադարձայ։ Յառաջագոյն Վանքի կողմէ խնդիր տրուած էր՝ Երուսաղէմի զին. կառավարչին, որ թոյլ չտրուի ՅոյնԵրու ոտնձգութեան, որոնք նախընթաց տարիներ տեղի կ'ունենային Օսմ․ Կառավարութեան թոյլտուութեամբ։ Պատասխանուեցաւ՝ թէ պատերազմական վիճակի զրաղումները չեն թողուր Ս. Տեղեաց խնդիրները նկատի այս տարի այ թող րստ աunlibjnı, ռաջնոյն կատարուի, հայbրը բողոքեն, խնդիրը յատուկ յառաջիկային այդ ուսումնասիրութեան նիւթ կ'րյյայ։ Այդպէս ալ եղաւ։

Դեկտ. 19 Գշ.- Եւրոպացւոց Նոր Տարւոյն առթիւ այցելութիւններ տուինք քաղաքիս զինուորական կառավարչին եւ Ֆրանսացի գոմիւսէր Մ. Բիքօին։

Դեկտ. 20 Դշ.- Թնդանօթի ձայները գրեթե հեռացան, միայն դունուրեք հեռաւոր խուլ ձայներ կու գան։ Երուսաղեմն ա՛լ մեկուսացաւ պատերազմական գօտիեն, որով առիթ չպիտի ունենանք պատերազմի մասին մեր յիշատակարանը շարունակել օրը օրին։ Պիտի բաւականանանք յետ այսու կարեւորները միայն արձանագրելով։

Դեկտ. 22 Ուր.- Լուսարարապետի սենեակը ժողովքի հրաւիրուեցան Ստեփանոս եւ Դանիէլ Արքեպիսկոպոսներ, Մկրտիչ եւ Գիւտ Եպիսկոպոսներ, Դաւիթ, Եղիա, Ղեւոնդ, Թովմաս, Եզնիկ, Մեսրոպ (տողերուս գրողը) եւ Երուանդ Վարդապետներ կաթողիկոսական անուան յիշատակութեան խնդրոյն վրայօք խորհրդակցելու։ Միաձայնութեամբ ընդունուհցաւ Ամհնայն Հայոց Տ. Գէորգ Կաթողիկկոսի յիշատակումը։ Եղիա, Ղեւոնդ, Եզնիկ եւ Թովմաս Վարդապետները պնդեցին, որ Սահակ Կաթողիկոսի անունն ալ յիշատակուի յետ Ընդհ. Հայրապետի՝ իբրեւ Կաթողիկոս Պատրիարք Երուսաղէմի։ Մնացեայք հակառակը պնդեցին եւ պահանջեցին, որ Օսմ. Տէրութեան՝ պետական հարուածով միւս Աթոռներուն վերջ տալով ընտրած եւ պարտադրած կաթ. Պատրիարքի անուան յիշատակումը հարկ է դադրի Եւ ըստ առաջնոյն յետ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պէտք է յիշատակուին Հանգ․ Յարութիւն Պատրիարք Երուսաղէմի եւ Զաւէն Պատրիարք կ. Պոլսոյ։ Օրինական եւ իրաւական փաստեր dbnoh mbumytmh phpnibguli unuş պաշտպանութեան համար։ Յետ երկար ու թեր ու դէմ վիճաբանութեան, միջին եզր մը գտնելու համար, եկան հետեւեալ եզրակացութեան.- Միայն յի**շատակել** Ընդհանրական Հայրապետի անունը. իսկ Սահակ Կաթ.ի յիշատակութեան խնդիրը վիճելի թողուլ։ Ըստ այսմ շրջաբերականներ ղրկուեցան ըստ պատկանելոյն։

Դեկտ. 23 Շթ.- Աթոռի տօնին առթիւ ժամարարն էր Դանիէլ Արքեպս ։ Մէկուկէս տարուան դադարումէ վերջ Ս. Պատարագի մէջ յիշատակուեցաւ միայն Տ. Գէորգ Կաթողիկոս, ինչ որ ընդհանուր գոհունակութիւն եւ ուրախութիւն պատճաոեց։

Դեկտ. 24 կիր.- Յունաց Ծննդեան տօնին առթիւ գացի Բեթղեհեմ։

Դեկտ. 25 Բշ.- Վերադարձայ։

(շարունակելի)

ՍԻՈՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՐԵԿԱՑԻՆ ԵՒ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ

(Հատուած "Գրիգոր Նարեկացի. Բանաստեղծական Արուեստը" անտիպ ուսումնասիրութիւնից)

«Լինելութիւն է սկիզբն ապականութեան, եւ ապականութիւն դարձեալ անդրէն է սկիզբն լինելութեան»։

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ

Ա. Հայաստանի հասարակական-քաղաքական դրութիւնը եւ մշակոյթը 10-րդ դարում

ժողովրդի պատմութեան մէջ Zui 10-րդ դարը գրաւում է առանձնակի տեղ։ Դա բացառիկ բարենպաստ ժամանակաշրջան tp hasutu bnhnh հասարակական – քաղաքական bi տնտեսական լարաբերութիւնների, այնպէս գրական-մշակութային Ł1 կեանքի ասպարէզում։ Հայաստանը թեւակոխել էր զարգացման նոր փուլ։ Ընդհանուր վերելքն սկսուել էր 9-րդ դարի երկրորդ կէսից եւ շարունակուեց մինչեւ 14-րդ դարի առաջին կէսը։ Արդի հայ պատմագիտութեան պարբերացմամբ՝ դա Հայաստանի զարգացած աւատատիրութեան շրջանն t:(1)

Վերելքի սկիզբը կապուած tη պատմա-քաղաքական uh hun 2np իրադարձութեան հետ։ Թօթափելով արաբական տիրապետութեան լուծը՝ հայ ժողովուրդը վերականգնեց իր պետական անկախութիւնը։ 885 թ. Բագրատունիների ազդեցիկ տոհմը ստեղծեց Հայոց Թագաւորութիւնը, որը գոյատեւեց մինչեւ 11րդ դարի կէսը։ Բագրատունիների հեռամէտ պայքարը՝ ստեղծել համահայկական կենտրոնացուած ուժեղ պետութիւն, դժբախտաբար, չպսակուեց յաջողութեամբ։

digitised by

Աւելի ուժեղ գտնուեցին միջիշխանական հակամարտութիւնները։ 908 թ. Արծրունիները ստեղծեցին Վասպուրականի թագաւորութիւնը, որը Բագրատունիների թագաւորութեանը զուգահեռ՝ պահպանուեց աւելի քան մէկ հարիւրամեակ։

Նոյն 10-րդ դարում առաջացան Կարսի, Սիւնիքի, Տաշիր-Ձորագետի մանր թագաւորութիւնները, որոնք էլ աւելի խորացրին Երկրի քաղաքական մասնաէր բացում տուածութիւնը։Դա դուռ վերահաս աղէտների համար, սակայն վերքը տաք էր, Եւ Երկիրը չէր նախազգում գալիք վտանգը։ Հայաստանը բարգաւաճում էր տնտեսապես։ Եւ որքան էլ ժամանակի պատմագիր Յովհաննէս Դրասխանակերտցին բանաստեղծօրէն գծած լինի Հայաստանի համայնապատկերը, նշմարտացի է mil ujunchuunbpa, ընդհանուր առմամբ։ «Իսկ աշխարհիս Հայաստանեայց, - գրում է նա - յաւուրսն այց արարհալ տհառն հւ յայնոսիկ պատսպարեալ եւ յաջողեալ ի բարութիւնս, բնակեցան իւրաքանչիւր ոք ի ժառանգութիւնս իւրեանց եւ սեպհականեալ զերկիր՝ տնկեցին այգիս եւ արմատացուցին րիւրաստանս ձիթենեաց եւ պարտիզաց. A.R.A.R.@

հերկեցին հերկս արտաքոյ փշոց եւ կթեցին պտուղս հարիւրաւորս. զեղան շտեմարանք ցորենոյ ի ժամանակի լրութեան հնձոց. յան գուրք գինւոյ ի կութս այգեստանեայց, եւիրինք ցնծութիւն զգեցան, զի բազմացան ի նմա արտտականք անդեայք արջառոց եւ հօտք ոչխարաց։ Եւ գլխաւոր նախարարք մեր յապահովացեալք եւ հանգուցեալք ի հինից ասպատակաց՝ շինէին եկեղեցիս վիմարդ հաստահեղոյս ձուլեալ կրով՝ ի մենաստանս եւ յաւանս եւ յագարակս»(2)։ Հայաստանի տնտեսական բարգա-

ւանմանը մեծապէս նպաստում էր տարանցիկ առեւտուրը։ Քաղաքներում ծաղկում էր արհեստագործութիւնը։ Նրա արտադրանքը լաւ վարկ ու պահանջարկ ունէր միջազգային ապրանքաշրջանառութեան մէջ։ Կուտակւում եւ ուռնանում էր վաշխառուական դրամագլուխը։ Բարենպաստ էր նաեւ միջազգային դրութիւնը։ Բիւզանդիան զգալիօրէն թուլացել էր արաբների դէմ մղած պատհրազմնհրից։ Արաբական խալիֆաթն կ իր հերթին կորցրել էր երբեմնի հզօրութիւնը։ Խաղաղութիւնը հնարաւորութիւն էր ընձեռել հայ ժողովրդին բռնելու վերելքի ուղին։ Ըստ Հ. Մանանդեանի՝ 10-րդ դարի Հայաստանի քաղաքներն աւելի բազմամարդ էին, քան նոյն դարի եւրոպական քաղաքները (3)։ Մ. Աբեղեանի հակիրճ բնորոշմամբ՝ «Դա մեր ֆեոդալիզմի ամենաբարեբախտ շրջանն t»(4):

Տնտեսական բարգաւաճման հիման վրայ վերելք է ապրում հայ մշակոյթը։ Ջարթօնքն ամենից առաջ դրսեւորուեց ճարտարապետութեան մէջ։ Հայկական ճարտարապետութիւնը, որի զարգացման ընթացքն ընդհատուել էր արաբական տիրապետութեան տարիներին, վերադարձաւ իր նախահիմքերին, երկնելով նոր յղացումներ՝ ոճա–կառուցողական

նոր յատկանիշներով։ Վանականութիւնը յարգի էր, եւ ամենուր կառուցւում են համալիրներ, եկեղեցիներ, տաճարներ, կրթա-մշակութային կենտրոններ։ Դարի նշանաւոր կառոյցներից էին Սանահինի եւ Հաղբատի վանքերը՝ Գուգարքում. Աղթամարի Ս. Խաչ տաճարը՝ կառուցուած 915-921 թթ. որի ճարտարապետն էր Մանուէլը՝ «այր լի իմաստութեամբ եւ զօրաւոր ի գործս իւր»(5), ինչպէս վկայում է ժամանակակից պատմագիրը։ Անիի Մայր տաճարը՝ աւարտուած 1001թ., որի ճարտարապետն էր մեծահամբաւ Տրդատը․ Արգինայի տաճարը, ուր փոխադրուեց կաթողիկոսարանը. Կարսի տաճարը, Եւ այլն:

Նշանաւոր այդ կառոյցներից էր նաեւ Նարեկավանքը, որը գտնւում էր վասպուրականում, վանայ լճի հարաւային ափին։ Վանքի կառուցման ստոյգ թուականը յայտնի չէ։ Ենթադրւում է, որ կառուցուել է Անանիա Մոկացի կաթողիկոսի /941-965/ գահակալութեան առաջին տարիներին, ինչպէս կարելի է մակաթերել Ստեփանոս Տարօնեցւոյ վկայութիւնից․ «յայսմ ժամանակիս շինեցաւ Նարեկ ի Ռշտունեաց գաւառին»(6)։ Վանքի հիմնադիրը եւ առաջնորդը եղել է ականաւոր փիլիսոփայ, թանաստեղծ եւ մանկավարժ Անանիա Նարեկացին։

Գիտութեան եւ արուեստի մենաշնորհը գտնւում էր հոգեւորականութեան ձեռքին։ Ահա թէ ինչու դարի առաջադիմութիւնը ժամանակի պատմագիր Ստեփանոս Տարօնեցին ամենից առաջ տեսնում է վանականութեան եւ վանքերի բազմացման մէջ։ «Յայսմ ժամանակի, -գրում է նա- ծաղկեալ պայծառանայր կարգ կրօնաւորական հանդիսից յաշխարհիս Հայոց» (7)։ Դարի գիտուն եւ հռչակաւոր եկեղեցականների թիւը փոքր չէր, եւ Տարօնեցին անուն առ անուն յիշատակում է ոմանց՝ ժլատ, բայց միշտ դրական բնութագրմամբ։ Դարի այդ նշանաւոր մարդկանցից էին նաեւ Խոսրով Անձեւացին եւ Անանիա Նարեկացին։ Առաջինը Գրիգոր Նարեկացու հայրն էր, յայտնի մատենագիր եւ բարձրաստիճան հոգեւորական, երկրորդը Գրիգոր Նարեկացու ուսուցիչն էր, որին Տարօնեցին անուանում է «փիլիսոփայն մեծ»(8), Ուխտանէսը՝ «տիեզերական վարդապետ» եւ «հռչակաւոր հռետոր»(9), Գրիգոր Նարեկացին՝ «հոգեզարդ եւ մտավարժ փիլիսոփայ»(10)։

10-րդ դարում գրականութիւնը հասաւ բարձր մակարդակի։ ԹէԵւ նոր մտքերն ու զգացումները երեւան էին գալիս դեռեւս միջնադարեան գաղափարախօսութեան հիմքի վրայ եւ Gnu կրօնա-աստուածաբանական հէնքին միահիւսուած, սակայն մի կողմից խորանում էր գրականութեան աշխարհականացման, միւս կողմից՝ նրա հոգեբանական նշմարտացիութեան ձգտումը: Վերացականութիւնն աստիճանաբար ընկրկում էր կենդանի զգացմունքների առաջ։ Գրականութիւնը ստեղծագործական լիցք եւ աւիշ էր վերցնում ժողովրդական բանահիւսութիւնից։ Ազատագրութեան համար մղած իր դարաւոր պայքարի ոգին հայ ժողովուրդը մարմնաւորեց «Սասնայ ծռեր» դիւցազներգութեան մէջ։ Նրա շունչը տեւաբար թեւածել է 10րդ դարի հոգեւոր մթնոլորտի, կեանքի ու կենցաղի վրայ։ Գրականութիւնը հարստանում է նոր ժանրերով, ընդլայնւում է գրական կապերի ոլորտը։ Դարի թանաստեղծական արտադրանքի բարձրակէտը Գրիգոր Նարեկացու ստեղծագործութիւնն է, որը որքան ինքնատիպ էր ու նոր, նոյնքան էլ մնաց բարձր եւ անկրկնելի։

Պատմագրութիւնը, որ գրեթէ մարել

էր արաբական տիրապետութեան դարերին, 10րդ դարում տուեց ականաւոր դէմքեր՝ Յովհաննէս Դրասխանակերտցի, Թովմա Արծրունի, Ստեփանոս Supolibah /Ասողիկ/, Ուխտանէս եւ ուրիշներ։ Եղել են գործեր, որոնք, դժբախտաբար, չեն հասել մեզ։ Պատմագրութիւնը բացայայտ յենւում եւ ստեղծագործաբար շարունակում էր 5րդ դարի աւանդութիւնները։ Մի կողմից հետեւում էին Մովսէս Խորենացու՝ ստուգութեան ձգտող քննական սկզբունքներին, միւս կողմից՝ նախապատուութիւն էին տալիս Փաւստոս Բուզանդի աւանդոյթին՝ ժողովրդական qpnjg6bph, վէպերի եւ աufbph վերարտադրութեանը։ Ուրուագծուում է նաեւ ժամանակագրութեան ժանրը, որն ուրոյն գծերով հարստացնում է պատմագրութիւնը։ Պատմագրութեան մէջ լայն արձագանք է գտնում ազգային կեանքի վերելքի փառաբանութիւնը, կենտրոնական ուժեղ թագաւորութեան ստեղծման գաղափարը, կենտրոնախոյս ձգտումների եւ միջիշխանական գժտութիւնների քննադատութիւնը։ Պատմագիրները թողել են պատմական արձակի ընտիր էջեր, որոնք վկայում են գրողի, նրանց վառ տաղանդի հւ վարպետութեան մասին։

Զարթօնքը զգալի էր նաեւ փիլիսոփայութեան բնագաւառում։ Կար երկու հոսանք։ Մէկը՝ նորպլոտականութեան այն ուղղութիւնն էր, որ շիթ առ շիթ աւիշ էր տալիս 5-6րդ դարերի հայ փիլիսոփայական մտքին, միւս թեւը յարում էր ռացիոնալեզմին։ Նոր պլատոնականութիւնը 10րդ դարում սերտաճում է միստիցիզմի հետ, ստեղծագործական լիցքեր ստանալով Դիոնիսիոս Արեոպագացու՝ երկնային նուիրապետութեան եւ աստծու՝ իբրեւ յաւիտենական անփոփոխ լոյսի արտահեղման մասին աստուածաբանական ուսմունքից։ Թէ Անանիա Նարեկացին եւ թէ՛ Գրիգոր Նարեկացին յարում էին նոր պլատոնականութեան այս թեւին։ Ջարգացման հեռանկարը, սակայն, կապուած էր բնափիլիսոփայութեան ուղղութեան հետ, որ հանդէս եկաւ փոքրինչ աւհլի ուշ։

Դարի մշակութային կեանքին համընթաց էր արուհստը։ Քանդագործութիւնը եւս, ի տարբերութիւն գրեթէ անմարմին վերացարկման, որոշակի տեղ է տալիս մարդկային հոգերանութեանը։ կերպարները բացայայտւում են մարդկային ճակատագրերի իմաստաւորման տեսանկիւնից։ Թէեւ մարդու հայեացքն ուղղուած է Երկնքին, բայց նրա դէմքին զգայի է bրկրային տառապանքը։ Անհատակութիւնն ուղի է բացում հոգեկան ապրումների դրսեւորման մէջ։ Սա գեղագիտական այն պահանջն էր, որ յատուկ էր դարի արուbստին։ Այսպէս էր որմնանկարչութեան bı Gubi մանրանկարչութեան մէջ։ Գեղագիտական այդ պահանջն էլ մղում էր հասնելու դիմանկարային նմանութեան վերարտադրմանը։ Թովմա Արծրունու հաւաստմամբ՝ Աղթամարի պատկերա– քանդակներից Գագիկ Արծրունու պատկերաքանդակը նման է բնորդին՝ Գագիկ թագաւորին:(11)։

Քանդակագործութեան միւս նորութիւնը թեմատիկ բազմազանութիւնն էր։ Աւելի նուրբ ձեւեր են ընդունում բուսական զարդաքանդակները, մեծ տեղ են տալիս սիւժետային, հիմնականում ^{աստուածա}շնչական, պատկերաշարին։ Աշխարհիկ տարրերն աստիճանաբար թափանցում են կրօնական թեմաների մէջ։ Աղթամարի տաճարի քանդակների մէջ, յատկապէս որթատունկի գօտում, Սիրարփի Տէր-Ներսէսեանի դիտարկման համաձայն, արդէն «տեղտեղ աշխարհիկ տարրերը միահիւսւում են կրօնական տեսարաններին»(12)։

Մանրանկարչութեան մէջ bru ձեւաւորուեցին երկու հիմնական ուղղութիւններ՝ գծանկարչական եւ գեղանկարչական։ Գծանկարչական ուղղութիւնը յենւում էր ժողովրդական աւանդոյթների վրայ, գեղանկարչականը, որ կոչուած էր բաւարարելու հոգեւոր եւ աշխարհիկ տէրերի գեղարուեստական պահանջմունքներն ու ճաշակը, ձգտում էր վառ գոյների եւ նրբագեղ ձեւերի օգտագործմամբ հասնել հոգեբանական շլացնող ներգործութեան։ Թէեւ 10րդ դարից պատկերազարդ քիչ մատհաննհը հն հասհլ մեզ, բայց ակնհրհւ է ծաղկողների գեղագիտական եւ ոճական սկզբունքների տարբերութիւնը։ Նշանաւոր յուշարձաններից է Էջմիածնի Աւետարանը /ՄՄ, ձbռ. նո. 2374/`պատկերազարդուած 989թ., որը դասւում է այդ արուծստի համաշխարհային գյուխգործոցների շարքը։ Այսպիսով, 10րդ դարի տնտեսական

քաղաքական ընդհանուր վերելքը bi պայմաններ ստեղծեց արուեստի, գրականութեան եւ գիտութեան զարգացման danud համար։ Կեանքը էր հետաքրքրութիւնների նոր ոլորտներ։ Փոխւում էին մարդկանց հայացքներն ու պատկերացումները, բախւում էին հին ու նոր գաղափարները, ուրուագծւում էին տարբեր ճաշակները։ Մի կողմից աշխարհիկ ծարաւ՝ միահիւսուած hwanjfabph փարուԵլու մարդկային Երկրայինին կողմից՝ ցանկութիւնների հետ, միւս ypolimփարուելու Երկնայինին ձգտում՝ միահիւսուած միստիկական figabini, fugnibini, անապատ ներհայեցութեամբ բարոյապէս մաքրուելու փրկութեան հասնելու bı hnqnı քրիստոնէական հաւատի հետ։ Մի կողմից գոյութիւն ունեցող կարգերի կայունացման

ջանք ու bռանդ, միւս կողմից՝ այդ կարգերի բարեփոխման ճիգ ու պայքար։ Եւ ինչպես միշտ՝ հակասութիւնների միասնութիւն Եւ հակադրութիւնների պայքար, առանց որոնց չկայ շարժում Եւ զարգացում։ Գրականութիւնը, ինչպես միշտ, կոչուած էր արձագանքելու իրականութեան մէջ տեղի ունեցող այդ տեղաշարժերին։

(Ծարունակելի)

ԱՐՇԱԼՈՅՍ ՂԱԶԻՆԵԱՆ

ԱՂԲԻՒՐՆԵՐ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻԻՆՆԵՐ ՆԱԽԱԲԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԱՍ ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ ՆԱՐԵԿԱՑԻՆ ԵՒ ՆՐԱ ԺԱՄԱՆԱԿԸ

Ա. Հայաստանի հասարակական-քաղաքական դրութիւնը եւ մշակոյթը 10-րդ դարում

 Sbu' Հայ ժողովրդի պատմութիւն, Հ. 3, Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում /9-րդ դ. կէսերից մինչեւ 14-րդ դ. կէսերը /, Երեւան, 1976, էջ 7 եւ հտեւ.: Տես նաեւ՝ Լ. Բարայան, Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի պատմութեան ուսումնասիրութիւնը սովետահայ պատմագիտութեան մէջ, Երեւան, էջ 189 եւ հտեւ.:

2. Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 198-199։

3. Տես՝ Հ. Մանանդեան, Հայաստանի քաղաքները 10-11րդ դարերում, Երեւան, 1940, էջ 5-10։

4. Մ. Արեղեան, Երկեր, Հ. Գ., Երեւան, 1968, էջ 563:

5. Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն Արծրունեաց տան, բնագիրը հրատարակութեան պատրաստեց, աշխարհաբար թարգմ. եւ ծանօթագրեց Վ. Մ. Վարդանեան, Երեւան, 1985, էջ 460:

 Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերրուրգ, 1885, էջ 174:

7. Unja unbijnia, to 173:

8. Unja unbancat, by 178:

9. Ուխտանհս հպիսկոպոսի Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 8 հւ 15։

 10. Թովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 463:
11. Ս. Տէր-Ներսէսեան, Հայ արուեստը միջնադարում, Երեւան, 1975, էջ 91:

12. Տես՝ Լ. Ա. Դուռնովո, Հայկական մանրանկարչութիւն, Երեւան, 1967, էջ 201։ 1/2 վերծր է հինո ի ղծրոնց էրեշտակաց անդդ մարդկան կենդան հետոց մեծ ան, ցուցանենքը, Բիրբեզ բնակ էրերեն անտառած ուվ հաննե ցին մանակի՞ ղծ, րոնցն երան հետղ, անդդ մարդ, Բիգբեզ մայր էմ մանու էլի, մարդարէին յա, ռաջ դաշակեալ, անդդ մարդ,

The I will la Lungh Simplind with Swiper

υώστώς, δηζυτώς η η ηώτωμα 2 ισμύ ωτημαστιτής μουρτώτη η ημέστη, δης, Υβ τωταμηρη ημουρτ ατη μου ητημουρτ, δης,

540

92

563

545

ամենառելի լու Զանկու 36.

Гир инсрр. 41.

ՍԻՈՆ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

Երկուշարթի, 27 Յուլիս 1992ին Երեւանի Ջուարթնոց օդանաւակայանը ժամանեցինք խումբ մը երիտասարդ–երիտասարդուհիներով, այնտեղեն ուղեւորուելու համար դէպի Ապարան ы Չարենցաւանի շրջանները՝ քարոզչական աշխատանքի առաքելութեամբ։ Մեզի կընկերակցէին նաեւ քահանայ հայրեր՝ Տ. Գարեգին Ա. Քհնյ. Գասպարեան, Արեւելեան Բեմէն ու Տ. Մեսրոպ Քենյ. Սարաֆեան, Արեւմտեան Թեմէն։ Երիտասարդներու խումբը՝ կազմուած Գանատայի եւ Ամերիկայի Արծւելեան Թեմերու անդամներէն, իր մէջ ունէր նաեւ հինգ սարկաւագներ, որոնցմէ **Երեքը կը պատրաստուին հոգեւոր ծա**– ռայութեան, Ս. Ներսէս Աստուածարանական Ընծայարանին մէջ։

Իր տեսակին մէջ իւրայատուկ այս առաքելութիւնը կը հովանաւորուէր Ս. Ներսէս Աստուածաբանական Ընծայարանին կողմէ։

Երեքչաթթի, 28 Յուլիս առաւօտեան ժամը 10ին խումբը իր առաջին այցելութիւնը կատարեց Երեւանի Առաջնորդարան, ուր Գարեգին Եպիսկոպոս Ներսեսեան, Արարատեան Հայրապետական Թեմի Առաջնորդական փոխանորդը, թարի գալստեան իր խօսքի աւարտին ներկայացուց խումբին համար նախատեսուած ծրագրի ընթացքը։ Աւելի ուշ, երեկոյեան ժամը 5ին, Ս. Ներսեսի խումբը հանդիպում ունեցաւ Երեւանի Երիտասարդաց խումբի անդամներուն հետ եւ ապա ուղեւորուեցանք Ապարան, ուր մեզ դիմաւորեցին Ապարանի հոգեւոր հովիւ՝ Տ. Մկրտիչ քահանան ու Շրջկենտրոնի նախագահ՝ Գրն. Մուրատ Պօղոսեանը։

Չորհքշարթի, 29 Յուլիս առաւօտհան տեղի կ'ունենայ ժամերգութիւն տեղւոյն Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ։ Աղօթքի այս պահը չափէն աւելի ոգեւորող ու ներշնչող էր։ Շրջանի բնակիչները, մեծեր եւ փոքրեր, եկած էին միանալու մեզ իրենց աղօթքով ու շարականներու երգեցողութեամբ։ Թէեւ եկեղեցին աւերակ վիճակի մըն է մատնուած,

այսուհանդերձ, անձնական փորձով պէտք է հաստատել տեղւոյն ժողովուրդի հաւատքի արտայայտութիւնը։ Ժամերգութենէն անմիջապէս յետոյ, անակնկալօրէն, տունէ-տուն անցնելով, կատարեցինք տնօրհնէքներ։ Ժողովուրդին հոգեւոր կեանքին ծարաւը ակնյայտ էր․ անոնց մէջ կը տեսնէինք հաւատքի անմար կրակը։ Իւրաքանչիւր տան օրհնութեան աւարտին, խօսեցանք աղօթքի կարեւորութեանը մասին, Աւետարանի փրկարար դերի մասին, հայ եկեղեցւոյ մասին, **Եւլն.։ Կէսօրէն ետք բարձրացանք Ապարանի** յուշահամալիր, ուր կատարեցինք հոգեհանգստեան պաշտօն Արցախի նահատակներէն Ռաֆիկի հոգւոյն համար։ Այնուհետեւ շարունակեցինք տնօրհնէքները, եւ երեկոյեան ժամը 6ին Քաղաքի գլխաւոր սրահին մէջ կատարեցինք ժամերգութիւն, ի ներկայութեան աւելի քան չորս հարիւր հաւատացեալներու։ Ժամերգութեան աւարտին քարոզեցինք, նիւթ ունենալով "Պիտի սիրես fnı Stp Uumnımön fnı mupnny hnahnı, fnı ամբողջ սրտով ու ամբողջ գօրութեամբդ։ . . . Պիտի սիրես ընկերդ քու անձիդ պէս"։ Երեկոյեան լիապես յագեցած մեր ժողովուրդի հաւատքի կեանքեն, կարճ աղօթքի պահ մը ունենալէ ետք, վերադարձանք մեր հիւրընկալներուն բնակարանները։

Հինգշարթի, 30 Յուլիս առաւօտեան խումբը ուղեւորուեցաւ Եղիպատրուշ։ Տեղւոյն Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ կատարեցինք առաւօտեան ժամերգութիւն, որմէ յետոյ կատարեցինք ընտանեկան այցելութիւններ ու տնօրհնէքներ։ Այս անգամ տնօրհնէքներու ընթացքին կատարեցինք նաեւ աւետարանական ընթերցումներ։ Կեսօրէ ետք այցելեցինք գաղթականներու կացարանը, ուր թիւով շուրջ 400 հայեր ապաստան էին գտած Պաքուէն, Սումկայթէն եւ այլ վայրերէ։ Հանդիպումը չափեն աւելի յուզիչ էր։ Գաղթականները գրեթէ ամէն առումով կը գտնուէին անմխիթար վիճակի մէջ։ Առանձնակի պահերու ընթացքին

ՍԻՈՆ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

Երկուշարթի, 27 Յուլիս 1992ին Երեւանի Ջուարթնոց օդանաւակայանը ժամանեցինք խումբ մը երիտասարդ–երիտասարդուհիներով, այնտեղեն ուղեւորուելու համար դէպի Ապարան ы Չարենցաւանի շրջանները՝ քարոզչական աշխատանքի առաքելութեամբ։ Մեզի կընկերակցէին նաեւ քահանայ հայրեր՝ Տ. Գարեգին Ա. Քհնյ. Գասպարեան, Արեւելեան Բեմէն ու Տ. Մեսրոպ Քենյ. Սարաֆեան, Արեւմտեան Թեմէն։ Երիտասարդներու խումբը՝ կազմուած Գանատայի եւ Ամերիկայի Արծւծլծան Թեմերու անդամներէն, իր մէջ ունէր նաեւ հինգ սարկաւագներ, որոնցմէ **Երեքը կը պատրաստուին հոգեւոր ծա**– ռայութեան, Ս. Ներսէս Աստուածարանական Ընծայարանին մէջ։

Իր տեսակին մէջ իւրայատուկ այս առաքելութիւնը կը հովանաւորուէր Ս. Ներսէս Աստուածաբանական Ընծայարանին կողմէ։

Երեքչաթթի, 28 Յուլիս առաւօտեան ժամը 10ին խումբը իր առաջին այցելութիւնը կատարեց Երեւանի Առաջնորդարան, ուր Գարեգին Եպիսկոպոս Ներսեսեան, Արարատեան Հայրապետական Թեմի Առաջնորդական փոխանորդը, թարի գալստեան իր խօսքի աւարտին ներկայացուց խումբին համար նախատեսուած ծրագրի ընթացքը։ Աւելի ուշ, երեկոյեան ժամը 5ին, Ս. Ներսեսի խումբը հանդիպում ունեցաւ Երեւանի Երիտասարդաց խումբի անդամներուն հետ եւ ապա ուղեւորուեցանք Ապարան, ուր մեզ դիմաւորեցին Ապարանի հոգեւոր հովիւ՝ Տ. Մկրտիչ քահանան ու Շրջկենտրոնի նախագահ՝ Գրն. Մուրատ Պօղոսեանը։

Չորհքշարթի, 29 Յուլիս առաւօտհան տեղի կ'ունենայ ժամերգութիւն տեղւոյն Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ։ Աղօթքի այս պահը չափէն աւելի ոգեւորող ու ներշնչող էր։ Շրջանի բնակիչները, մեծեր եւ փոքրեր, եկած էին միանալու մեզ իրենց աղօթքով ու շարականներու երգեցողութեամբ։ Թէեւ եկեղեցին աւերակ վիճակի մըն է մատնուած,

այսուհանդերձ, անձնական փորձով պէտք է հաստատել տեղւոյն ժողովուրդի հաւատքի արտայայտութիւնը։ Ժամերգութենէն անմիջապէս յետոյ, անակնկալօրէն, տունէ-տուն անցնելով, կատարեցինք տնօրհնէքներ։ Ժողովուրդին հոգեւոր կեանքին ծարաւը ակնյայտ էր․ անոնց մէջ կը տեսնէինք հաւատքի անմար կրակը։ Իւրաքանչիւր տան օրհնութեան աւարտին, խօսեցանք աղօթքի կարեւորութեանը մասին, Աւետարանի փրկարար դերի մասին, հայ եկեղեցւոյ մասին, **Եւլն.։ Կէսօրէն ետք բարձրացանք Ապարանի** յուշահամալիր, ուր կատարեցինք հոգեհանգստեան պաշտօն Արցախի նահատակներէն Ռաֆիկի հոգւոյն համար։ Այնուհետեւ շարունակեցինք տնօրհնէքները, եւ երեկոյեան ժամը 6ին Քաղաքի գլխաւոր սրահին մէջ կատարեցինք ժամերգութիւն, ի ներկայութեան աւելի քան չորս հարիւր հաւատացեալներու։ Ժամերգութեան աւարտին քարոզեցինք, նիւթ ունենալով "Պիտի սիրես fnı Stp Uumnımön fnı mupnny hnahnı, fnı ամբողջ սրտով ու ամբողջ գօրութեամբդ։ . . . Պիտի սիրես ընկերդ քու անձիդ պէս"։ Երեկոյեան լիապես յագեցած մեր ժողովուրդի հաւատքի կեանքեն, կարճ աղօթքի պահ մը ունենալէ ետք, վերադարձանք մեր հիւրընկալներուն բնակարանները։

Հինգշարթի, 30 Յուլիս առաւօտեան խումբը ուղեւորուեցաւ Եղիպատրուշ։ Տեղւոյն Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ կատարեցինք առաւօտեան ժամերգութիւն, որմէ յետոյ կատարեցինք ընտանեկան այցելութիւններ ու տնօրհնէքներ։ Այս անգամ տնօրհնէքներու ընթացքին կատարեցինք նաեւ աւետարանական ընթերցումներ։ Կեսօրէ ետք այցելեցինք գաղթականներու կացարանը, ուր թիւով շուրջ 400 հայեր ապաստան էին գտած Պաքուէն, Սումկայթէն եւ այլ վայրերէ։ Հանդիպումը չափեն աւելի յուզիչ էր։ Գաղթականները գրեթէ ամէն առումով կը գտնուէին անմխիթար վիճակի մէջ։ Առանձնակի պահերու ընթացքին ունեցանք զրոյցներ, որոնցմէ իւրաքանչիւրը մէկը միւսէն աւելի ծանր կացութիւն մը կը ներկայացնէր։ Երեկոյեան ընթրեցինք Աստուածընկալ Եկեղեցւոյ բակին մէջ եւ վերադառնալով Ապարանի շրջկենդրոն, այնտեղ ունեցանք աղօթքի ու խոկման առանձնակի պահ մը։

Ուրբաթ, 31 Յուլիս առաւօտեան մեկնեցանք Ծենաւան, ուր նախ ful ժամերգութիւնը այցելեցինք գիւղի այն ընակիչներուն, որոնք վերջերս տեղի ունեցած դժբախտ պարագաներու բերումով դարձած էին սգաւոր։ Այնուհետեւ, ժամը 11ին, Ծենաւանի մշակոյթի տանը կատարեցինք առաւօտեան ժամերգութիւն եւ քարոզեցինք Եկեղեզի հասկացողութեան մասին։ ժամերգութեան աւարտին շարունակեցինք տնօրհնէքները, որու ընթացքին գիւղացիները հացի օրհնութեան արարողութիւնը կ՝ընդունէին որպէս սգահան արարողութիւն մը։ Կէսօրէն հտք Արագած գիւղի մշակոյթի տան մէջ կատարեցինք երեկոյեան ժամերգութիւն եւ քարոզեցինք։ Աւելի ուշ, խումբը վայելեց շրջանի հովիւ՝ Տ. Մկրտիչի հիւրասիրութիւնը, ուր եւ ունեցանք երեկոյեան աղօթքի ու խոկումի պահր։

Հակառակ վերեւի եւ այլ յարակից հաստատումներուն, «Չայնքաղ Շարական»ի առաջին երկու էջերուն վրայ՝ «Յօրինողք Ծարականաց» գլխակարգութեան ներքեւ, ժամանակագրական կարգով կը յիշատակուին հեղինակներու անուններ, իրենց յօրինած շարականներու վերնագրերով ու գրութեան թուականներով՝ 426-էն մինչեւ 1478։ Ինչ ալ ըլլան թանասիրական ճշդումներն ու վերապահումները, մենք գուրգուրանքով պիտի պահենք աւանդութեամբ մեզի յանձնուած թանկագին տեղեկատութիւնները անոնց մասին։

Հայ շարականները կ'ընդգրկեն գրական արժէք։ Կը յայտնաբերեն՝ լեզուի, ոճի, դասական նկարագրագեղ բառերու գործածութեան շնորհք եւ քերթողական թռիչք։ Կ'արժէ ընթեռնուլ ներամփոփ պահի մը ընթացքին Հռիփսիմեանց կոյսերու՝ «Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի . . .», եւ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ի Վիրապն Մտանելոյ՝ «Այսօր զուարճացեալ ցնծայ եկեղեցի . . .» շարականները, 34-ական տուները ամբողջութեամբ։

Հայ շարականները կը պարունակեն պատմական տուեալներ, կ՝անդրադառնան դէպքերու ու դէմքերու եւ կը հետեւին անոնց ընթացքին։ «Փարաւոն հանդերձ կառօք ընկղմեցաւ ի հոսանս ջուրց. եւ որդիքն Իսրայելի գնացին ընդ ցամաքն ի մէջ ծովուն» (Աւագ Օրհն. ԲԿ)։ Ակնարկութիւն՝ պատմական դէպքի մը։ Մին՝ տասնեակ մը օրինակներէն։

Հայ շարականները ուղեցոյցներ են հոգեւոր ապրումներու, աստուածամերձ կեանքի եւ քրիստոնէավայել կենցաղավարութեան հետապնդումերու։ Ծարականները աղօթքներ են, սրտի խորերեն Աստուծոյ հետ խօսակցութիւններ։

Հայ շարականները ուսումնարան են քրիստոնէական աստուածաբանութեան, որմէ կը յայտնաբերուին ընդհանուր եկեղեցւոյ քրիստոսաբանական ուսուցումներ եւ հայ եկեղեցւոյ դաւանաբանական սահմանումներ։ Ս. Խաչի, Ս. Հոգւոյն, Ս. Աստուածածնի, Ս. Յարութեան, Եկեղեցւոյ, եւայլն, նուիրուած շարականները կը պարունակեն առատ վկայութիւններ։

Ծարակնոցի վերջին էջերուն (507-513) զետեղուած են շարականներուն՝ բըծախնդրօրէն պատրաստուած ցուցակն ու էջահամարները։ Հետաքրքրական է որ 511-րդ էջին՝ առանձին կը հանգչի «Մեծացուսցէ»ներու ցանկ մը ութ ձայներով։ Զարմանալի է որ գլխաւոր ցանկէն կը պակսին՝ 414-422 էջերուն վրայ տեղադրուած կարճ շարականներ, գլխաւորաբար ստեղի «Մանկունք»ներ։ 512-րդ էջով կը տրուի «Չայնգիւտ» աղիւսակը. իսկ վերջին էջին, 513-րդ, կայ ցուցակը «Ցատուկ Աւուրց Հարցից եւ Մեծացուսցէից», առանձին էջահամարներով։ «Ձայնքաղ Ծարական»ը գանձատունն է՝ Հայաստանհայց Եկհղհցւոյ պաշտամունքի գոհարնհրուն, եւ հանդիսարանը՝ հայ մշակոյթի անկրկնելի ստեղծագործութիւններուն։

ԳՐԻԳՈՐ ՈՍԿԱՆԵԱՆ

ταγαγαν

9.2. Vap U/mit Spilling Suite In the unepp uneuguihuch. Sunpingupy but 1p inquil U. unneding. outthate a unit Fulituren jurnen Shiluplan " Uppenesen Uneulit. in oris "LE que I.P milliofig Tuplite nite Untrailie quan filite with up with prophiliting diagonaling program Shiling land to dop withmen blephingh, quiltighe populand fill op Swale. gine untine Supplift in wh alipille for Intin Int. in op state Bun unmpringly stop Sug 2ngconte por ungung tout i unge Steld in himning . June nep Steph. y to in "to dop puttof to Stingle 19from whyly Appen ginghi por phenillagt p sighting hogen op diappinguipy hat g glapithan. purt Oppenju

ՍԻՈՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԵՂԻՇԷ ՊԱՏՐԻԱՐՔ ՏԷՐՏԷՐԵԱՆԻ ՏԱՊԱՆԱՔԱՐԸ

Հանգուցեալ Եղիշէ Պատրիարք Տէրտերեանի տապանաքարի կառուցման համար նշանակուած յանձնախումբը (Լուսարարապետ Գեր. Տ. Դաւիթ Արք. Սահակեան, Ս. Փրկիչ Վանուց տեսուչ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Գալայնեան, եւ Հոգ. Տ. Գուսան Վրդ. Ալճանեան) իր աշխատանքը ամբողջացուց երեք տարբեր քանդակագործներէ ստացուած յատակագիծերեն մէկը ընտրելով, եւ հանգուցեալ Պատրիարքի գերեզմանին վրայ զետեղել տալով սեւ պազալթէ մարմարը, փորագրեալ գեղեցիկ գծագրութեամբ եւ արձանագրութեամբ։

Քրիստոսի Այլակերպութեան տօնին յաջորդ օրը, Սրբոց Յակոբեանց Տաճարին մէջ մատուցուած Սուրբ Պատարագէն եւ ազգիս հայոց համայն ննջեցելոց հոգիներուն համար կատարուած հոգեհանգստեան պաշտօնէն յետոյ, գլխաւորութեամբ Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր, Միաբանութիւնը եւ ժողովուրդը թափօրով եւ շարականներու

ՍՐԲԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

8nihu 22, 2npbf2upph, htuopt վերջ ժամը 4ին, Ամենապատիւ Տ. Թորգոմ Պատրիարքի հովանաւորութեամբ, Ժառանգաւորաց վարժարանի մեծ սրահին մէջ, բացումը կատարուհցաւ Ֆրանսահայ ծանօթ նկարիչ Արտաւազդ Պէրպէրեանի վերանորոգած կրօնական նկարներու։ Հոծ թազմութիւն մը ներկայ էր, ի միջի այլոց նաեւ օտարներ։ Պատրիարք Սրբազան հայրը, իր բացման խօսքին ute, շնորհաւորեց Պը. Արտաւազդ Պէրպէրեանը, իր մանրակրկիտ եւ տքնաջան աշխատանքին համար, որով տասնըութերորդ br տասնիններորդ դարերէն մեզի հասած նկարներ, վերստին կեանք ստացան իրենց խօսուն արտայայտութիւններով։Պատրիարք

Երգեցողութեամբ առաջնորդուեցան դէպի Սուրբ Փրկիչ։ Հանգուցեալ Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի գերեզմանին շուրջ հաւաքուած, խաչաձեւ ծաղկեպսակը զետեղուեցաւ Եւ Հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Սուրբ Աթոռոյ բոլոր Պատրիարքներու հոգւոց համար, եւ նոր զետեղուած տապանաքարի վրայ կատարուեցաւ հանգուցեալ Պատրիարքի Գերեզմանի կնքման օրհնութիւնը- «Օրհնեսցի եւ կնքեալ պահեսցի դամբարան եւ ոսկերք ծառայիս Աստուծոյ . . մինչեւ ի գալուստն Քրիստոսի»:

Նոյնպէս թափօրով Միաբանութիւնը վերադարձաւ Ժառանգաւորաց Վարժարանի փոքր սրահը ուր ըստ աւանդութեան «հոգեսուրճ» հրամցուեցաւ ներկաներուն։ Նոյն երեկոյին, միաբան Եպիսկոպոսներ եւ վարդապետներ իրենց ընթրիքը ունեցան Ամեն. Պատրիարք Սրբազանին հետ, Պատրիարքարանի բացօթեայ պարտէզին մէջ։

Սրբազանը ըսաւ թէ, պէտք է տէր կանգնինք մեր հոգեւոր եւ բարոյական արժէքներուն, որոնք անխորտակելի ժառանգն են հայ ժողովուրդին։

8ուցահանդէսին բացումը խթան մը հղաւ հայ եւ օտար արուեստասէրներու, որոնք իրենց յաճախակի այցելութիւններով, հայ արուեստին պատգամը փոխանցեցին իրենց շուրջիններուն։

Այսպես, Պր. Արտաւազդ Պերպերեան, հրաւիրուեցաւ Երուսաղեմի ձայնասփիւ– ռեն. Ելոյթ ունենալու վերոյիշեալ նկարներու կապակցութեամբ եւ տեղւոյս Ճերուսալեմ Ռիփորթ շաբաթաթերթի թղթակիցը եկաւ եւ ցուցահանդեսը լուսանկարեց, եւ յօդուած մը լոյս տեսաւ այս մասին։ ՍԻՈՆ

υկարներէն ոմանց նիւթերն են, Ս. Կոյս Աստուածածին եւ Յիսուս Մանուկը, Խաչէն Իջեցումը, Պատանքումը, Գրիգոր Լուսաւորիչ եւ Տրդատ Թագաւոր, Յիսուսի Մկրտութիւնը, Ս. Սարգիս, Ս. Գէորգ, Համբարձումը, Խաչելութիւնը, Յարութիւնը, եւլն:

Պր. Արտաւազդ Պէրպէրհան, Երուսաղէմ կը գտնուի նահւ Ս. Յարութհան Տաճարի նկարազարդման աշխատանք․ ներուն մասնակցելու իբրեւ Հ_{այոց} Պատրիարքարանի ներկայացուցիչ։

Ս. Յարութեան Տաճարի Գլխատր Գմբէթին նկարազարդումը, երեք համայնքներու՝ Հայերու, Յոյներու եւ Լատիններու Պատրիարքութեանց փոխադարձ համաձայնութենէն կախում ունի։

ԱՆՈՒՇԱՒԱՆ Ծ. ՎՐԴ. ԶՂՋԱՆԵԱՆ

80 ԱՄԵԱՅ ՆՈՒՊԱՐ ԱՐՍԷՆԵԱՆ ԿԸ ՍՏԱՆԱՅ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԿՈՆԴԱԿԸ

Նուպար Արսէնհան անդրանիկ զաւակն է դեղագործ Յակոբ Արսէնհանի եւ Տիկ. Հռութի, Ատապազար ծնած 1912 Յուլիս 29ին։ 1915ին, Բիւթանիոյ նահանգէն 500 հոգինոց տարագիր կարաւանէն, Տէր Զօրի մէջ ջարդուած, միայն ութ հոգի ազատեցան, շնորհիւ դեղագործ Յակոբ Արսէնհանի կատարած բուժումին զինուորական բանակի հիւանդ պետին , որուն անմիջական հրամանով ան Երուսաղէմ ղրկուեցաւ իբրեւ դեղագործ զինուորական հիւանդանոցին։

1992 Օգոստոս 2, Այլակերպութեան կիրակիի երեկոյին, Երուսաղէմի Քրիսմէս Հօթելի բացօթեայ շրջափակին մէջ, Տէր եւ Տիկին Նուպար եւ Սիրարփի(Գրագիրեան) Արսէնեաններու համալսարանական կրթու– թիւն ստացած եւ ամուսնացեալ երեք դուստրերը՝ Սօնա, Նորա եւ Արտա (իրենց ամուսիններով եւ զաւակներով՝ Տքթ. Եդուարդ Ադամեան Բարիզէն, Ճօրճ Քարմի Երուսաղէմէն, Ժագ էքմէքնbան Պէյրութէն), նաեւ Նուպարին Կրտսեր եղբայրը՝ Ժիրայր եւ Տիկինը (Գանատայէն) "Անակնկալ Տարեդարձը" կազմակերպեցին 80ամեայ եւ իր հօր գործը ցարդ հաւատարմօրէն շարունակող Նուպար Արսէնհանին, կոկիկ յայտագիրով եւ հիւրամեծարութեամը։

Երեք հարիւր հրաւիրեալներու կողմէ, բացի երախտագէտ զաւակներու արտայայտած զգացումներէն, Հայ եւ օտար բարեկամներ (Անդրանիկ Պագրճեան՝ "Ճինիշեան Դարմանատան Յանձնախումբի" եւ Հայերուն անունով, Ալպէռ Աղազարեան՝ ազգային շարժումներու, քաղաքի մտաւորականներու, եւ նուիրեալ հանրային ծառայութեանց յիշատակութեամբ) իրենց կազմակերպութեանց շնորհաւորանքը ներկայացուցին։

80 ամեակի տարեդարձը կը վայելեր Ամեն. Պատրիարք հովանաւորութիւնը Սրբազան Հօր, որ Միաբանութեան անդամներուն հետ ներկայ էր, եւ որ 1938 թուականէն ծանօթ է Արսէնհան ընտանիքին։ 1935ին Պաղեստինեան Կառավարութեան կարգադրութեամբ վկայեալ դեղագործ Նուպարը Երուսաղէմի Պետական Հիւանդանոցին մէջ պաշտօնի կը կոչուի, եւ այդ պատճառաւ, 1917էն ի վեր Գազա իր հրկու dangfn, հաստատուած եղբայրները՝ Նորայր եւ Ժիրայր, եւ քոյրը՝ փոխադրուին Արսինէ, 1938ին կր Երուսաղեմ։ Պատրիարք Սրբազան Հայրը Արսէնեան quuhumulifnd 1h2bg ընտանիքին եւ Նուպարին ազգասիրական, քաղաքացիական մարդասիրական br

ծառայութիւնները, հակառակ 1948ի Պաղեստինեան պատերազմի հետեւանքով կրած կորուստներուն, եւ կրկին տեղափոխութեանց։

Պատրիարք Սրբազան Հայրը "անակնկալ" մը Եւս յայտնեց, ներկայացնելով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Առաջին Սրբազնագոյն Կաթողիկոսի Օրհնութեան կոնդակը, որուն ընթերցումը՝ Հոգ. Տ. Բագրատ Արղ. Պուրճէքեանի կողմէ, ունկնդրուեցաւ յոտնկայս։

Տիար Նուպար Արսէնհան, իր եւ իր տիկնոջ՝ Սիրարփիին hnnut, hn հրախտագիտութիւնը յայտնեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետէն ընդունած օրհնութեան եւ կոնդակին համար, եւ յուզումով յիշեց տարագրութիւնը իր dnnndniphh, hp dannug huiumfn, hp հօրը հրաշագործ դեղը, հայ ընտանիքին կարեւորութիւնը, եւ շնորհակալութիւն յայտնեց իր զաւակներուն՝ անոնց կազմակերպած "անակնկային" համար, եւ Junphupf Սրբազան Հօր bu Միաբանութեան եւ բոլոր բարեկամներուն։

Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր ղրկած հեռագիրը Յորդանանի Վեհաշուք Հիւսէյն Թագաւորին, շուտափոյթ ապաքինում մաղթելով անոր։ Նաեւ Յորդանանի Հաշիմական թագաւորութեան Պալատէն,յանուն Հիւսէյն Թագաւորին ղրկուած շնորհակալութեան հեռագիրը։

His Majesty King Hussein II The Royal Palace Amman Hashemite Kingdom of Jordan

August 26, 1992

On behalf of Armenian Patriarchate of Jerusalem and Armenian community on both sides of River Jordan we extend to Your Majesty our heartfelt good wishes on your successful surgery praying for speedy recovery asking God to preserve you and grant you joy and long life.

Archbishop Torkom Manoogian Armenian Patriarch of Jerusalem

Archbishop Torkom Manoogian Armenian Patriarch of Jerusalem

August 31, 92

I have been commanded by His Majesty the King to convey to you and through you to the Armenian Patriarchate of Jerusalem and the Armenian community on both sides of the River of Jordan His sincere appreciation for Your warm message wishing Him a speedy recovery from His recent surgery and kind sentiments of good wishes.

Dr. Khalid Al Karaki Chief of the Royal Hashemite Court

ՍԻՈՆ

ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ 36_ՐԴ ԸՆԴՀ․ ԺՈՂՈՎ

ԱԵԽ-ի 36-րդ Ընդհ․ Ժողովը տեղի ունեցաւ 26-30 Յունիս 1992-ին, Մելպուռն Համալսարանի Օրմօնտ Քոլէճի մէջ։

Ժողովին մասնակցեցան 13 անդամ եկեղեցիներու Հոգեւոր Առաջնորդներ, ներկայացուցիչներ, դիտորդներ ու հիւրեր, թիւով 150 հոգի։

Ուրբաթ Երեկոյեան, Անկլիքան Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած եկեղեցական արարողութեամբ, բացումը կատարուեցաւ ժողովին։

Ծարաթ առաւօտհան Եկեղեցական արարողութիւնը վերապահուած էր Հայց. Առաքելական Եկեղեցւոյ, ուր Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Առաջնորդ Գերշ. Տ. Աղան Եպս. Պալիօզեան, իր կողքին ունենալով Յակոբ եւ Ասողիկ Քահանայ Հայրերը եւ դպիրներ, կատարեցին Արեւագալի արարողութիւնը, աղօթքները մատուցանելով անգլերէն լեզուով։

Եկեղեցական արարողութենէն ետք, ժողովը անցաւ իր օրակարգին։ Նոյն երեկոյեան Վեր. Տքթ. Կունթըր Կասմըն գլխաւոր բանախօսն էր. խօսեցաւ "Միութիւնը որ կը ցանկանք" նիւթին շուրջ։

Ժողովը իր աւարտին հասաւ Երեքշաբթի 30 Յունիսին։ Վեր․ Իան Ալլսօփ ընտրուեցաւ ԱԵԽ-ի նախագահ, յառաջիկայ Երկու տարիներու համար։

Առաջնորդ Ս. Հայրը, ԵրԵք կարԵւոր յանձնախումբԵրու վարչական անդամ դարձաւ։ Իսկ Տիկին Ազնիւ ԻսկէնտէրԵան՝ Սիտնիէն, Եւ Տիկ. Ծուշան ՊօյաճԵան՝ Փըրթէն, ընտրուԵցան կանանց յանձնախումբի վարչական անդամներ։

Առաջնորդ Ս. Հօր առաջարկութեամբ ժողովը ընդհանուր միաձայնութեամբ որդեգրեց հետեւեալ երկու որոշումները.-

1.- Հաղորդակցիլ Նորին Սրբութին S. S. Վազգեն Ա. Կաթողիկոսին հետ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ, եւ արտայայտել բարի մաղթանքներ՝ Հայաստանի եկեղեցիին, ժողովուրդին եւ կառավարութեան, ազատութեան եւ մարդկային իրաւանց համար իրենց պայքարներուն մեջ, ի հետեւանս լեռնային Ղարապաղի (Արցախի) մասին ստեղծուած վեճերու եւ տարակարծութեանց:

2.-Խնդակցութիւն յայտնել եկեղեցայ եւ հոգեւոր արժէքներու մասին վերանորոգուած վստահութեան համար, հակառակ տնտեսական եւ քաղաքական խիստ դժուարութեանց։

Առաջնորդ Ս․ Հայրը Մելպուռն գտնուած օրերուն, իր ազատ ժամերը յատկացուց եկեղեցւոյ ու գաղութի ձեռնարկներուն։

Ծարաթ Երեկոյեան ներկայ եղաւ Եկեղեցւոյ տարեկան պարահանդէսին, նուիրուած հայրենիքին։

Կիր. 29 Յունիսին, պատարագեց ու քարոզեց Մելպուռնի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ։ Վեր. Տոքթ. Կունթըր Կասմըն ներկայ եղաւ Սուրբ Պատարագին ու անգլերէն լեզուով խօսեցաւ ներկայ հաւատացելոց։

Յաւարտ Ս. Պատարագի ծերունազարդ Վահրամ Երեցեան իր ծննդեան 100-ամեակին առիթով արժանացաւ Վեհափառ Հայրապետի Օրհնութեան Գիրին։

Եշ. 25 Յունիս 1992ին, Մելպուռնի Անկլիքան Արքեպիսկոպոսարանին մէջ, տեղի ունեցաւ Աւստրալիոյ Հոգեւոր Առաջնորդներու միօրեայ ժողովը, որուն իր մասնակցութիւնը բերաւ Առաջնորդ Ս. Հայրը: Ժողովը զբաղեցաւ Կրօնական, Ընկերային, Բարոյական ու Գաղթականաց հարցերով։

Ուր. 26 Յունիսին, ԱԵԽ–ի Հաւատք Եւ Կարգ Յանձնախումբը միօրեայ Սեմինար մը կազմակերպած էր, ուր գլխաւոր բանախօսն էր Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Հաւատք եւ Կարգ Յանձնախումբի Ատենապետ, Վեր. Տոքթ․ Կունթըր Կասմըն։ Ան խօսեցաւ "Եկեղեցւոյ միութիւնը" նիւթին շուրջ։

Առաջնորդ Ս. Հայրը ներկայ եղաւ ու ներկայացուց Ուղղափառ Եկեղեցիներու եւ յատկապէս Հայց. Առաքելական եկեղեցւոյ ըմբռնումը Հաւատք եւ Կարգ հարցերու շուրջ։

<u>Հ</u>ԱՂበቦԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Երուսաղէմի Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, իր Միաբանակից եղբայրներուն հաղորդած է հետեւեալ տեղեկութիւնը, Ժընէվի դրամատան մէջ Պատրիարքարանի անունով եւ հանգուցեալ Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի ստորագրութեամբ բացուած հաշիւի մը մասին։

Միաբանակից Եղբայրներուն,

Անցնող տարիներու ընթացքին հետամուտ եղանք Ջուիցերիոյ Ժընէվ քաղաքի դրամատան մէջ Պատրիարքարանի անունով բացուած հաշիւները ստուգելու, զանոնք Պատրիարքարանիս անունին փոխանցելու համար։ Սակայն դրամատան պատասխանատուները մերժեցին փոխանցումը կատարել, առարկելով որ իրենց դրամատան մէջ բացուած հաշիւը, նախորդ Պատրիարք Եղիշէ Տէրտէրեանի ստորագրութեամբ, անձնական եւ անհատական հաշիւ է, եւ դրամատան ներքին օրէնքներուն համաձայն չեն կրնար որեւէ տեղեկութիւն տալ կամ ուրիշ անունի փոխանցել։

Մենք պնդեցինք որ Պատրիարքարանիս անունով եւ Եղիշէ Տէրտէրեան ^{Պա}տրիարքի ստորագրութեամբ բացուած հաշիւը անձնական չէ, եւ մենք նոյն հաշիւը կը պահանջենք շարունակել եւ յաջորդ Պատրիարքին անունով արձանագրել։

Սուրբ Էջմիածնէն մեր վերադարձին, 1992 Մայիս 21-24, ժընէվ այցելեցինք գլխաւորաբար այս նպատակով։ Ըստ նախապէս եղած կարգադրութեանց եւ ժամադրութեանց, Ժընէվի մէջ մեզի ընկերացաւ Երուսաղէմէն Պատրիաքարանիս փաստաբանը։ Օրինական փաստաթուղթերը եւ հաստատագիրերը ներկայացուեցան դրամատան վարիչներուն որոնք ընդունեցին փոխանցման գործողութիւնները կատարել, եւ մեր ներկայութեան եւ ստորագրութեամբ այդ հաշիւը փոխանցուեցաւ Պատրիարքարանիս եւ Պատրիարքին անունին։

Այդ հաշիւին մէջ չնչին գումար մը մնացած է, Երեսուն մէկ Ամերիկեան Տոլար։

1989 տարւոյ վերջին ամիսներուն, տասնեակ հազարներով "Cash" գումարներ գանձուած են, չենք գիտեր որ՞ու ստորագրութեամբ եւ ի՞նչ նպատակներու համար։ Ջնջել տուինք անունը այն անձին որուն լիազօրութիւն տրուած էր նոյն հաշիւէն գանձումներ կատարելու։

Այս հարցին կապակցութ-համբ ապագային կը տեղեկագրենք երբ յաւելեալ ^{տեղե}կութ-իւններ կարելի դառնայ ձեռք բերել։

ԱՆԵԼ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԳՐԱԳԷՏԻՆ 50-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Բանաստեղծ ԱՆԵԼ (Տքթ. Կարօ 8. Կարապետեան) ծնած է Երուսաղէմ 1922ին։ Իր առաջին բանաստեղծութիւններէն տպուած կը գտնենք ՍԻՈՆ ամսագրի 1942 տարուան թիւերուն մէջ։

Բանաստեղծութեան երեք հատորներ տպուած են. առաջինը՝ "Մութ Ցաւեր" (1945), Երուսաղեմ, երկրորդը՝ "Տեսիլք Գինովի" (1949), Պէյրութ, երրորդը՝ "Պարը Յոյսին" (1955), Երուսաղէմ։

1955ին Տքթ. Կարօ Կարապետեան կը մեկնի Միացեալ Նահանգներ, սրտի մասնագիտութիւնը կատարելագործելու համար Պոսթոնի Հարվըրտ Համալսարանին մէջ, ուր կ'աշակերտի աշխարհահռչակ ուսուցիչ եւ սրտաբան Փօլ Տատլի Ուայթին, որուն հետ առաջին անգամ գործադրութեան կը դնեն սրտի Փէյս-Մէյքըր գործիքին գիւտը։

Բացի բանաստեղծութենէն, ԱՆԵԼի գրական գործունէութիւնը կ'արտայայտուի հոգեբանական վէպով մը՝ "ՈՌԴԻ ՄԱՌԴՈՑ" որ կը հրատարակուի 1975ին, Երուսաղէմ։ Ասոր կը յաջորդեն բազմաթիւ տպուած եւ անտիպ քերթուածներ եւ պատմուածքներ՝ "Խենթ Բիւզանդը", "Ես Պիլլի Գացի", "Հայր Խորէսը", հւայլն։

ԱՆԵԼ տուած է գրական դասախօսութիւններ Երուսաղէմ, Գանատա, Անգլիա, Միացեալ Նահանգներ։ Այժմ կ'աշխատի մեծածաւալ վէպի մը վրայ։

ԱՆԵԼէն Հատընտիր Քերթուածներու հատոր մը տպուած է 1986ին, Նիւ Եօրք։

1992 Օգոստոս 22ին, Երուսաղէմի մէջ, Հայ Երիտասարդաց Միութեան նախաձեռնութեամբ եւ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր հովանաւորութեամբ նշուեցաւ Բանաստեղծ-Գրագէտ ԱՆԵԼին 50ամեայ յոբելեանը, Ժառանգաւորաց Վարժարանի Սրահին մէջ, հանդիսավա-

րութեամբ Յակոբ Անդրէասեանի։ ԱՆԵԼհ կենսագրական Գիծերը ներկայացուց իր որդին՝ Տքթ. Վիգէն Կարապետեան, Բարիզեն։ Ընտրհալ քերթուածներէն արտասանեցին Օր. Ջեփիւո Պօյաճեան, Օր. Գարինէ Գաբլանհան, նահւ ԱՆԵԼի երկու մանչուկ թոռնիկները, Բարիզէն, Թորգոմ։ ԱՆԵԼի արձակ bı ympo գրութիւններէն՝ հատուած մր Որդի Մարդոլ գիրքէն ընթերցեց Տիկին Ալին Պայեան. իսկ հոգեբանական պատմուածքներէն "Խենթ Բիւզանդը", յապաւումներով ներկայացուց Տիկին Նորա Նագգաշհան։ Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը անդրադարձաւ ԱՆԵԼի կեանքին եւ գրական աճումին նպաստող ազդակներուն - Երուսաղեմ, ընտանիք, հայեցի դաստիարակութիւն, մշակոյթներու եւ բժշկական **u**11 մասնագիտութեան ներդրումները, պատմելու եւ վերլուծելու իւրայատուկ ոճը – Եւ իր գնահատանքին հետ ներկայացուց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին Օրհնութեան կոնդակը, զոր ընթերցաւ Հոգ․ Տ․ Գուսան Վրդ․ Ալճանեան, **Եւ ԱՆԵԼին լափակ**էն անցուց Ս. Սահակ^{ել} 2fulizulin Ubhuhun U. Ubupny Հայրապետէն շնորհուած։

Անել իր շնորհակալութեան խօսքէն յետոյ, վերլուծումը կատարեց Հայ Սփիւռքի ներկայ կացութեան, եւ պատկերեց թելադրական ցուցմունքներով այնպես ինչպես ինք կը տեսներ "Սփիւռքը 21թդ դարու սեմին":

Երեկոյթը աւարտեցաւ Ամեն Պատրիարք Սրբազան Հօր "Պահպանիչով" Եւ խմբովին երգուած "Հայր Մեր"ով։

ህኮጡ

ՊՈԼՍՈՅ "ԺԱՄԱՆԱԿ" ԵՒ "ՄԱՐՄԱՐԱ" ԹԵՐԹԵՐԸ ԿԸ ՀԱՂՈՐԴԵՆ

Կաթոլիկ Միարանութիւններեն եւ Ընկերութիւններեն նեօ-Քաթեքումեններու Խումբը, Պեյօղլուի Ս. Անթուան եկեղեցւոյ մէջ, եւ Ֆօքօլարինե Խումբը Պիւյուքտերեի լատին եկեղեցւոյ մեջ, իսկ Սալեզիեններու Միաբանութիւնը եւ Միսիոններու Իտենթաս Սպանիական Միաբանութիւնը Հարպիյեի Ս. եսփրի Քաթիտրալի եւ Մեծ Կղզիի "Օրաթորիօ" ակումբներուն մեջ թափ տուած են միսիոնարական լայն աշխատանքներու։ թիրախ ընտրելով ի մասնաւորի Հայ Առաքելական եւ Ասորի Ուղղափառ պատանիներն ու երիտասարդները։ Հայոց Պատրիարքական Աթոռի Կրօնական Ժողովը, 7 Մայիս 1992 թուակիր նամակով, բացատրութիւն պահանջած է Հայր Լուի Փլաթրէն, որ ներկայիս Պապական Փոխանորդ նշանակուած է, եւ որուն Եպիսկոպոսական ձեռնադրութիւնը հաւանական է որ Իսթանպուլի մէջ տեղի ունենայ։ Ներկայիս Թուրքիոյ մէջ կը պաշտօնավարեն չորս Կաթոլիկ

ԿՈՒՍԱԿՐՕՆ ՔԱՀԱՆԱՅԻ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՆԻՒ ԵՕՐՔԻ Ս. ՎԱՐԴԱՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

ԳՐԻԳՈՐ ՈՍԿԱՆԵԱՆ

Միացեալ Նահանդներու Հայց. Եկեղեցւոյ Արևւելհան Թեմի բարեխնամ Առաջնորդ Գերչ. Տ. Խաժակ Ս. Եպիսկ. Պարտամեան Կիրակի, Յուլիս 26, 1992-ին հանդիսաւոր արարողութեամբ կատարեց կուսակրոն քահանայական ձեռնադրութիւնն ու օծումը բարեչնոր Վազդէն Աւադ Սարկաւադ Պէրալէրեանի։

Թուականը կը զուգադիպի Այլակերպութեան (Վարդավառի) տօնին։ Մեր մէջ այդ թուականը, տոմարական եզրարանութեամ ը՝ շարժական է, կապուած Ս. Ջատկի օրուան 3 օրերու ետառաջութեան։ Օրթոտոջս եւ Կաթոլիկ Եկեղեցիները Այլակերպութիւնը կը տօնեն Օգոստոս 6-ին, անչարժարար։ Լուսնային տոմարի Հայուարկութեան հետեւելով, աւանդաթար՝ Յուլիս 30-ին կը զետեղուին Իր կեանջի վերջի դէպջելու մասին՝ Յիսուսի կատարած կանխասացութիւնները, որոնց կը հետևւի այլակերպութեան դէպջը, որ ջրիստոնէական թուականով կը զուգադիպի Օդոստոս 6. 29-ին, երը Յիսուս 33 տարեկան էր։

Հայ Երուսաղէմի մէջ աշանդութին և հղած է ձեռնադրութինները կատարել Այլակերպութեան տօնի Կիրակիին։ Այլակերպութեամ բ՝ Քրիտոոսի կերպարանջին լոտի ա փառջի փոխարկումը խորհրդանչաբար կը կիրարկուի ձեռնադրութեան խորհուրդին, երբ ընծայացուն եւս կը փոխարկուի «նոր մարդու» կերպարանջին։ Առաջնորդ Սրբազան Հայլ իբրեւ Երուսաղէմցի, նոյն տօնի Կիրակիին ձեռնադրուած ու օծուած, կարդադրեց որ իր անդրանիկ ձեռնադրութիննը տեղի ունենար նոյն օրը, այլակերպութեան անիմանալի խորհուրդի մթնոլորային մէջ։

Նախատօնակին, Շաբախ օրը «Յիչատակ Տապանակին Հնոյ եւ տօն նորոյս Սրթոյ Եկեղեցւոյ», Առաջնորդ Սրբազան Հայրը երեկոյեան արարողուխեան աւարտին կը բազժի փոջր գասին ժէջտեղ գրուած բազկախուին, նախագահելու Կոչման Արարողուխեան։ Հող։ ⁵ Հայկազուն Ծ. Վրդ. Նաճարևան, խարտավիլակը ընծայեալին, կ'առաջնորդէ զայն Ս. Բեժխ պատասխանելով օրինական Հարցուժներուն ի վկայուխիւն Վազդէն սարկաւագի արժանաւորուխեան։ Մէջ ընդ ժէջ երկարաչունչ ընխերցուժներէ վերջ Սրբազան Հայրը կ'ընդունի ընծայացուին խոստուժները Հետեւելու ուղղափառ Հայրերու դաւանուխեան, եւ նզովելու՝ չարափառ ուսուցուժները Հերևաիկոսներու։ Կոչման արարողութիւնը կը փափոփ Հայց. Եկեղեցւոյ գաւանարանական ուղղափառ բանաձեւի բարձրաձայն արտասանուխեամը

1992 Յուլիս - Օգոստոս

ՍԻՈՆ

Βπείω 26, 4 μωμβ առաւստ։ U. Վարդան Մայր տաճարը, լայնախարխսխ ու φωπωτη, եղաւ Հանդիսարանը սրտառուչ ձեռնադրութեան արարողութեան։ Ներսը՝ ջաՀալոյց ու խնկաբոյը մայր տաճարը արդէն կը յորդէր Հայ Հաւատացեալներով։ Նոյն Կիրակի ու խնկաբոյը մայր տաճարը արդէն կը յորդէր հայ Հաւատացեալներով։ Նոյն Կիրակի երեկոյեան՝ դէպի Հայաստան իր ճամրուն, ձեռնադրութեան ամրողջ տեւողութեան ներկայ եր Գանատայի Առաջնորդը՝ Գերչ. S. Յովնան Եպիսկ. Տէրոդրեան։ Ձեռնադրիչ երիտասարդ կռաջնորդ արդագանը զդեստաւորուած լազուարթ դեղեցկատեսիլ Հանդերձան թով եւ Կոմիտաս երդչախումբի «Հրաշափառ Աստուած»ով աւելի ջան 20 սարկաւադներու, վարդապետներու եւ ջաՀանաներու թափօրով կը մոնէ U. Պատարադի, առընթերակայ ունենալով Հոդչ. S.

«Ջի ողորմած եւ մարդատէր ես Աստուած դոլով...»։ Ձեռնադրիչ սրբագանը կը բազմի խորանին առջեւ՝ բազկաՅուին։ Խարտավիլակ Հայր տուրբը կ՝առաջնորէ ծնկաչոդ ընծայացուն՝ խորանին։ Երկար աղօՅ քներ, գիրջ ու աւետարան։ Ծնկադիր, ձեռամ բարձ, զէմ քը Հաւատացեալներուն, ընծայացուն Համ բերու Յեամ բ կ՝ունկնդրէ «աստուածային եւ երկնաւոր չնոր Հ...» երիցս կրկնուող երդեցողու Յիւնը. ապա դառնալով կը մօտենայ ձեռնադրիչ սրբազանին որ իր կարդին կը կանդնի ոտքի, աջ ձեռքը կը դնէ դագաՅին ու կ՝արտասան է. «Ես դնեմ ձեռս ի վերայ սորա եւ դուք ամենե քեան աղօՅս արարէք», ձեռնադրու Յեան խորհուրդին ամ էնչն կենսական պահը, երբ քահանայական իշխանու Յիւնն ու չնորհը կը փոխանցուի ընծայեալին։

Կերկարի պատարադը մինչեւ «Ողջոյն»։ Ձեռնադրիչ սրբազանը կը վերադառնայ իր բազկաթոռին, կատարելու օծման բաժինը, եւ ամբողջացնելու՝ ձեռնադրութեան խորհուրդին չջջանակը։ Կրկին աղօթեքներ, գիրք, սաղմոս, աւհտարան։ Մեծ ավաէով կը բերուին սեւ փիրնն ու քահանայական զդեստները, որոնք յաջորդաբար կը գրուին նորօք ձեռնադրեալի վզին ու ուսերուն։

Ջդեստաւորուած ջահանայական հանդերձան քով, ընծայեալը կը կանդնի Ս. Բեմի ձախակողմին, հանդիման Սրբազանին, որ Ս. Միւռոնի ամանը ի ձեռին, միւռոնաթաթախ բթամատով կը մօտենայ ու կը ձայնէ «օծցի եւ սրբեսցի ճակատ Տէր Նարեկ կուսակրօն բահանայի...», ապա աջ ու ձախ ափերուն՝ «այս նշանաւ սուրբ խաչիւ եւ Սրբալոյս միւռոնաւ...»: Ձեռնադրիչ սրբազանը ջահանային կը յանձնէ Ս. Պատարադի սկիհը, նշանակ՝ պատարադելու իշխանութեան։ Ի պատասխան երիցս՝ «Օրհնես՝ Տէր Նարեկ կուսակրօն բահանայ» կոչին, նորաօծը կ՝արտասան կր առաջին օրհնութեննը եւ «խաղաղութեւն ամենեցուն»ը ներկայ հաւատացեալներուն։

255

«Ողջոյն տուք միմեանց ի համրոյը սրրուխեան...»։ Ձեռնադրիչ Առաջնորդ սրրագան հօր առաջնորդուխեամբ, ներկայ եկեղեցականներն ու սարկաւադները մի առ մի կը բարձրանան Ս. Բեմ եւ ողջադուրմամբ կը սոոանան «ողջոյն»ը նորաօծ Տէր նարեկեն։ Արդարեւ տպաւորիչ, յուզիչ ու խորհրդաւոր տեսարան։ Արցունք՝ հոդեւորականներուն, Հաւատացեալներուն եւ իր ալ աչբերուն մէջ։

Իր անդրանիկ ձեռնադրութեան առթած Հարազատ յուզումով առլցուն, Առաջնորդ որբազանը արտայայտուեցաւ Այլակերպութեան դէպքին եւ կատարուած ձեռնադրութեան խորհուրդին միջեւ յանդիտութիւններուն։ Սրտառուչ բառերով օրհնեց իր հոդեւոր անգրանկ զաւակը հայրական դըրկընդիսառնութեամբ։

«Օրհնեալ եղերուք»էն առաջ, վեղարի տուչութեան արարողութեն։ Աղօքքներ, սաղմոսներ, գիրք ու չարական։ Առաջնորդ սրբագանը, իր առջեւ ծունկի եկած նորածէն խորհրդաբար կը վերցնէ «հին մարդը» ևւ անոր տեղը կը գետեղէ նորը, վեղարը, կուսակրձ քահանայութեան քօղը։

Անոր բարձր ու Նիհար հասակն ու երիտատարդ դէմ քը կը զդենուն նոր վայելչունին, նոր այլակերպունքիւն։ Թադաւոր երկնաւոր անչարժ պահէ եկեղեցիդ։ Ընկերակից եղիր է Նարեկին, իր կեանքի դիւրդնաց եւ դժուտրդնաց երկար ճանապարհին։

Ժամը 2:15, կեսօրէ վերջ։ Հանդիսաւոր ճաշկերոյթ Գավուքճեան հանդիսասրահին մէի ի ներկայութեան կուռներամ հաւատացեալներու։

Սրդազան Հայրը կ'օրհնէ սեղանը։ Տիկ. Պըրթայ Մորէարթե, դուսորը ձեռնադրութեան կնջամայր՝ Տիկ. Ալիս Խավլընհանի, ի դիմաց մօր եւ ազդակակններու կ'արտասանէ իր օրտի խօսջը. ապա կ'առաջարկէ կենացը խմել իրենց Հոդեւոր գաւակին։

Ի դիմաց Ս. Վարդան Մայր Տաճարի Տիկնանց Միութեան ատենապետուհի երէցկին Մարիամ Աշճեան կը կարդայ իր խօսբը։

Մինչ ճաշկերույթը կը շարունակուի, ատենավարը կը հրաշիրէ Օր. Կարինէ Մկրտիչեան, Առաջնորդարանի պաշտօնեաներէն, որ ապրումով կ'արտասանէ Վ. Թէջէեանի դասական ոտանաշորներէն՝ «Եկեղեցին հայկական»։

Կը Հրաշիրոշի Գերչ. Տ. Յովնան Սրբազանը տալոշ իր վկայոշնիւնը Վազդէն սարկաշադին ի Ս. Էջմիածին դպրոցական տարիներուն, եւ յայտնելու բարեմազնանջներ նորընծայ Նարեկ Հայր սուրբին։ Սրբազան Հօր խօսջերը եղան տպաշորիչ, յուզումնախան ու Հայրախնամ։

Հանդիսավարի հրաւէրով բեմ կը բարձրանայ դաշնակահար Պրն. Ռուբէն Այվագետն Եկած Հայաստանէն, չրջանաւարտ Երեւանէն. ապա՝ Մոսկուայի երաժշտանոցէն։ Վարպետ մատներով արդարացուց իր արուեստադիտութքիւնը. վկայ՝ բուռն ծափահարութքիւնները։

Իր ուղերձով Հոդը. Տ. Գրիդոր Վրդ. Մադսուտեան չեչտը դրաւ Հայ դպրոցներու կարեւորութեան եւ անոնց կատարած բարերար ու անմրցելի աշխատանքին։ Հայ առրջը վարիչն է՝ Առաջնտրդարանին կից՝ Գրիդոր եւ Գլարա ՋօՀրապ Տեղեկատուութեան Կեղոնին։

digitised by A.R.A.R.@

1992 Bnilhu - Oqnumnu

ՍԻՈՆ

Կարն ուղերձի ընթերցումով եւ ոտանաւորի արտասանութեամբ, երկուջն ալ բնջնագիր, Տիկ Մագրուհի Աղճայեան կարողացաւ տպաւորել ներկաները։

Ձայնագործ իջին կը մօտենայ Հոգչ. Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Նաճարեանը որ իւրայատուկ մտածումներով կրցաւ արժեցնել իր ուղերձը։ Հայր սուրբը փոխանորդն է Թեմիս եւ ուսուցիչն ու տեսուչը Հայր Նարեկին, ի Ս. Էջմիածին։

Հաճոյք էր ներկայութիւնը Կանոնիկոս Փրոֆ. Ճ. Րապըրթ Բայթի, որ եղած էր ակադեմական խորհրդատուն, երբ հայր Նարեկ անցեալ տարի կ'ուսանէր եպիսկոպոսական Աստուածաբանական Ճեմարան, ի Նիւ Եորք։ Ան յայտնեց իր մտածումները պատշաճ բառերով եւ ներկայացուց իր բարի մաղթանքները։

Կարդը եկաւ Նորընծայ Հայր սուրբին արտայայտելու իր ապրումներն ու ուղումները որոնք իրենը եղան իր ամբողջ ուսանողունեան տարիներուն, եւ այսօր ալ, ձեռնադրունեան ու օծման արարողունիւններու տեւողունեան։ Յիչեց անուններ ու դէպքեր որոնք դպած էին իր կեանքին մինչեւ ներկայ պահը։ Շնորհակալունեան ու երախտադիտունեան զդացումներով անդրադարձաւ իր հոդեւոր Սրբազան հօր, իր մօր, իր կնջամօր եւ բոլոր անոնց որոնք ծրադրեցին ու դլուխ հանեցին այս յիչատակելի օրը։ Կարժէր հայր սուրբին խոսքը գետեղել այստեղ ամբողջունեամբ, ենք տեղը նոյլատրէր։

Բնականարար, ձեռնադրիչ Սրրազան Հօր բաժին ինկաւ կատարելու փակման խօսջը։ ^իւրայատուկ պերճախօսութեամը անդրադարձաւ «մշակներու» կարիջին որո՞ջ պարտականութիւնը ունին դիմադրաւելու Հայ Համայնջային կեանջէն ներս դոյառնող լաւ ու չար պայմանները, թուեց արժանիջները իր Հոդեւոր զաւակին եւ վատահութիւն յայտնեց որ ան պիտի կարևնար անդայթում դնացջով ջալել իր որդեդրած ճամրուն երկարաձիդ արահետներէն։

Ճաշկերոյթի հանդիսավարութեան եւ յայտագրի գործադրման պարտականութիւնը վտահուած էր Գրիգոր Ոսկաննանին։

Պատուոյ սեղանին վրայ տեղ դրաւած էին երկու պատուական տիկիններ, քով քովի։ Մին, Տիկ. Նուարդ Պէրպէրեան, տիրամայրը. ինքնամփոփ ու սակաւախօս, եկեղեցական արարողունիւններէն մինչ վախճանը ճաշկերոյնին։ Ինչե՞ր կը զգար ու կը մտածէր։ Դժուար է նափանցել։ Բայց ժայիտ կար երեսին երբ կ՚ընդունէր չնորհաւսրունիւններ։

Միւսը, Տիկ. Ալիս Խավլըճեան, կնջամայրը՝ նորընծայ հայր սուրբին։ Յոգնած, բայց բարնմոյն տրամադրութեամբ կրցած էր դիմանալ ձեռնադրութեան արարողութիւններուն եւ հաչկերոյթի ճառախօսութիւններուն։ Սակայն կար իր աչբերուն մէջ խինդ, որ կը ծորէր բարի, աստուածահաճոյ պարտականութիւն մը կատարած ըլլալու դոհունակութենէն։

digitised by

Vpc toppe Oqnumnu 1992

A.R.A.R.@

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Ծբ. 4 Յուլիս.– <u>Ս. Մեծին Ներսիսի եւ</u> Խ<u>ադայ Եպիսկոպոսին</u>։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան։

Կիր. 5 Յուլիս.- <u>Բարհկենդան Ս. Լուսաւորչի</u> <u>Պահոց</u>։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Բագրատ Արղ. Պուրճէքեան։

Ուր. 10 Յուլիս... Նախատօնակին ի Ս. Ցակոր նախագահեց Գերշ. Տ. Սեւան Եպս.։

Ծթ. 11 Յուլիս.- <u>Գիւտ նշխարաց Ս. Հօրն</u> <u>մերոյ Գրիգորի Լուսաւորչին</u>։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատրան մէջ, ուր թաղուած է, ըստ աւանդութեան, մասունքը Ս. Լուսաւորչի։ Ժամարարն էր Հոգշ․ Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան։

Կիր. 12 Յուլիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Երուսաղեմի հրէական բաժնին մէջ գտնուող Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ։ ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Ծէրպէթճեան, իսկ քարոզիչը՝ տեղւոյն Տեսուչը՝ Հոգշ. Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Ջղջանեան։

Գշ. 15 Յուլիս.- Թարգմանչաց նախատօնակին ի Ս.Յակոբ նախագահեց Գերշ.Տ. Սեւան Եպս. Ղարիպեան։

Եշ. 16 Յուլիս.- <u>Ս. Թարգմանչաց Վարդապետացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ (Soն Ազգային)</u>։ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալճանեան։

Շբ․ 18 Յուլիս.– <u>Ս. Տրդատայ Թագաւորին</u> <u>Եւ Աշխէն տիկնոջն</u>։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ․ Տ․ Ռազմիկ Վրդ․ Պօղոսեան։

- Նախատօնակին ի Ս. Յակոր նախագահեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը։

Կիր. 19 Յուլիս.- <u>Գիւտ Տփոյ Ս. Աստուա-</u> <u>ծածնի</u>։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Ծ. վրդ. Զղջանեան։ Երթ ու դարձի թափօրները գլխաւորեց Գերշ. Տ. Սեւան Եպիսկոպոս։

Շթ. 25 Յուլիս.- <u>Ս. Երկոտասան առաքելոցն</u> <u>Քրիստոսի եւ Պօդոսի՝ երեքտասաներորդ</u> <u>Առաքելոյն</u>։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պօղոսի վերնամատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան։

կիր. 26 Յուլիս.- <u>Բարեկենդան Վարդավառի</u>

<u>Պահոգ</u>։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մատրան մէլ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում վրդ. Քէշիշեան։

Ուր.31 Յուլիս.– Նախատօնակը պաշտուեցա. Մայր Տաճարին կից Ս. էջմիածին մատրան մէջ։ Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպս.։

Շթ. 1 Օգստ.- <u>Յիշատակ Տապանակին։</u> Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճաթին կից՝ Ս. Էջմիածին մատրան մեջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան։

– Կէսօրէ Խտք, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը "Հրաշափառ"ով մուտք գործեց Ս. Յակոբեանց Մայր Տաճար, ուր Այլակերպութեան հանդիսատոր նախատօնակին Եւ անոր յաջորդող Տեառնեդարո Գահակալութեան նուիրուած արարողութեան նախագահելէ ետք թափօրով բարձրացա Պատրիարքարան։

– Իրիկնադէմին, Մայր Տաճարին մէ պաշտուած "Եկեսցէ"ի եւ Հսկման կարգերուն նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դափթ Արքեպս.։

Կիր.20գստ.-<u>Վարդավառ (Այլակերպութեան Տեսոն)</u>։ Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը եւ քարոզեց տօնին մեծ խորհուրդին շուրջ։

Բշ. 3 Օգստ.- <u>Յիշատակ մեռելոց։</u> Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ պատարագեց Հոգշ. Տ. Բագրատ Արղ. Պուրճէքեան։ Ապա, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը Հանգստեան շարականներու երգեցողութեամբ մեկնեցաւ Ս. Փրկչի գերեզմանատունը, ուր Հոգելոյս Տ. Եդիչէ Պատրիարք Տէրտէրեանի նորակառոյց դամբարանին վրայ գետեղուեցաւ ծաղկեպսակ եւ կատարուեցաւ Հանգստեան պաշտամունք։ Աւարտին, հոգեսուրե տրուեցաւ ժառանգ. Վարժարանի փոքր սրահին մէջ։

Ուր. 7 Օգստ.- Նախատօնակին ի Ս. Յակոր նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպս։

Շր. 8 Օգստ. <u>Ս. Թադէոսի Առաքխյոն հ.</u> <u>Սանդխտոյ Կուսին</u>։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբ^{էն} Վրդ. Յովակիմեան։

Կիր.90գստ.–Ս.Պատարագը մատուցուեցա ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան։

1992 Bnilhu - Ognumnu

Շր. 15 Օգստ.- Որդւոց եւ Թոռանց Ս. Գր. Լուսաւորչին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Այճանեան։

կիր. 16 Օգստ.- Ս. Պատարագը մատուցուեցաւի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ ժամարարն էր Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. զօղոսեան։ Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպս. նախագահեց "Խաղողօրհնէք"ի արարողութեան, որ կատարուեցաւ յաւարտ Ս. Պատարագի։

Բշ. 17 Օգստ.- Այսօր սկսաւ Ս. Կոյսի Վերափոխման տօնը կանխող կէս-հանդիսաւոր Ս. Կատարագներու մատուցումը Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ։

Շթ. 22 Օգստ.- <u>Եփեսոսի Ս. Ժողովոյն</u> (431)։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Աստուածածին։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ վրդ. Մանկասարեան։

կիր. 23 Օգստ.- <u>Բարիկինդան Ս. Աստուածածնի Պահոց</u>։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Աստուածածին։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Բագրատ Արղ. Պուրճէքեան։

Եշ. 27 Օգստ.- Առաւօտեան ժամը 2.30ին, Միաթան Հայրեր եւ ժողովուրդ իջան Գեթսեմանի ձոր, ուր Աստուածածնայ Սուրբ Գերեզմանին վրայ պատարագեց եւ քարոզեց հիւրաբար Ս. Աթոռ գտնուող Անթիլիասի միաբան Հոգշ. Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Դանիէլեան:

Ուր. 28 Օգստ. - Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատրան մէջ։ Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպս.։

- Կէսօրէ Խոք, գլխաւորութԽամբ Ամbն. Ս-Պատրիարք Հօր, Միաթանութիւնը ինքնաշարժԽրով իջաւ ԳԵթսեմանիի ձորը ու "Հրաշափառ"ով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու վերափոխման մեծահանդէս նախատօնակը։

- Իրիկնադէմին, նոյն Տաճարին մէջ պաշտուած "Եկեսցէ"ի եւ <u>Հսկման</u> կարգերուն ^{նա}խագահեց Գերշ. Տ. Սեւան Եպս.։

կիր․ 30 Օգստ. – <u>Վերափոխումն Ս. Աստուա</u>ծածնի։ Առաւօտուն, դարձեալ Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաթանութիւնը ինքնաշարծերով իջաւ Գեթսեմանիի ձորը ու "Հրաշափառ"ով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ մայրութեան գաղափարին շուրջ քարոզեց Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան։ Գերշ. Սրբազանը նախագահեց նաեւ Ս. Պատարագէն ետք կատարուած "Անդաստան"ի արարողութեան։ – Կէսօրէ ետք եւս "Անդաստան" կատարուեցաւ, ինչպէս նաեւ, յետ ժամերգութեան, նախատօնակ՝ Մայր Տաճարին մէջ։ Հանդիսապետն

էր Լուսարարապետ Գերչ. Տ. Դաւիթ Արքեպս.։ Բշ. 31 Օգստ.- <u>Յիշատակ Մետելոց</u>։ Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ պատարագեց Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալճանեան, վարժիչ-ուսուցիչը նորընծայ Տ. Նարեկ Արեղային։ Հոգեհանգստեան կարգերուն նախագահեց Լուսարարապետ Գերչ. Տ. Դաւիթ Արքեպս.։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Ուր. 3 Յուլիս.- Կէսօրէ Խտք, վաղուան Միացծալ Նահանգաց Անկախութծան 21-րդ տարծդարձին առիթով, Ամծրիկծան Ընդհ. Հիւպատոսին կողմէ, Հիւպատոսարանի պարտէզին մէջ տրուած ընդունհլութծան նծրկայ ծղան Ամծն. Ս. Պատրիարք Հայրը, հետն ունհնալով Գերշ. Տ. Կիւրեղ Եւ Սեւան Սրբազանները, Աւագ թարգման Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեանը Եւ քարտուղար Գէորգ Հինդլեանը:

P2. 13 8ուլիս... Կեսօրե Խոք, 13րդ Քնեսեթի բացման հանդիսութծան նծրկայ ծղաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, հետն ունենալով Գաւազանակիր Հոգ2. Տ. Կոմիտաս Վրդ. Շերպեթճեան։

Գշ. 14 Յուլիս.- Երեկոյեան, Ֆրանսական Յեղափոխութեան 203րդ տարեդարձին առթիւ, Ֆրանսական Ընդհ. Հիւպատոսին կողմէ, Հիւպատոսարանի պարտէզին մէջ սարքուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ընկերակցութեամբ Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեանի, Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօդոսեանի եւ Գէորգ Հինդլեանի։

Գշ. 21 Յուլիս.- Երեկոյեան, Պէլճիքայի ազգային տօնին առթիւ, Պէլճիքական ընդհ. Հիւպատոսին կողմէ, Հիւպատոսարանի պարտէզին մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Գերշ. Տ. Սեւան Եպս., Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. եւ Գ. Հինդլեան։

հիր. 26 Յուլիս.- Հոգշ. Տ. Անուշաւան Ծ. Արդ. Զղջանհան այլ յարանուանութհանց հոգհւորականներու խումբի մը հետ մեկնեցաւ Ձիբ-ծնծաց լծռ, ծրծք օրծր առաջ կառուցման մէջ ծղող Յունաց Եկեղծցւոյ փլուզումին առթիւ Յունաց Պատրիարքարանի կողմէ կազմակծրպուած պաշտամունքին մասնակցեղու համար։

Եշ. 13 Օգստ.- Կէսօրէ Խտք, Յոյն-Կաթոլիկներու Եկեղեցւոյ մէջ կատարուած Ասորի Կաթոլիկ Համայնքի Մուխթար Ճօրճ Սաֆարի յուղարկաւորութեան ներկայ եղան Լուսարարապետ Գերշ. Տ. Գաւիթ Արքեպս., Գերշ. Տ. Գուսան Վրդ.:

Դշ. 19 Օգստ.- Կեսօրէ Խտք, Նօթր Տամի Եկեղեցւոյ մէջ, Երուսաղէմի Քաղաքապետարանի երկարամեայ պաշտօնեայ եւ Լատին համայնքի երեւելի անդամներէն Անթօն Սաֆիէի յուղարկաւորութեաններկայեղաւ Հոգշ.Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան։

Կիր. 30 Օգստ.- Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ներկայ եղաւ երեկոյեան Հ. Մ. Ը. Մ.ի ակումբին մեջ կազմակերպուած տեղւոյս Հ. Օ. Միութեան մասնաճիւղի Հիմնադրութեան 60 ամեակի հանդիսութեան եւ ըրաւ փակման խօսքը:

ՍԻՈՆ

Ս. ԱԹՈՌՈՅՍ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ ԾՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ Է ՀԵՏԵՒԵԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. ደԱՊԵԼ ԵՍԱՅԱՆ ՓՌՔՐ ԿՏԱՎԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սվետլանա Ս. Գրիգորյան։ Ուսումնական Ձեռնարկ Երեւան, 1990 էջ 107 2. ԹԵԼԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

2. Հ., Ալեքսանեան, Ա. Ա. Մարության, Հ. Ն. Նազարեթյան եւ Ա. Մ. Պողոսյան։ Երեւան, «Լույս» 1991 էջ 304

3. ՀՐԱԾՔ ԵՐԿԻՐ ԻՄ ՂԱՐԱԲԱՂ

Հրաչյա Բեգլարյան։ Բանաստեղծություններ։ Երեւան, «Նաիրի» 1990 էջ 145 4. ህԱՄՆԱՅ ԱՐԾԻՎԸ

Սողոմոն Մկրտչեան։ Երեւան, «Նաիրի» 1991 էջ 164

Պարույր Սեւակ։ Երեւան, «Անահիտ» Հրատարակչութիւն, 1991 էջ 224 6. bopus

Նորայր Ադալյան։ Վեպ, պատմվածքներ։ Երեւան, «Արեւիկ» 1990 էջ 405 7. ԵՐԻՑՍ ԽԱՉՈՒԱԾԸ

Ծահեն Թաթիկյան։ Երեւան, «Լույս» 1988 էջ 363

8. ԱՐՄԱՏԵԱՆ ԾԱՌԵՐ

Լիպարիտ Սարգսյան։ Վիպակներ Պատմվածքներ։ Երեւան, «Արեւիկ» 1991 էջ 350 9. ՇԻՐԱԶ

Խիկար Բարսեղյան։ Հուշ նովելներ, թանկագին մասունքներ։ Երեւան, «Արեւիկ» 1990 to 255

10. ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑ

Հովսեփ Հ. Արեվիկյան։ (Կյանքի ու Ստեղծագործության Ուրվագիծ)։ Երեւան, Հայկ. ԽՍՀ. «Գիտեյիք» Ընկերություն, 1989 էջ 34

11. ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (1828-1920)

Սմբատ Դ. Ավագեան։ Երեւան, Երեւանի Համալսարանի Հրտրկչթն. 1989 էջ 286 12. ԽԻԿԱՐ ԻՄԱՍՏՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՋԱՆՈՆ

Հրանտ Ադասայան (Ռուսերենից Թարգմանեց)։ Երեւան, «Հայաստան» 1990 էջ 478

13. ՆՇԽԱՐՆԵՐ ԱՐՑԱԽԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ

Լեւոն Հարությունյան (ժողովեց, կազմեց եւ ծանոթագրեց)։ Երեւան, Երեւանի Համալսարանի Հրտրկչթն. 1991 էջ 398

14. ԱՐԵՎՄՏԱՀԱՑԵՐԷՆԻ ԲԱՌԱՐԱՆ

Արտեմ Սարգսյան։ Երեւան, «Արեւիկ» 1991 էջ 319

(Շարունակելի)

ՍԱՀԱԿ ԳԱԼԱՑՃԵԱՆ

Քարտուղար կիւլպէնկեան Մատենադարանի



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՑԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

BISHOP KHAIAG BARSAMIAN, PRIMATE

Unugunpauputhu U. Lupaut Apumnete un h afunne Apet Step Snakenp Suppose եւ եկեղեցւոյ պաշտօնեաներուն՝ կը յայտարարէ որ այժմ մատչելի են Հետեւեպ սպառած ծիսական եւ կրջնական գրջերու նոր Հրատարակու թիւնները.

«QUBLFUL TUPU4UL»

Abnumment Shir Concounts of 1914 Sociality 9. mymapor States: Այս դեղատիպ մեծադիր երկսիւնակ հրատարակութերւնը անհրաժեշտ է ունենալ hepmentishep blandegens 352: # hr \$100.00

«UU2508»

Ивраницикаррый вранициярар 1961 Вастрайр 2. тараракарый: Lus bybytyens showpowshi wewingwhow piwapp spowerpular first & www. or he unpowonch shp bybaphibparis sty: 4/12 \$25.00

«ULLA CUFUP»

LE numune fles Unp Largerst queunhas 1895 Farmlush Spummpular Blows: Use puston & np step sayten puluisterp, unplusing the ne gup mutantiter ophing In neutroni win Summpto, nonch Ity hungane gununenneut the Usung suppor parte արարողու / իւններն ու չարականները։

4/12° \$20.00

261-48 «JUU4-1-1-4»

Lanumune fier boncownys & 1915 Forendurch Strong Sudwappeto, apres off Angio monend the show my power Su planting for the 4/12 \$15.00

ԱՌՁԵՌՆ «ՇԱՐԱԿԱՆ»

Lapunnun Ffich 1936 Freuhust boneungtsth Spunnupular Hows: 4/12 \$20.00

«JUUUAPPCE USEUP»

Atommune Plan 1915 Premiunit Concumpted by Stownpher Sommunution Plant, nº 40 unduring with South Umgernumpuring he Soungage

4/12 \$60.00, 1m Hulung

\$50.00, pg aulungs

630 SECOND AVENUE, NEW YORK, NY 10016 4885 TELEPHONE 212.686.0710 FAX 212.779.3558 digitised by A.R.A.R.

ՍԻՈՆ

COMMENTARY ON THE DIVINE LITURGY BY XOSROV ANJEWAC'I «ԽՈՍՐՈՎՈՒ ԱՆՁԵՒԱՑԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ» translated with an introduction by S. Peter Cowe գրաբար բնագիր եւ անգլերէն թարգմանութիւն Խոսրով Անձեւացեաց Եպիսկոպոսի գասական մեկնութեան։

4/12° \$17.50

«ԾԻՍԱԳԻՏՈՒԹԻԻՆ»

Հեղինակ՝ Նորայր Արջեպս. Պողարեան Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ դործածական ծիսական դրջերու բովանդակունեան մասին կուռ ուսումնասիրունիւն մըն է ներկայ Հրատարակունիւնը։ դին՝ \$15.00

> «ΒԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՌԱԿՆԵՐԸ» Հեղինակ՝ Բաբդէն Ա. ՔՀնյ. Մադսուտեան ՀոդեչաՀ ջարոզներ։ դին՝ \$12.00

Unjb Sprummunular Fleibblerg lumphile & unumurul applied for the stand of the stand for the standard fo

ՍԻՈՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ቀበኮԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ		
Վեհ. Հայրապետի Խօսքը Երեւանի		
<u>Lbnntumugnjghg</u>		190-193
ԿՐՕՆԱԿԱՆ		
Պայծառակերպող Տեսիլք	Թ.Ա.Մ.	194-197
Արարչագործական Պարգեւ		197-200
"Ոչ Եկի Լուծանել Զօրէնս"		201-202
Եւ Մինչ Լեռից Իջնում էին	Արմէն Աթաջանհան	203-205
Are You Aware?	Rosemary Aprizian	205
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ		
Լորտ Պայրընի "Հարոլտի Որդւոյն		
Պանդխտութիւնը"	Թրգմ. Մ. Մանուկեան	206
Չար Մարդու Լեզուն	Աշոտ Գրաշի	207
Խաղաղութիւն Ամենեցուն	Անել	208
Տեսիլք-Ներկան	Ծէն-Մահ	209
ՊԱՏՄԱԿԱՆ		
"Միութենական Ծարժում" Ներսէս Ծնորհալի	Էրնատ Սուտտներ	010.010
0	Թրգմ. Արէլ Արեղայ	210-218 218-219
Օրագրութիւն	Մեսրոպ Վրդ. Նշանեան	210-219
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ		
Նարեկացին եւ իր Ժամանակը	Արշալոյս Ղազինեան	220-224
Մեծացուսցէ ԲԿ. Ըզքեզ Աստուածածին		224
Մեծացուսցէ ԳՁ. Աստուածածին		004
Երկնային Դուռն		224
ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ		a de
Առաքելութիւն ի Հայաստան	Յովնան Եպս. Տէրտէրեան	1 225-22/
Մենք Գնացինք Երկիր	Լեւոն Միրիջանեան	228-237
ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ		
Հայ Արդիական Կրօնաւորը	Ծահան Ռ. Պէրպէրեան	238-243
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ		
"Ձայնքաղ Ծարական"	0 0 0 0 0	244-246
Ծարական ԴՁ. Նոր Սիոն ծընհալ մանկունք	Գր․ Ոսկանbան	246
<u> </u>		
- byhzt Mumphung Structure		247
ouquuutunn		
- Սրթանկարներու Ցուցահանդէս	Անուշաւան Ծ. Վրդ.	- 019
digitised by A.R.A.R.@	Զղջանեան	247-248
	HARD THE REAL PROPERTY AND ADDRESS OF THE REAL PROPERTY ADDRES	-


1992 Յուլիս - Օգոստոս ՍԻՈՆ		265
- 80ամեայ Դեղագործ Նուպար Արսէնեան - _{Պատրիարք} Սրբազանի ղրկած հեռագիրը եւ ստացած պատասխանը Յորդանանի		248- 249
վիհ. Թագաւորի բժշկական գործողութեան առիթով - Աւստրալիոյ Թեմէն		249 250-251
- Պատրիարք Սրբազան Հօր նամակը Միաբանակից Եղբայրներուն, Ժընէվի Դրամատան Հաշիւներու մասին - ԱՆԵԼ բանաստեղծի 50ամեայ յոբելեան		251 252
- ^{Պոլսոյ} "Ժամանակ" եւ "Մարմարա" թերթերը կը հաղորդեն - Տ. Նարեկ Աբղ. Պէրպէրեանի Ձեռնադրութիւն		253
Նիւ Եօրքի մէջ Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ – Եկեղեցականք–Բեմականք	Գրիգոր Ոսկանեա	u 254-255
- Պաշտօնականք 8ԱՆԿ՝ Կիւլպէնկեան Մատենադարանի կողմէ ստացուած գրքերու	Սահակ Գալայճեան	258-260
գողով ստացուած գրքերու - Նոր Հրատարակութիւնք Ս. Վարդան Գրատան, Նիւ Եօրք	owned refejence	262-263




Դեղ Տէր եւ Տիկ եւ Սոնա Ս Պատրիար։ ործ Նուպար 8. Արսէնեանի 80 ամեակի տարեդարձ, 2 Օգոստոս 1992, հրաւէրով Նուպար եւ Սիրարփի Արսէնեանի երեք դուստրերուն եւ փեսաներուն, Տքթ. Եդուարդ ոմեան, Ճօրճ եւ Նորա Քարմի, Ժագ եւ Արտա էքմէքնեան, հովանաւորութեամբ Ամենյրբազան Հօր։




Արուեստագետ Արտաւազդ Պերպերեան Ամեն. Պատրիարք Սրթազանին եւ Միաթանութեան թացատրութիւն կու տայ նորոգուած նկարներու մասին։



1. Քրիստոսի Համբարձումը






3. Musta dup www.ufn.dp



4. Խաչէն վար պատանքումի Երկրորդ նկար digitised by A.R.A.R.@





Անել բանաստեղծ-գրագէտի 50ամեայ Յորելեանին յայտագրին (22 Օգոստոս 1992) մասնակցողներ.-

Ա. Ծարք, ձախէն աջ.- Յակոր Անդրէասbան, Գուսան Վրդ. Ալճանbան, Փոքրիկն Թորգո^{մ,} Պատրիարք Սրրազան, Անել (Տքթ. Կարօ Յ. Կարապետեան), Փոքրիկն Կարօ, Տքթ. Վիգէն Կարապետեան։

Բ. Շարք, ձախէն աջ.- Տիկ. Նորա Նագգաշծան, Օր. Գարինէ Գաթլանծան, Տիկ. Ալին ^գալ^{իան,} Օր. Ջեփիւռ Պօյաճիան։





Հանգ. Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի գերեզմանին վրայ զետեղուած տապանաքարը

